Յաջորդ ժողովի մը ընթացքին ալ կատարուեցաւ վարչութեան ընտրութիւնը, յանձինս Հայրենակիցներ՝ Համբարձում Բէշէնեանի, Յովհաննէս Պալանեանի, Փանոս Ծիրտեանի, Սահակ Պողչէճեանի, Աւետիք Խօրէճեանի, Մկրտիչ Պէլլօրեանի, Նազարէթ Տրդատեանի, Ս. Պէշէնեանի, Յովհաննէս Մանկեանի, Բարսեղ Խօրէճեանի և Ղևոնդ Տուտուշեանի: Դիւանը կազմուեցաւ ի վերջոյ, Լ. Բէշէնեան՝ Առնեպղտ և Փանոս Ծիրտեան՝ Առնեպղտներ:

Այս առթիւ պէտք է յիշել նաև, որ այդ օրերուն Պ. Արէշ գոնուսը հաճընիները, ընդհանրապէս, հալիւ իրենց տարրական սուսուր լրացուցած, 20-30 տարեկան անխորճ երիտասարդներ էին: Աւտար, վարչական ընտրութիւններուն համար առաւելաբար նիտար կ'անունէին աւելի տարբերաները, իրբեւ յարգանք:

Համրն Ընկերութեան գործունէութիւնը

Միութիւնը, իր հիմնադրութիւնէն մինչև 1918ի վերջերը, ընդհանրապէս դրաղեցաւ ներքին - կազմակերպչական խնդիրներով և իր հիմնական նպատակը եղող՝ կարտանշներուն համար րատեղծուած դրամական ֆոնտը զօրացնելու հարցով: 1918ին վճարականօրէն ուժ տուաւ արտասահմանի մէջ սկսած կամաւորական շարժումին: 1921ին Հաճընի զոյժարտէն վերադրողներուն օգնելու նպատակով Ատանա աւաթեց 24 հազար Ֆրանք, ինչպէս նաև վճանց համարու ծախար՝ հոս փոխադրուիլ փախարղ քանի մը Հայրենակիցներուն: 1922ին, երբ կրկին ծայր տուաւ գաղթականական հոսանքը զէպի Արժանիքին, Վարչութեան կողմէն կազմուեցաւ նաև յատուկ յանձնախումբ մը՝ կարիքի եղած օժանդակութիւնը տալու համար նորից Հայրենակիցներուն, յանձինս՝ Պետրոս Գալայեանի Աւտարի Խօրէճեանի, Աւազ կարիկեանի և Մտեկան Բրթնիսեանի: Այդ յանձնախումբին մասնաշաղկապ շարժում ծառայութիւններէն մին կրու, որ Ս. Բրթնիսեանի սեփական կատարով ան

չարաթը քանի մը անգամ մեծաբանակ ուսեստեղէն կը տանէր հայ կեկեցեցին ու հոն կը բամէր կարտեաներուն միջեւ:

Հաւաքական կեանքի նոր շրջանը

1924 - 25էն ետք «հին» հաճըցիները սկսան իրենց ընտանիքները բերել տալ արտասահմանէն, ամուսնանալ, բազմանալ: Եւ, միացնելով իրենց ջանքերը նորեկ Հայրենակիցներուն ներմուծած հասնողին և ուժերուն՝ սկսիլ հուսարական կեանքի նոր ու բեղմնաւոր շրջան մը, որ իր յարատեւ զարգացումովն այսօր եկած համագած է մեր աշխուս փառասօր «Համնոյ Հայրենակցական Միութեան» օգտաշատ կազմակերպութեան, որուն շուրջ համախորհուած են Էնեք սերունդի պատկանող հարիւրաւոր հայրենակիցներ՝ խաղաղ և համեմալի միջնորոտի մէջ:



Մկրտիչ Պելլոբեան



Մտեփան Շիրամեան

ՆՈՆՕԹ--

Անցեալի այս եղևութիւնները կարելի եղածին չափ հարապատ և խոստացում կերպով ներկայացնելու ցանկութեամբ՝ մտաշուտարարէն նկատի առած եմ նաև բնչարձակ յուշագրութիւնները Պրն. Մկրտիչ Պելլոբեանի և այլ օրերու բոլոր անցուղարձեւ-

րուն մանրամասն օրագրութիւնները ամենայ Պրն. Փանոս Շիրամեանի (Այժմ՝ Ստեփան Շիրամեան) երեք յուշերն ալ կը հաստատեն մեզ հետաքրքրող պատմական զեպքերը՝ շատ քիչ տարբերութիւններով միայն: Օրինակ՝ Պրն. Փ. Շիրամեանը Միութեան կազմութեան կազակցութեամբ կու տայ հետեւեալ անդեկութիւնները:

«Օգոստոս 25ին քովս եկու Յովհաննէս Մանկերանը: Ան Հիւս. Ամերիկա դանտոյ իր եղբայրը Տիգրանէն ստացած էր նամակ մը, որուն մէջ ներփակուած էր Հաճընէն եկած նամակի մը պատճէնը հետեւեալ պարունակութեամբ.-- Մինչև Մայիս ամսուն վերջը կառավարութիւնը բռնի, ծեծով և ասնջանքերով հազար ընտանիքէ աւելի տեղահան արու և դու կը շարունակեն վայրագութիւնները: Ճամբան, վաճկախ ձորին մէջ սպաննեցին կէշիմեան Ղազար աղան և շատ ուրիշներ: 21էն մինչև 35 տարեկան մարդոց բռնի կը զինուորադրեն: Գաղթականները Հալէպէն զէպէ Արարական անապատները կը քշեն--

«Այս նամակը շատ ծանր ազդեց: Արջեցինք այդ մասին խօսիլ նաև ուրիշ հայրենակիցներու հետ: Խումբ մը հայրենակիցներ ժողով մը կազմակերպեցինք և արջեցինք Պ. Ալբէս դանտոյ բոլոր հաճըցիներուն ձևազիր նամակ - շրջարեքական մը գրելի ու հրատարակելի ժողովի՝ օգնութեան ընկերութիւն մը կազմելու: Այդ շրջարեքականը խմբագրեցինք հետեւալ բովանդակութեամբ--

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԻ

«Մերելի Հաճըցի Հայրենակիցներ,

«Գարեթ է վեր անհաստ թուրքը հայ ազգին պատուին հետ կը խողայ և անոր կը պատճառէ դանապան ցաւեր ու ասնջանքներ: Հայուն արխնով շարեցեցած, այս նոր պատերազմի միջոցաւ թուրքերը իրենց յատուկ գործը վայրենաբար կը կատարեն: Տաճկաստանէն և Հիւս. Ամերիկայէն ստացուած նամակները կը նկարագրեն եղած վայրագութեանց անուիրութիւնը, մեզի ծայր տատնան ցաւի և սուգի մէջ թողնելով: Ամէն հայու համար ցաւը նոյնն է, բայց աւելի ցաւալի է մեզի համար որ Հաճըն մէջ գազան թուր-

գերան զօժ կ'երթան մեր ձայրերն ու մայրերը, քոյրերն ու եղբայրները և շնն խնայի Նոյնիսկ մանուկները:

«Վնչպէս յալանի է անկի Տոսմանաններու հօր, կէտիկիւ շիւքեան Յակոբի և Մանկրանի նամակերէն, Հաճընի միճակը շատ ուրախ է, որ անկարելի է նկարագրել:

Ստորագրուներս կը փոփաքինք հրաւիրել թուր հաճընցիները կազմելու հայրենակցական միութիւն մը՝ մեր պարագաներուն օչնութեան հասնելու համար:

«Արդ, հաճեցէք ներկայ դանուիլ այն ժողովին, որ պիտի դամարուի ամսոյ 29ին, կէսօրէ ետք ժամը մէկին, միտին խորհելու մեր անաէր ու անպաշտան հայրենակիցներուն օչնութեան միջոցներու մասին: Որով կը յայտնենք, թէ ամէնքս ալ որպէս պատուելի պարտականութիւն յանձն կ'անենք աշխատիլ ու օգնել ամէն միջոցներով:

«Այս ծանօթագիրը կ'ուղարկուի Պ. Այրէս դանուող թուր հաճընցիներուն այն յոյսով, որ ամէնքն ալ ներկայ պիտի ըլլան վերոյիշեալ ժողովին և որոշուած ժամուն: Անոնք որոնք աշխատանքի պատճառով չեն կրնար դալ այդ ժամուն, թող զան աւելի ուշ, ժամը 19էն մինչև 24: Հասցէն՝ Գաթամարքա 1460: Սոյն կոչը կը ստորագրենք՝

Կուրգէս Պէլլօրեան, Նազարէք Տրգատեան,
Մկրտիչ Պէլլօրեան, Միսաէ Գննիլեան,
Փանոս Կ. Շիրամեան, Մարտիրոս Մզմզեան,
Եղիաճապա Մակիլլեան, Աւետիք Էօրէնեան,
Թաղէս Զիլիկիլեան, Աւագ Կոսիկեան:

Նշանակուած օրը դամարուեցաւ ժողովը, որուն մասնակցելու համար հետևոր Լա Փլաթա քաղաքէն եկած էր Մանուկ Մաւթեանը: Ներկաներուն թիւը 49 էր: Միամայնութեամբ կազմուեցաւ միութիւնը: Որպէսզի յաւերժանայ մեր սիրելի ծննդավայրին անունը՝ նորակազմ մարմինը որոշուեցաւ կոչել Համբն Ընկերութիւն: Մուտքէն և նուիրատուութիւններէն անմիջապէս զոյացաւ հազար հարիւր տար փեսո: Ընկերութեան հիմնադրութեան որպէս թուականը ընդունուեցաւ 1915 Օգոստոս 25ը: Վարչութեան ընտրութեան համար 33 հօդի ձեռնդրած մնացին, իսկ 36 հօդի խանդավառ մասնակցեցան: Վարչութիւնը ընտրուեցաւ հետևեալ կազմով.

27	քուէ,	Փանոս Կ. Շիրամեան	-	Ասենուպեա
21	քուէ,	Մանուկ Մաւթեան	-	Փոյթ Ասենուպեա
20	քուէ,	Յովհաննէս Պալանեան	-	Ասենուպեա
20	քուէ,	Յովհաննէս Մանկրեան	-	Փանձապահ
20	քուէ,	Լևոն Շիրամեան	-	խորհրդական
13	քուէ,	Համարձուի Բէչիճեան	»	
11	քուէ,	Ղևանդ Տուտուշեան	»	
10	քուէ,	Նազարէթ Տրգատեան	»	
9	քուէ,	Սահակ Պաղչէճեան	»	
9	քուէ,	Աւետիք Էօրէնեան	»	
9	քուէ,	Բարսեղ Էօրէնեան	»	

Պրն. Մկրտիչ Պէլլօրեան կը լիչէ նաև, որ «Թէև Ասենուպեա ընտրուեցաւ Պրն. Փանոս Շիրամեանը, բայց յաջող ժողովին իր յօժար կամօքով Ասենուպեաութիւնը յանձնեց Պրն. Համարձուի Բէչիճեանին, յարկելով անոր տարիքն ու կարողութիւնը: Պրն. Հ. Բէչիճեանը շատ տարիներ եղած էր երևելի ուսուցիչ Հաճնոյ մէջ ուսանած էր Երուսաղէմի պարսկալեզու և մասնակցած՝ Չէլլօրնի պատերազմին: Ան անփոփոխ շարունակեց որպէս Ասենուպեա «Հաճըն Ընկերութեան» մինչև իր մահը:

Համադրեց ՆԱԶԱՐԷԹ ՆԻՐԷՆԵԱՆ



Պ. ԱՅՐԷՍԻ ՀԱՃՆՈՅ Հ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԸ

Գրեց՝ Դ. ԿՈՒՃՆՈՒՆԻ

Սփիւռքահայ կեանքին ցաւոտ իրողութիւնը յատկանշող երեսոյթներէն մին է, անտարակոյ՝ անոր ծոցէն ծրնունդ աննող հասարակական կազմակերպութիւններէն շատերուն վաղանցուկ գոյութիւնը: Գաղթօճախներու մէջ յաճախ մեծ յոյսերով եւ խանդավառութեամբ կեանքի կոչուող այլազան միութիւններէն շատ քիչեր միայն կրնան ցուցադրել այսօր իրենց կանոնաւոր բնթացքին եւ մանաւանդ, մտաուցած ծառայութիւններուն համոզիչ փաստը: Բազմաեանակ են անշուշտ այս գոյութիւն իրողութեան պատճառները, որոնց գլխաւորները կարելի է նկատել, առաջին հերթին, գաղթաշարժի աննպաստ պայմաններուն տակ հայկական դիմադրութիւնը անազարտ պահել - պահպանելու գոյատուրութիւնները, շրջապատող օտարադէպ շարքերուն սոսկալի ճնշումը եւ տեղ տեղ ալ արդէն նմարտող աշխատանքի հիւսիսաբար, որոնք ընդհանրապէս կը տկարացնեն հետզհետէ արտասահմանի հայութեան հաւաքական կեանքին նեցուկ կենալու կոչուած այդ խրմուրորմները:

Բարեբախտաբար սակայն, տակաւին պատկառելի թիւ մը կը կազմեն Սփիւռքի մէջ զեռ իրենց կենսունակութիւնը պահող այն կազմակերպութիւնները, որոնք կ'ընթանան հանրօգուտ գծով, խկապէս ժողովուրդին սրտին խօսող յատկ դադափարակտի մը ի խնդիր, որուն ճնորհիւ կրցած են իրենց շուրջը համախմբել առաւար մաս մը գոյութիւն ունեցող պիտանի ուժերէն եւ բարի տրամադրութիւններէն, որոնցմով յաճողած են մինչեւ հիմայ գիմանալ օտարութեան ստեղծած աննպեղի գոյատուրութիւններուն եւ միեւնոյն ատեն կատարել իրենց օգտակար առաքելութիւնը:

Ահա՛, այս մինչեւ հիմայ իր անսասան դնացքը շարու-

նակող երախտաւոր հաստատութիւններէն մին է, գոտահարար, Պ. Այրէսի Հաննոյ Հայրենակցական Միութիւնը, որ արդէն թեւեւ իր քիչ թեղմանաւոր կեանքին վաթսուանամեակը, ճշմարիտ հայրենասիրական գործի մեծ վաստակով մը:

Այս բացմամեայ կազմակերպութիւնը, որ կը նկատուի արցարեն Սփիւռքահայ սիպօր հաստատութիւններէն մին՝ գաղթաշարժի, (եւ կէ ալ Մայր Հայրենիքի կողմէ), ոչ միայն բացառիկ եռանդով առաջ կը մղէ Պ. Այրէսի հոծ հաճրեցիներուն հաւաքական գոյապայքարը ի նպաստ հայազգայնաման՝ իր սեփական բազմալարեանի ակումբովը, ժրջան Տիկնանց եւ Երիտասարդաց Օժանդակ Մարմիններովը, միութեանակն - ընկերային եւուն գործունէութեամբ, այլ նաեւ եղակի պարտասահմանութեամբ իր ծոցին մէջ կը պահէ համա - հաճրեցիական ընդհանուր գործերը ձեռնհասութեամբ առաջնորդող կեղքունական Վարչութիւնը եւ անոր պաշտօնական օրկան «Նոր Հաճր» ամսաթերթը:

Գիւրիւն չէ կզած անշուշտ այս նախանձելի բարձունքին նուաճումը: Անհաշիւ գործողութիւններու, տքնաճան աշխատանքի, ամուր հաստքի ու կամքի համադրութիւն մըն է խկապէս այս Միութեան յիտներեօթը արքիններուն պատմութիւնը, որուն մէկէլ տելի էջերը մաս կը կազմեն յովանդակ Արմանթիւնահայ գաղութի յուշամատենին:

Այս սովիւ, երբ կը փորձեմ արող տկնարկ մը նետել անոր ծագումն ու հետագայ զարգացման դանազան հանդրուանները պատկերացնող արձանագրութիւններուն մրան տմէն բանէ առաջ կը ծառանայ դիմացս իր յովանդակ էութեամբ ինքը՝ հանրեցիկ, կրքոտ հայրենասիրութեամբ տողորուն, զոհարերութեան բացառիկ ոգիով օժտուած, իր պատկերական աւանդութիւններովը գիմուած առաքինի Հայր, որ կը ձգտի ու ձգնի ամէն գնով հաստարթ մնալու իր փոտաւոր սնցեակին եւ բիւրաւոր նահատակներուն սուրբ յիշատակին: Յետոյ կը սկսի լուս տողանցքը սիրելի զէմբերու, պատմական զէպքերու, անժողանայի անուններու, անհաստայի ճիւղերու...:

Տանջալի երկունքով ծնունդ առած է այս միութիւնը,

Մեծ Եղեռնի սարսաղիցու գոյժովը գալարուց պանդուխտ հաճրնցիներու միջև՝ 1915 Օգոստոս 25ին, եւ այլ վրէ-
տարեկ «Վարիք»ներու տասա արցունքովը մկրտուած Հա-
նրն Ընկերութիւն: Հիմնադիրներուն միակ, անմիջական
մտահոյութիւնն է եղած «-Ուելէ ձեւով օգնութիւն մը
հարցնել» համատարած բնապայթէն ու ջարդերէն «հա-
ւանարար ողջ մնացած սիրելիներուն»: Այդ խումբին կա-
տարած գործին սրտատուչ պատմութիւնը, որ զասէն կը
տրուի արդէն գերակատարներուն միջոցաւ, կ'ընդգրկէ
պատմական շատ կարեւոր իրադարձութեանց շրջան մը,
ինչպիսին են՝ Մեծ Եղեռնը, գիտապատրին յաջորդող
խարստիկ խանդավառութեանց տարիները, Հաճրնի Գո-
յամարար, Կիլիկիոյ պարպումը, երկրորդ պայթականու-
թիւնը, եւ այլն:

Բոլոր այդ տխուր դէպքերու օրերուն, «Հաճրն Ընկե-
րութիւն»ը իսկապէս կատարած է նախախնամական զեբ
մը, իր հարաւորութեան ներած չափով օժանդակութիւն
փութացնելով ուր որ պէտք է, ուղեցոյց եւ բարոյական
նեցուկ հանդիսանալով Արժանիքին հասնող նորեկներուն
եւ ջանալով որ հայրենակիցիները համախումբ մնան:

Սկզբնական այդ դժուարին տարիներուն կատարուած
շատ երախտաւոր գործին մէջ իրենց կարեւոր բաժինը ու-
նեցան, անխաբ, միութեան հիմնադիրները եղող բոլոր
հայրենակիցիներն ալ, սակայն մասնաւոր լստով դուր կու
դան այդ խումբին՝ Պ.Պ. Համարձեռմ Բէշէճեանը, Ստե-
փան Երբամեանը, Սահակ Պաղէճեանը, Յովհաննէս Պա-
լանեանը, Յովսէփ Գրբղնաշարեանը, Աւետիք, Բարսեղ
եւ Աւստիկ Էօրէճեան եղբայրներ, Մկրտիչ Պէլլօրեանը
Ստեփան Բրթրֆեանը, Յովակիմ Ալոսեանը, Մեղքոն պա-
րպանեանը, Պետրոս Գալսյճեանը, Սոճաւաղեանը, եւն-

Բնանական թուականներէն սկսեալ ծայր կու տայ
գաղթականական նոր հոտանքը դէպի Արժանիքին:
Հեազհեալ Պ. Այրէս ժամանող մեծ թիւով հաճրնցիներուն
մուտքը «Ընկերութեան» շրջանակին մէջ, անոր կու տայ
կազմակերպական նոր աշխուժութիւն եւ ձեւաւորում,
թարմ ուժեր, աշխատանքի նոր գտտաւորումներ: 1924էն
ետք, Պ. Այրէսի հաճրնցիներուն հասարական կեանքը կը

զգե՛նու խելոյն եռուն երեւոյթ մը: Հարիւրաւոր երիտա-
սարդներ, մասամբ՝ հաճրնի ուղեակիցումէն մաղաղաւորն,
կը կազմէն Հաճրնի Երիտասարդաց Միութիւնը, որ ան-
միջապէս կը դասնայ հայրենակցական ու ազգային սեն-
չերուն արձագանգ տուող զօրաւոր խմբաւորում մը, որ զօ-
րալից կը հանդիսանայ «Հաճրն Ընկերութեան», որուն
վարչական գործերուն մէջ արդէն բաժին վերցուցած են
գաղթամիջև նորեկներ, օրինակ՝ Ազարիա Պապահէլեան,
Արբասամ Գրանեան, Վարդան Ծօրճեան, Գէորդ Գալսյ-
ճեան, Յարութիւն Պալապանեան, Աւետիս Գույումճեան
եւ ուրիշներ: Հաճրնցիական շրջանակին այս անընդհատ
ձօնացումին, մանաւանդ անոր զարգացող սրտէն մեծա-
պէս կ'օգտուի ո՛չ միայն հայրենակցական գործը, այլ
նաեւ ամբողջ Արժանիքին հայ գաղութի համայնքային
կեանքը, քանի որ շատ մը հաճրնցիներ կը սկսին պատա-
խանատու զէրբեր գրասէլ ժողովուրդին սպասած կրթա-
կան, բարեխրական, բազարական, մշակութային, եկե-
ղեցական եւ այլ բոլոր գործերուն մէջ:

1926 - 27ին կը սկսի նշմարելի դասնալ արդէն արտա-
սամանի, մանաւանդ Մերձ. Արեւելքի գաղթօճախներուն
վերձակին տատիճանարար բարեփոխումը: Մասնաւորապէս
օգնութեան կարօտ հաճրնցի բնանիքներուն հեազհեալ
նուազումը: Եստիկին այդ շատ մտահոյիչ երեւոյթին փո-
խարէն՝ ամենուրեք մեր հայրենակիցիներուն միջև եւ ար-
ագօրէն կը գորգանայ նոր տառապանք մը, թէ՛ ան-
հրաժեշտ է աւելի հաստաա գեանի մը վրայ ամբացնել
մեր վերաւոր մնացորդացին գոյապայքարին կուռանները:
Ուստի պէտք էր լրջօրէն ձեռք առնել այլուս, բոլորին
մասնակցութեամբ, նահատակ Հաճրն Մայր Հայրենիքի
նախրտկան հոյին վրայ վերականգնելու եւ մեր ցիբ ու
ցան եղած հայրենակիցիներ հան վերախմբելու ծրարիրը:
Այս գաղափարը տաւել թախով կ'արձագանգէ Արժան-
թիւնընտի մեր հայրենակիցիներուն սրտին մէջ: Արդ, խիստ
յոտականչական են այս ստթիւ, 1928 Սեպտեմբեր
Յին, Պ. Այրէսի հաճրնցիներուն գումարած անդամական
ժողովին որոշումները. ա- «Հաճրն Ընկերութիւն»ը վե-
րանուանել Հանրնի Հայրենակցական Վերաշինաց Միու-

րիւն, որպէս հիմնական նպատակ որդեգրելով Նոր Հաճարն քաղաքը Հայաստանի մէջ կառուցանելը: Բ.- Պաշտօնապէս ճանչնալ Հիւս. Ամերիկայի Լոս Անճելոսի շրջանին մէջ գործող Հ. Հ. Միութեան Վարչութիւնը իրրեւ Ընդհանուր Կեդրոնական Մարմին, որպէսզի կարելի ըլլայ ներդրանակել ու համագործել սահնորեք հաճարնակներուն նոյն նպատակին համար թափելիք ջանքերը: Գ.- Պ. Այլընտի Վարչութեան վերադասել Հարու. Ամերիկայի ալլ գաղութներէն ներս գործող - կամ կազմուելիք - Հ. Հ. Միութիւններով Երջանային կեդրոն ըլլալու իրաւասութիւնը: Եւ այս նպատակներուն գործադրութեանը համար կը ընարէ հետեւեալ վարչութիւնը, Ատենապետ՝ Ս. Պաղչէճեան, Ատենապետի Կ. Եօրճեան, Գանձապահ՝ Յ. Արտեան, Խորհրդականներ՝ Արք. Գրաճեան, Մ. Պէլլորեան, Ս. Երարմեան, Գեղորդ Փարլաճեան, Աեաիք Իօրճեան եւ Մ. Պարպոնեան:

Նորագում խնդրադատութեամբ աշխատանքի կը լծուի ամբողջ մեր համայնքը, թէ՛ սակաւին իրենց տնտեսական վիճակին մասնազուծիւնը կրող նորեկները եւ թէ՛ ալ հին օրերէ ի վեր գործող եւ զօժարեացի հայրենակիցները: Բոլորն ալ քաջ գիտակցելով իրենց ուսերուն վրայ առած պարտաւորութեան բազմառեսակ դժուարութիւններուն, բայց աւաւելարար գտասէլով՝ հաճարնակներուն վառ հայրենասիրութեանն ու սննդուն կամքին: Անընդհատ կը սարքեն հաստիարեք ձեռնարկներ, ամուսնորութիւններ, հանգանակութիւններ՝ զօրացնելու համար քառակողմաձ «Վերաշինութեան Գնմաք, ստանց աչքաթող ընելու, միւլենոյն ստեն, հաւանական կարօտեալներու օգնութեան գործը, Մարտչլի մէջ (Ֆրանսա) լոյս տեսնող «Հաճար» պարբերաթերթին եւ Հաճար ընդհանուր պատմութեան հրատարակութեանց ստաարելու իրենց պարտաւորութիւնը: Բացի այդ, հաճարնակ գրականօրէն կը մասնակցին չարունակ Արժանթինա՛յս գաղութի համայնքաշին կեանքին բարելաման անհրաժեշտ ծախսերուն:

Երեսունական թուականներուն Հայ Սփիւռքը կը ցնցուի սրտալույց նոր աւետիսով մը: Մայր Հայրենիքը հնչեցուցած էր Ազգաւսաւաքի գանգը եւ իր գրկին մէջ սկը-

սած էր ընդունիլ մտաակայ գաղթօժաններուն հայութիւնը, այժմ կը տարածէր իր հոգատար բազուկները մինչեւ արտասահմանի հեռուոր անկիւնները: Պ. Այլընտի Հաճարն Հ. Վ. Միութեան Վարչութիւնը խիղոյն ձեռք կ'ստենէ, հարաւի այս ափերը գտնուող հայրենակիցներուն բուն ցանկութեան ընդտապէ գալով, ներգաղթի աշխատանքը, թէ՛ հայրենակցական շրջանակէն ներս եւ թէ՛ ալ համագաղութային չափով ստաջ տարուող ջանքերուն մասնակցելով՝ իր յատկապէս լիազօրած անդամներուն միջոցաւ: Այս առթիւ կրչ կ'ուզէ նաեւ Հիւս. Ամերիկայի Կեդր. Վարչութեան, որպէսզի ան իր «կարելին չի խնայէ արտասահմանէն տաւելազոյն թիւով հաճարնակներու Մայր Հայրենիք փոխադրելու նուիրական գործին մէջ, որուն համար Պ. Այլընտի հանրակցիները պատրաստ են իրենց բաժին ինկող պարտակաւմուքիւնը կատարելու»: Եւ անմիջապէս խօսքէն գործի անցնելով, սոյն նպատակին իրազորման ի խնդիր՝ մասնաւոր դումարներ կը յատկացնէ Մերմ. Արեւելքէն ներգաղթի վափարդ կարօտեալ հայրենակիցներուն համար: Հաճարն ալք տարներուն տիրող համատարած տնտեսական գրիգին, հայրենասիրական արտակարգ ետանդով համակուած Հայրենակցական Միութիւնը կը գոյացնէ նաեւ 1000 տարի յաւելեալ գումար մը եւս ու զայն կը փութացնէ Հայաստան՝ Նուպարա՛էնի մէջ «Հաճարն Թաղ»ի մը հաստատման սկզբնական ծրարքին համար:

Բնական է թէ այս տեսլապին, յոյնական աշխատանքները գլխաւորապէ, գտաւարապէ, տաջ բող յաջորդական վարչութիւններն ու դանազան յանձնախումբերը չարունակ նորոգում են՝ գործելու բարի արժանազութիւնն ունեցող անդամներու մասնակցութեամբ: Տուեալ գործի մը կամ գոհուցութեան մը առջեւ՝ ոչ մէկ հայրենակից զրաջած է իր աջակցութիւնը: Ոմանք հազիւ կըցած են տարուող աշխատանքներուն մէջ բաժին վերցնել մէկ կամ երկու տարեջրջաններու ընթացքին՝ իրենց անձնական զրազումներուն, տարիքին կամ ստոջութեան հետեւանով: Իսկ շատեր՝ նախանձելի խնդրադատութեամբ յարակուած են իրենց վիճակուած պարտականութեան մէջ բազում տա-

րինքը: Այդ ժամանակներու վարչական աշխատանքներուն մէջ իրենց երախտուար գործունէութեամբը յայտնի են նաեւ Պ. Պ. Ալեքսան Ասիւանը, Ա. և Պ. Մախեանները, Ս. Սրվիլանեանը, Յակոբ Պալատանեանը, Սեդրակ Քամբլանը, Մ. Քաթուրեանը և զես շատ ուրիշներ, որոնց ամէնքին յիշատակումն բնկը թէ և արդար է, բայց իմ հարատւութեան սահմանէն դուրս է այս պահուն:

Պ. Ալբէտի համընդիութեան անխնայ թափած ջանքերը եղած են Հայրենասիրական մէկ հիմնական նպատակի շուրջ, այսինքն՝ հովմացրի եղած մնացորդացին ուժացումէ փրկութիւնը և հետագային անոր մէկակցումը իր Մայր Հայրենիքին մէջ, ու սա այդ կատարած ճիշդը միշտ ընդգրկած են անմիջակամօրէն պաշտպանելիք բազմաթիւ ճակատներ: Օրինակ՝ անդուշն թէ արատաստանի շքուորները, որբերը, սուսողները, հիւժարտուար - հիւանդները, ներգաղթողները, Հաճըն բազարին կառուցումը, և այլն, և այլն: Գնահատելին այն է, որ այդ բոլոր ճակատներուն մէջ ան երբեք նահանջ չէ արձանագարած, մատուցելու, տկարութիւն ցոյց չէ տուած: Ընդհակառակը երբ ուրիշներ հարկադրուած են, անդիմանայի դժուարութիւններու ստիպելու, պիտանի դիրք մը չբեղ, Պ. Ալբէտի մեր հայրենակիցները խնայն վերցուցած են ինկած պոչակը և առաջ անցած: Նման պարագայ մըն է, ի մէջ այլ յոյ, «Հաճըն» սարքերականները:

Անհարթելի դժուարութիւններու հետեւանքով կարելի չէր եղած պահել անոր գոյութիւնը ո՛չ Մարտէլլի մէջ (Փրանսա) և ո՛չ ալ հետագային Լոս Անճըլոսի (ԱՄՆ): Ահա կեանքի կը կոչուի Պ. Ալբէտի մէջ «Նոր Հաճըն»ը, գլխաւորութեամբ՝ Պ. Ազարիա Պապահէգեանի, խորհրդաւորութեամբ Հարցանի (Արամ Տումանեան) և օժանդակութեամբ խումբ մը հայրենակիցներու, իսկ 1936էն ետք՝ ուղղակի Հայրենակցական Միութեան հովանաւորութեան սակ:

Շատ յարերաստիկ իրադարձութիւն մը տեղի կ'ունենայ նաև 1940ին, վերջնական միաւորումով մինչ այդ անջատարար գործող զոյգ մարմիններուն: Այդ տարուան Ապրիլ 14ին դումարուած ընդհ. անդամական ժողովը,



Չախէն ազ. - Գեորգ Կիպրեան, Գեորգ Գալպեան, Բարսեղ Խորէնեան Սարգիս Գաբելեան, Յարութիւն Պալպապեան, նստած - Միսակ Փննիկեան, Սառակ Պազէնեան և Աւետիս Գոյումեան:

բոլոր պիտանի գործունէրուն և ուժերուն մասնակցութեամբը անխորք, կը սրբեղբէ հետեւեալ բանաձեւը: «Զոյգ Միութեանց Վարչութիւնները, նկատի ունենալով սեղծուած նոր պայմանները, կ'որոշեն միասնալ և կազմել «Հաբընի Հայրենակցական Փոխադարձ Օգնութեան Միութիւն»: Միասնակամութեան և համագործակցութեան սլխով լուստարուած այս պատմական ժողովը կը հանդիսանայ արդարեւ սմուր անկիւնաքարը՝ Պ. Ալբէտի Հայրենակցական Միութեան այնուհետեւ սկսած նոր վերելքի համբուն վրայ: Այդ աթիւր ընտրուած վարչութիւնը կը կազմեն, Ատենայեա՝ Սահակ Պազէնեան, Փոխ Ատենայեա՝ Յովակիմ Ապտեան, Ատենայպր՝ Աւետիս Գոյումեան, Փոխ-Ատենայպր՝ Արբաշաձ Գրաճեան, Գանձապահ՝ Յարութիւն Պալպապեան, իսկ՝ Միսակ Գաբելեան, խորհրդականներ՝ Միստիչ Պէլլօրեան և Ղազարոս Ար՛լանեան: «Նոր Հաճըն» պաշտանաթերթին համար

կը նշանակուին, խմբադիր-անօրէն՝ Ազարիա Պապահէզ-
կան: Եւ խմբադրական մարմնի անդամներ՝ Ար. Էօրթէսէկ-
կան, Ս. Թէլըղեան եւ Ար. Գրաճեան, եւ կը թելադրուի
հրատարակել թերթը կանոնադրապէս երկամսեայ, 16
էջով:

Յաջորդ 3 - 4 տարիներու ընթացքին կազմակերպու-
թիւնը, իր անդամական ժողովներուն որոշումովը, կը
ստանայ իր վերջնական անուանումը՝ Հաննոյ Հայրենակ-
ցական Միութիւն: Անոր հերթական վարչաժիւններուն
մաս կազմած են նաեւ Պ. Պ. Բարսեղ Էօրթէսեանը, Միսակ
Փննիկեանը, Պօղոս Պալասանեանը, Սարգիս Քէթէնը,
Սարգիս Գարեթեանը, Յ. Մանուկեանը, Նազարէթ եւ Մա-
նուկ Օփանեանները, Գէորդ Կիզիբեանը, եւայլն: Կարեւոր
այն է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի զբժ-
ւանքին օրերուն իսկ, հակառակ տեղական աննպաստ պայ-
մաններուն եւ արտասահմանի հետ հազարակիցութեանց
անկանոնութեանը, իրերայնօրէր բոլոր վարչութիւններն
ալ անզուլ եռանդով շարունակած են իրենց վստահուած
նուիրական գործը: Չտրիկ սուած են՝ պատերազմի աղէտ-
եալներուն շուտափոյթ օգնելու աշխատանքին եւ նկատե-
լի գումարներ յաջողած են զրկել Նուպորաշէն, Սուրիա,
Լիբանան, Յունաստան, Թրանսս, եւայլն:

Միւս մասում են բոլոր Հարաւ. Ամերիկայի մեր հայ-
րենակցական շրջանակներուն հաւաքական կեանքին ա-
ռաջդիմութեան՝ իրենց Շրջանային Կեդր. Վարչութիւն
ըլլարուն հանդամանքովը: Բացի այդ, կարելի դառնում է
ջոցներով շարունակ հետապնդած են Հանրե Արամի շինու-
թեան գաղափարը եւ, միեւնոյն ատեն, Պ. Ալթէսի մէջ սե-
փական հաւաքատեղի մը ստեղծելու ծրագիրը, մինչեւ որ
1945ին աննախընթաց իրադարձութիւն մը կու գոյ առա-
ւել ոգևորութիւն ներմուծել մեր հայրենակցական կեան-
քէն ներս:

Արդ տարին Ս. Էջմիածնի մէջ պիտի գումարուէր,
երկար պատերազմէն յետոյ, շատ կարեւոր Արդային - Ե-
կեղեցական Ժողով մը, որուն մասնակցելու համար լիա-
պօր պատուիրակ նշանակուած էր, Հարաւ. Ամերիկահայ
Թեմին կողմէ, անոր Կեդր. Հոգաբարձութեան անդամնե-

րէն՝ հայրենակից Սահակ Պաղչէճեանը: Որով, ան պիտի
ըլլար նաեւ, որպէս այստեղի հայրենակցական կեանքին
գլխաւոր առաջնորդներէն մին եւ միութեան Առնետպե-
տը՝ յարմարագոյն հանձնցին որ պիտի այցելէր Հայաս-
տան եւ տեղւոյն վրայ ուսումնասիրէր բովանդակ հաճըն-
ցիութիւնը յուզող խնդիրները: Այս առթիւ Հ. Միութեան
Վարչութիւնը անոր կու տայ պէտք եղած լիազօրութիւնը
որպէսզի ան տեսակցի Ս. Հայաստանի պետական դեկա-
պարներուն հետ եւ անձամբ ներկայացնէ աննց բոլոր հա-
ճընցիներուն փափաքը պարունակող պաշտօնական դի-
մումնադիրը: Նաեւ, բացառիկ ճիշտ մըն ալ ընելով, կը
դոյրացնէ 1000 տոյարի գումար մը եւս, որպէսզի Պ. Սահակ
Պաղչէճեան գոյն յանձնէ Նախագահ Մացակ Պապեանին՝
պատերազմէն վնասուած հաճընցիներուն յատկացուելու
համար:

Հայրենակից Ս. Պաղչէճեան Հայաստանէն վերա-
դարձին կը տեղեկացնէ, ինչպէս իր ճամբուն վրայ այցե-
լած մեր արհեստներուն հաճընցիներուն նաեւ Հարաւ.
Ամերիկայի մեր հայրենակիցներուն իր առաքելութեան
արդիւնքը, շեշտը զնելով մասնաւորաբար Մայր Հայրե-
նիքի լուսաւոր ապագային նկատմամբ դոյրացուած խոր
համոզումին վրայ: Կը հաղորդէ՝ հայրենի բարեխնամ
կառավարութեան ցոյց տուած բարի արամագրութիւնն ու
վճռակամութիւնը՝ Նոր Հաճըն ականին անյապաղ կատուց-
ման առնչութեամբ, ինչպէս նաեւ՝ իր ուղեւորութեան
ընթացքին զանազան գաղութներու հաճընցիական շրջա-
նակներուն յայտնաբերած՝ բարեկարգ ոգևորութիւնը
այդ իրազօրութեան հետեւանքով: Ստեղծուած այս բա-
րենպաստ նոր երեւոյթէն քաջաբերուած, Պ. Ալթէսի Հ. Հ.
Միութեան Վարչութիւնը անմիջապէս հրապարակ կը հա-
նէ «Հանրեմը որ առաջ Մայր Հայրենիքի հողին վրայ վերա-
կանգնել»-ու կարգախօսը եւ այդ նպատակաւ կը ձեռնարկէ
«Վերաշինութեան Ծրուած»-ին համար 100.000 փետո, (10.000
տոյար) հանգանակելու գործին: Մասնաւոր յանձնախում-
բեր կը զրկէ Գորտոպա, Մոնթէվիտէօ եւ Սան Փաւլօ,
նոյն նպատակին շուրջ տեղական վարչութիւններուն թա-
փած ֆանքերուն օժանդակելու համար: Եւ օգտուե-
լով նաեւ ներկայացող բարեպատեհ առիթէն, որ Լոս
Անճըլոսի մէջ մօտ ասեանէն պիտի գումարուի Ռեթերորդ

Ընդհ. Պատգամադրական Ժողովը, Վարչութիւնը նպատակաբար կը գտնէ, որ այս անգամ փոխանակ ձայնի փոխանձմամբ մասնակցելու, իր լիազօր պատգամադրները անձամբ ներկայ ըլլան հոն, որպէսզի կարելի ըլլայ այդ համադրումային ներկայացնել աւելի հարապատօրէն Հարաւ. Ամերիկայի հաճրեցիներուն տեսակէտները եւ թէ՛ այ այդ առիթով առաջ տանին հոն «Վերաշինութեան ձեռնած»ին ի նպատակ յայն հանգանակութիւն մը: Այլ գրումար առաքելութիւնը կատարելու համար կ'ընտրուին Պ. Պ. Սահակ Պաղչէճեան եւ Արթուր Հոբանէան, որոնք կը ամսին նաեւ Գորտապայի, Արուիւուայի եւ Պրազիի Մասնաճիւղերուն ձայնը:

1946 Սեպտեմբեր 15-16ին Լոս Անճերոսի (ԱՄՆ) մէջ պատգամադրում այս համահաճրեցիական Ռեկորդ Պատգամադրական Ժողովը, կը բանայ արդարեւ նոր էջ մը արատահամանի մէջ Հայրենակցական Միութիւններուն պատմութեան մէջ, իր աւանդ որոշումներով, սրունցէ՛ կ'արժէ մէջբերել մասնադրայէ հետեւեղները:—

2) Հանրեցիները մէկ միութեան մէջ: «Հաճրեցիները ամէն տեղ պէտք է կողմակերպուին եւ ունենան Հայրենակցական մէկ Միութիւն, որուն կրնան եւ պէտք է անգամակցին անխտիր բոլոր հաճրեցի եւ հաճրեցիածին երկուսն հայրենակիցները: Այդ կողմակերպութիւնը ամենուրեք պիտի կոչուի միօրինակ «Հաճրեցի Հայրենակցական Ընդհանուր Միութիւն»:

3) Պաշտօնաբերք: «Նկատի առնելով պաշտօնական թերթի մը յոյժ կարեւորութիւնը, ժողովս կ'որոշէ Պ. Այրէս հրատարակուող «Նոր Հաճրեցի» պարբերականը դարձրնել Միութեան պաշտօնական օրկան» Կեդր. Վարչութեան հովանադրութեան եւ հակադէտն տակ»:

6) Կրթական Գործը: «Ներքնային Կեդր. Վարչութիւնը իր հնարադրութեանն շարժող պէտք է քաջալերէ կարօտ ստանդներուն կրթական գործը, մասնադրապէս թելադրելով ունենոր հայրենակիցներուն սրբէնցի որպէսզի չբաւոր ստանդներ եւ հոգան անոնց ծախքերը»:

7) Ներգաղթը: «Անյերապահ համակրանք եւ գրական մասնակցութիւն յոյս տայ Ս. Հայաստանի ձեռնարկած դանդաղաձայնի ներգաղթին հանդէպ, քանի որ ան կը հանդիսանայ ճշմարիտ սպասարարի գլխաւոր սղակեր»:

8) Նոր Հանրեցի Աւանք: «Արուած ուշադրութեամբ յսեղ յետոյ հայրենակից Սահակ Պաղչէճեանին զեկայցը Մայր Հայրենիքի պետական առաջնորդներուն հետ իր ունեցած տեսակցութիւններուն եւ գնահատան գաղութներու հաճրեցի համայնքներէն բերած տպագրութեանը մասին, եւ մասնադրապէս խրախուսուած Արթուրիւարեանի հայրենակիցներուն քաջալերել ձեռնարկէն՝ որով հանգանակած են 100.000 փեւս եւ որոշած են որպէս այդ պատճառը բարձրացնել 150.000 (25.000 տոյար) համապատասխան կը որոշէ իրագործել Նոր Հաճրեցի քաղաք մը Ս. Հայաստանի մէջ, ուր համախմբուին հետադային ներգաղթող հաճրեցիները, զերին հոգածութեամբն ու կարգադրութեամբը հայրենի բարեխնամ կոտակարութեան: Այս նպատակին յաջողութեան ստատելու համար, Հիւս. Ամերիկայի հաճրեցիներուն միջեւ այ պիտի կատարուի հանդանակութիւն մը յատուկ յանձնարարութիւն մը միջոցով, նախագահութեամբ Պ. Ս. Փիլիպպոսեանի»:

9) Կեդրոնական Վարչութեան բնակատեղին: «Նկատի առնելով Հարաւային Ամերիկայի հաճրեցիներուն հոն քանակը, անոնց աշխատելու եռանդը եւ «Նոր Հաճրեցի» պաշտօնակրթիւնն այնտեղ հրատարակուելու, համադրութեամբ կ'որոշէ (Չեռնպահութեամբ՝ Հարաւ. Ամերիկայի Մասնաճիւղերը ներկայացնող զոյգ պատգամադրներուն) Հաճրեցի Հայրենակցական Ընդհ. Միութեան Կեդր. Վարչութիւնը փոխադրել Պուէնոս Այրէս - Արթուրիւն: Կեդր. Վարչութիւնը Միութեան գործերուն ընդհանուր գեկալարն ու պատասխանատու մարմինն է, որուն հեղինակութեան ենթարկուած են բոլոր Մասնաճիւղերը, Վարչութիւններն ու Երջանային Մարմինները»:

Տարակույս չկայ որ Ռեկորդը Համադրումար իր այս պատմական նշանակութիւնն ունենալու կոչուած որոշումներով ո՛չ միայն կը գնահատէր ու հաստատէր Արթուրիւն հաճրեցիներուն երկար տարիներէ ի վեր հետադրած նպատակներուն ճշմարիտ հայրենասիրական բընութիւնն ու կուրիւնը, այլ նաեւ - ինչ որ խիստ յատկանշական է - անոնց կը մտահոգէր համահաճրեցիական գործերուն ընդհանուր գեկալարութեան պատասխանատուութիւնը: Որով, Պ. Այրէսի մէջ հայրենակցական շրջանակը յանկարծ ինքզինքը կը գտնէր իր բովանդակ կարողու-

թիւնն ու կարելիութիւնը նոր դասաւորումի մը ենթարկելու հարկադրանքին առջեւ, քանի որ պարտաւոր էր այդ օրէն սկսեալ կրեւնապատակել թիւում կարող գործօններ մէջ տեղ հանել, ուժերը լաւ մատակարէր, իր ծոցին մէջ միտաժամանակ կարենայ ապրեցնելու համար թէ՛ Մասնաճիւղին եւ թէ՛ ալ Ընդհ. Կեդրոնին անհրաժեշտ վարչական ուրոյն կառուցները:

Աւստի, Պ. Ալբրէսի մեր հայրենակիցները, անգամ մը եւս հրապարակ գալով իրենց ո՛չ մէկ գիտաւորութեան առջեւ կանգ չառնելու վճռակամութեամբ, անմիջապէս կը գումարեն իրենց ընդհ. անգամական ժողովը - 13 Դեկտ. 1946 - եւ պէտք եղած ուսումնասիրութիւնը եւ աշխատանքի ճշգրտմանըը էտաքելէ ետք, վերջին Ընդհ. Պատգամաւորականին որոշումին համաձայն՝ կ'ընտրեն այլեւս հոս գործելիք առաջին Կեդրոնական Վարչութիւնը, Առեւտրայեա՝ Մասնակ Պապահճեան, Փոխ՝ Դպրարտս Արարտեան, Առեւտրայեա՝ Ազարիա Պապահճեան, Փոխ՝ Արրոհամ Գրաճեան, Գանձ՝ Պօղոս Պալասանեան, Փոխ՝ Կարապետ Զորարիւկան, Խորհրդականներ՝ Բարսեղ Խօրէճեան եւ Բիզանդ Կէճէգուչեան: «Նոր Հաճոյք» պաշտօնաթիւթիթի համար վերջնականապէս կը նշանակեն վարիչ-անօրէն՝ Ազարիա Պապահճեանը, խմբագիր՝ Արր. Խօյմէզ, խմբարական Մարմնի անգամներ՝ Բարսեղ Խօրէճեանը, Արր. Գրաճեանը եւ Սոկրատ Թէրզեանը: Իսկ Տեղական Մասնաճիւղի ուրոյն աշխատանքներուն համար ընտրուած Վարչութիւնը կը կազմեն, Առեւտրայեա՝ Ստեփան Շիրամեան, Առեւտրայեա՝ Վարդան Շօրճեան, Գանձապահ՝ Գրիգոր Տումանեան, Խորհրդականներ՝ Գէորգ Կիզիբեան, Արամ Թօռունեան, Միշաք Թաթումեան եւ Խաչեր Պարսիկան: Այս կարգադրութիւններէն յետոյ նորընտիր Կեդր. Վարչութիւնը կը սկսի տեղագրին աշխատանքներու շրջան մը, որ հետագային իր հերթական համապատասխանութեան դժամ ուղիովն ու ընտրած նոր կազմերուն առաջնորդութեամբ, կը սյուսկուի փաստաւոր իրականացումովը նոր Հաճոյք աւանին եւ այլ հանրօգուտ ծրագրերներուն, որոնց յատուկ սկիզբիւրումը կը թողունք այժմ, հետեւելու համար զուտ Մասնաճիւղին գործունէութեան, որ կը կազմէ արդէն այս գրութեան առն տուող մասնաւոր շարժառիթը:

Այսիցլի իրադրութիւն է, որ Միութեան վերին մարմինը Պ. Ալբրէս հաստատուելէն ետք աննախընթաց թափով

առաջացած են բովանդակ հաճոյքիութիւնը խանդավառող հիմնական աշխատանքները - որուն պերճաբար ապացոյցներ կը կազմեն անշուշտ ձեւք բերուած հանրածառօթ յաջողութիւնները: Սակայն պէտք է ըսել նաեւ որ ան սկսած այս պատճառ եղած է, զոնէ ժամանակաւոր կերպով, Տեղական Մասնաճիւղին երբեմնի ամուր վարչական կառուցուածքին անսկիւղ տկարացման: Զանազան պատճառներ կարելի է մէջ բերել այս առթիւ, որոնց զլխարները կը հանդիսանան ըստ երեւոյթի, նախ՝ կարեւոր ուժերու, հեղինակութիւններու կեդրոնացումը վերին Մարմնին մէջ ի հեճուկս Մասնաճիւղին: Յետոյ՝ երկու վարչութիւններուն նոյն շրջանակին մէջ գործելէն առաջ եկող ազդեցութեանց զիբրմացութիւնը: Կեդրոնականին միայն անգամ ըլլալու ոմանց նախասիրութիւնը, եւայլն: Որով Տեղական Վարչութիւնները յաճախ հանդիպած է իր գիտաւորութիւններու: Այս գրութեան գրան սեկցած է նաեւ հետզհետէ աւելի հրամայական դարձող սեփական հաւաքատեղիի մը պահանջը, որուն համար մէկէլ աւելի անգամներ հերթական վարչութիւնները փորձած են միջոցներ ձեռք առնել, զվտք եղած դրամը հաւաքել, սակայն միշտ հանդիպած են ուրիշ կարեւոր նպատակներու համար կատարուող աշխատանքներու եւ սահպուած են յետաձգել այդ ծրագրերին հետապնդումը աւելի յարմար առիթի: Կրկնակի անգամներ պաշտօնապէս զխմած են նաեւ Կեդր. Վարչութեան եւ յաջողած են որ Վերին Մարմնի նշումներէ ախումբի մը գնման գործը: Սակայն մասնաւորապէս Տեղական Վարչութեանց ծաւալելիք գործունէութիւնէ կախում ունեցող այս շատ նպատաւոր ծրագրերն իրականացումը ուղացած է զեւ լուսական ժամանակ, ինչ որ իր կարգին սկսած է առկա խորացնել նոր սերունդը համակող յաճախումի Մասնաճիւղին առօրեային նկատմամբ:

1952ին Տեղական Վարչութիւնը, իր տաքելութիւնը առաջ առնելու անկարելիութեան առջեւ, հաւաքարար իր հրաժարականը կը ներկայացնէ Կեդր. Վարչութեան, խնդրելով որ ան պէտք եղածը անօրինէ եւ զարման մը ուրնէ ստեղծուած անբաղձալի կացութեան:

Տարակոյս չկայ, որ այս գրութիւնը նպատաւոր չէր ո՛չ միայն տեղական գործերուն բնականոն ընթացքին, այլ մասնաւորապէս իր յոսի ազդեցութիւնը կրնար ունենալ

Ընդհ. Հ. Միութեան հետապնդած նպատակներուն առաջնիքացքին վրայ, քանի որ Պ. Այրէսի Մարնաճիւղին գիճակուած էր շատ կարեւոր բաժին մը կատարուելիք ջանքերուն մէջ:

Ուստի, Կեդր. Վարչութիւնը լրիւ ուսումնասիրելէ ետք այս անխորժ վիճակը, յարմար կը նկատէ նշանակովի ստժամեայ վարչութիւն մը առ Մասնաճիւղին: Այդ նպատակով կարգ մը խորհրդակցական ժողովներ զուժարելէ յետոյ մասնաւորապէս հրաւիրուած Հայրենակիցիներու հետ, Վերին Մարմինը կը հարկադրուի արժամադրել նաեւ իր կազմին անդամներէն Պ. Պ. Մարգիս Գարեխանը և Յարութիւն Պարպանեանը կարենալ ամբողջացնելու համար առժամեայ վարչութիւն մը, որուն մնացեալ նշանակովի անդամները կ'ըլլան, Ատենապետ՝ Երուանդ Պըշգալեան, Փոխ՝ Վարդան Ծորճեան, Ատենադպիր՝ Նազարէթ Ճէրճեան, Փոխ՝ Արամ Թօսունեան, Գանձապահ՝ Կէրոզ Կիլիբեան, Խորհրդականները ըլլալով ուրեմն Կեդրոնականի վարչականներէն՝ Ս. Գարեխան և Յ. Պարպանեան:

Այս վարչութիւնը, թէև «առժամեայ» գործեց երեք շուրս տարեշրջան, որովհետև հետադայ անդամական ժողովները վերընտրեցին զայն շատ քիչ փոփոխութեամբ, բանալով շատ փայլուն էջ մը Մասնաճիւղիս բազմամեայ պատմութեան մէջ: Առաջին օրէն սկսեալ ան ուժ առաւ նախ շրջանակին նախկին հատարական եռուն կեանքին վերստեղծման գործին: Իր տքնաջան, յարատև աշխատանքով յաջողեցաւ վերջնականապէս շեղարացնել հայրենակիցիներուն մէջ տիրող անտարբերութիւնն ու վերադասութիւնը հանդէպ Տեղական Վարչութեան ընելիքին: Յետոյ, շրջանակէն ստացած քաջալերանքէն խրախուսուած՝ Վարչութիւնը իսկոյն ձեռք առաւ բոլորին սրտին խօսող վաղեմի ծրագիրը՝ Հանրիկ Տուն մը ունենայալ խրդիրը, և հայրենակիցիներուն ընդհ. մարդահամարը ճշգրելու անհրաժեշտութիւնը: Որովհետև աւելի քան քուսուուն տարի էր անցած համայնքին հիմնումէն ի վեր, զերթէ երկու տարուէ յառաջացած, շատ մը բնասնիքներ արդէն ճիւղաւորուած, նոր օճախներ կարգած էին, սակայն միութեան տոմարին մէջ դեռ կը ճանչցուէին միայն սկզբնական 100-120 անուն-հասցէները, թէև յուշատօններուն ներկայ կ'ըլլային յաճախ հազարէ աւելի մարդիք:



Հանրիկ Տան կիսնադիր վարչութիւնը
Չախէն աջ - Արամ Թօսունեան, Վարդան Ծորճեան, Նազարէթ Ճէրճեան, Ստամ - Կէրոզ Կիլիբեան, Յարալիկ Պալապանեան, Երուանդ Պըշգալեան և Սարգիս Գարեխան:

Մի անգամ ընդ միշտ ճշգրիտ գաղափար մը ունենալու համար մեր համայնքին քանակին, սրտիկին, կարողութեան ու վիճակին մասին, Վարչութիւնը լծուեցաւ յոչնաջան գործին: Ասոր համար անհրաժեշտ էր «չափել» լայնքն ու երկայնքը ընդարձակածուալ մտայնաբարքին, հետաւոր թաղամասերուն, արուարձաններուն, մօտակայ գիւղերուն: Փնտռել, պրպակ մինչ այդ անձանօթ հասցէներ, գտնել մեկուսացած հայրենակիցիները կամ անոնց դասակները, կատարել իւրաքանչիւր տան մարդահամարը և ի վերջոյ ամէն տեղ պարզել սեփական աղուժքին ծրագիրը և այդ նպատակին համար խնդրել իրենց նիւթակտն օժանդակութիւնը: Ճշմարիտ խաշակութիւն մը, որ կը պահանջէր գործողներէն մասնաւորապէս՝ կամքի ուժ և յարատևութեան ոգի: Բարեխախտարար չի պակտեցան այս յատկութիւնները վարչականներուն մէջ, որոնք թէև մեծ մասամբ բազմապարտ առևտրականներ էին, բայց իրենց միջև տիրող կատարեալ ներդաճակութեան և իրարահասկացողութեան շնորհիւ անոնք կրցան առաջ տանել իրենց ընձևուած այս գիժուար աշխատանքը: Այս առթիւ, չէ կարելի գտնել շատ մասնաւոր յիշատակումը տարաբախտ հայրենակից Երուանդ Պշգալեանին, որ անողորմ

Հիանդութեան մը բռնուած, իր կեանքին վերջին օրերուն իսկ զեռ կը ջանար ընկերանալ, երբեմն՝ առանց ինքնաշարժէն կարենալ իջնալու, իր նախադաճած խումբին անզարկ կտտարած այցելութիւններուն: Անմտանալի Գ. Կրկրեանին՝ որուն համար առաջնահերթին էր Միութեան գործը, իսկ հաճընցութիւնը՝ հաւատքի աղբիւր եւ նուիրական պատողամ: «Ի՛նչ որդին անձնական օխոն քոզի պէտք չունի աշխատել» կ'ըսէին բարեկամները «որովհետեւ ան ինքնին կ'երթայ կը կենայ անպայման հաճընցիի մը տան ստջեւ»: Եւ այդպէս նուիրուեցան բոլոր վարչականներն ալ ընդհանրապէս, առանց նկատի առնելու իրենց ժամանակն ու հանդիսարը, որովհետեւ իւրաքանչիւր հաճընցիի տան մէջ անոնք կը ստանային առաւելարար հոգեկան մեծ դժուարակուցիւն մը, տեսնելով ամէնքին ցոյց տուած բացատրիկ խանդավառութիւնը իրենց առաքելութեան ներկատմամբ: Կարծէ մէջ բերել հոս զոնէ երկու հատը այդ օրերուն պատահած նմանօրինակ բազմաթիւ դէպքերէն, որոնք իսկապէս կը պատկերացնեն մեր հայրենակցական շրջանակին հոգեկան թուիչքը:

Լսած էինք հայրենակիցի մը մասին, որ շատ տարիներ առաջ Արժանթին եկած էր, բայց յետոյ բոլորովին մեկուսացած: Երկար պրպտումներէ ետք ձեռք ձգեցինք անոր վերջին հասցէն: Սուբրով ուղղուեցանք դէպի հոն, զը՝ տանք այնտեղ մեր փնտած հաճընցիին... նկարը միայն պատէ մը կախուած, սակայն՝ բացատրիկ դուրզուբանքով մեզ հիւրասիրող անոր այլազոյ աշխարհի եւ շափահաս աղջիկը, որոնք մեր մէջ կը դռնէին, անակնկալօրէն, իրենց սիրելի «Աերխիօ»յին հոգին: Կուզէին մեզի տալ իրենց համեստ ունեցածին մեծ մասը, «որպէսզի խաղաղ հանդիսան, որ միշտ կը յիշէր հաճընցի եղբայրները եւ կը փափաքէր որ ակումբ մը ունենային անոնք, իրենց զուակները քով քովի բերելու համար»: Չի մտնամ բռնի, որ հետազային այ՞ օրերուդ - մինչեւ իր ամուսնութիւնը - յաճախեց հաճընցիին հոն:

Ուրիշ օր մը, երբ Սուլտանթիկի թագաւանը «մաղէ անձնընու ելած էինք, գիտակցարար գանջ բրինք ծերունագարդ ալիք թէշխուն մայրիկ Սաշեանը, նկատի ունենալով իր տարիքն ու տնտեսական դրութիւնը, եւ նախընտրեցինք այցելել քիչ անդին գտնուող ուրիշ հայրենակիցի

մը բնակարանը: Հազիւ թէ սկսած էինք մեր գործին, երբ անակնկալօրէն ներս եկաւ համարաքայլ թէշխուն մայրիկը եւ իր ամբողջ զայրոյթը, վիրաւորուած հոգին եւ հաճընցիական անհուն սէրը աչքերէն դատարող արցունքներն մէջ խտացուցած, բաւա. «Ճամբում, դիս ելին՝ հէ՛՛՛՛նցութիւնը զոյր կը թողնէք...» եւ իր զոյգօջուուն ձեռքերուն մէջ բռնած դաշկինակին մէջ ծայրը քակելով հանեց գումար մը եւ զետեղեց սեղանին վրայ, յարելով՝ «Տօնէ համո փիպէր մա էսէ՛վլիք առէք: Աստուած ձի՛կ դուզով թէշտա...»:

Այսպիսի յատկանշական դէպքեր, հաճընցիութիւնն իր բովանդակ էութեամբը բացառապէս կերտութիւնը շատ անգամ երեսան եկան այլ օրերուն: Ոչ ոք զլացաւ իր դժուարութեան բաժինը: Մանուսանց յատնի եղաւ, որ վարչութիւնը յաջողած էր մէջտեղ բերել, նիւթականէն աւելի կարեւոր՝ մեր հաւաքական կեանքին անհրաժեշտ ետուզեող հայրենակցական շրջանակէն ներս: Եւ ստեղծուած այդ ընդհանուր խանդավառութեան Աջախիլի մէկ արդիւնքը եղաւ արդէն հայրենակից Ահարոն Թըլլարեանին ունեցած եզակի ժեստը, առանց որուն հաւանաբար զեռ երկար ժամանակ կարելի չէր ըլլար ակումբ մը գնել: Որովհետեւ հանդանակուած գումարը, մասնաւորաբար գանձուած պատրաստ դրամը համեմատութիւն չունէր տակաւին մեզի յարմար տուներուն օրրատօրէ սղոց գիններուն հետ: Պէտք էր ուրեմն շարունակել հանդանակութիւնը եւ պատել յարմար տուն մը ձեռք ձգելու պատեհութեան: Մինչ այդ ժամանակը կը սահէր, աշխատելու արժանապրութիւնները կը թուշխային, երած խոտտումները կրնային փոխուիլ, եւ այլն: Միակ իրողութիւնը ան էր որ Կիզը. Վարչութեան ջանքերովը կազմուած եւ անոր անվերապահ օժանդակութիւնն ու քաջախիտանքը վայելող Տեղական Վարչութիւնը հաւատքով փաստած էր իր գործին եւ այլ պատճառով այ՞ արժանացած էր հայրենակիցներուն կողմէ իրեն տրուած սիրալիք կոչումին՝ «Պատգա, ա Վարչութիւնը՝ պաշխո վարչութիւն է»:

Այսպէս ուրեմն, այցելութեան հերթը եկած էր Թըլլարեան ընտանիքին: Հուն երկար բացատրութիւններու կարիքը չկար, որովհետեւ Պ. Ահարոնը ոչ միայն տեղեակ էր արդէն թափուող ջանքերուն եւ կը քաջախիտէր Վարչութեան նպատակը, այլ նաեւ իր պարտականութիւնը կը



ՅՄՐ. ՊԱՍՊԱՆՅԱՆ
Պ. Այրէսի Մասնագիտացի
բազմամեայ Առեւտրային



Վ.ՈՐԳ. ԿԻՋԻՐՅԱՆ
Խնամակալ՝ Հանրի Տան

սեպտեմբերին ընկերանալ մեկի յարմար շէնք մը գտնելու գործին մէջ, «Մնացածը բան մը կ'ընենք» բսելով, խորհրդաւոր կերպով: Յաջորդ օրն իսկ տն, իր «սիական ինքնաշարժին մէջ զննելով վարչականները, փողոց կառ տուն փնտաւելու: Այս առթիւ, Գաննինի փողոցէն անցնելու. առան տեսաւ հսկայ շէնքի մը ճակատը գրուած ծախու յայտարարութիւնը: «Կը հունի՞ր դաս» հարցումին ի՞նչ կրնային պատասխանել այդ պահուն գարմացած ընկերակիցները, եթէ ոչ՝ «Ազո, տանկ շոտ էրինա է, տեմա՛...» Մնացածը լսելու պէտքը չգրաց Պ. Ահարոնը: Երկու օր յետոյ, վարչականներուն հետ ներկայացաւ շէնքը տնօրդի հանող գրասենեակը և առաւելագոյն գումարը առաջարկելով - 6000-000 փետ, 60-000 ալ միջնորդին իրաւունքը - զննչ տունը, որ արժամարար արձանագրուեցաւ վարչութեան կողմէ նշանակուած վեց հայրենակիցներու անունին (Պօզոս Պայասանեանի, Սարգիս Գարեկեանի, Յարութիւն Պայասանեանի, Գէորգ Կրիշեանի, Անիտանի Թըրքմեանի և Կարապետ Չոբանյանի) և հետագային, երբ Միութիւնը ձեռք բերաւ պետականօրինական ճանաչում՝ ուղղակի փոխանցուեցաւ Հայրենակցական Միութեան որպէս կալուած, որուն առաջին վարիչ - Տնօրէնը և միւսնայն տանն, յաջորդող քանի մը վարչութիւններուն բարտադարը եղաւ այս առիւթը գրողս:

Ճիշդ է թէ և, որ մեր համայնքը մի քանի տարիէն, մասնավճառներով, վերագարցուց այդ գումարը Պ. Ահարոն



Հանրի Տան բարերար Ահարոն Թըրքմեան, Տիկինը Արշալոյս, Աղջիկը ԹՅՎԻՈՒԻ Ազատուի և կրտսեր տղան Խորիէ

րոն Թըրքմեանին, (որ՝ իր կարգին գանազան տոհմէն բով անոր կէսէն աւելին նորէն նուիրեց Միութեան) բայց անուրանալին ա՛յն է, որ տուեալ նիւթական ասպետական մեատուր ծագում տուաւ Հանրի Տնօր, 1955 Ապրիլ 3ին:

Չորս յարկանի այս ապարանքին գնումովը «կտող նոր շրջանին պատմութիւնը, որ անընդճատ կ'երկարի մինչև մեր ներկան, առանձին կրնայ հատորներ լեցնել, սակայն կարելի եղած չափով համարտագրելու. հարկադրանքէն մեկնելով, բսեմ հոս, հանդամանօրէն, որ Պ. Այրէսի մեր հայրենակցական կեանքին աննշտութեամբ ան իսկապէս ունեցաւ բախտորջ գեր մը: Հանրի Տնօր եղաւ, ե՛ւ կը շարունակէ ըլլալ մեր միութեանկան բոլոր աշխատանքներուն և գործօններու կեդրոնատեղին: Հին և նոր սերունդներուն միջև կապի և փոխանցման հանդրուանը: Հիմնական ծրագիրները զարգացնելու, նպատակաւոր ճիգեր կարճակերպելու ամուր մեկնակէտ: Հայրենակցական, ընկերային բուսն գործունէութեան մը անհրաժեշտ տագուկ միջնավայր: Մեր ազգային, հայրենասիրական տպրումներուն յարմար գանձանակ: Բովանդակ Սփիւռքի և Մայր Հայրենիքի մեր հարազատներուն հոգեկան հըր

Ապա, Հաճրն Տան նախագահութիւնը ստանձնեց - եւ զիս մինչեւ հիմայ կը շարունակէ - մեր համայնքին մէջ իր զոհարեութիւններովը ծանօթ ու յարգուած Պր. Յարութիւն Պալապանեանը:

Այլ օրէն մինչեւ այսօր, կանոնաւորապէս իբրար յարգող բազմաթիւ վարչութիւններուն եւ մանաւանդ անոնց կողքին կեցած ժրջան Տիկնանց Միութեան բարձրանուէր Բանքերուն շնորհիւ, Հաճրն Տունը իսկապէս մատուցած է անդնահատելի ծառայութիւն մը Հաճրնցիներու հաւաքական շահերուն ի նպաստ: Անոր մէջ համարժեքուած սղջունեցին մեր հայրենակիցները առաջին անգամ Մայր Հայրենիքէն արձակուած հոգեպարար աւետիսը: Եւր Հաճրն քաղաքատիպ աւանին իրականացումին՝ 1958 Նոյեմբեր 1ին: Հոն տեղի ունեցան Հաճրոյ Հայրենակցական Ընդհ: Միութեան հերթական բարձր համագումարները, յաճախ աշխարհի շարժապէտէն եկած պատգամաւորներու մասնակցութեամբ: Անոր շքեղ սրահներուն մէջ զիս կ'արձագանգէն օրհնարներ պատգամները Ամենայն Հայոց Հայրապետ Վարդէն Ա. Վեհափառին: Սրտաբայ ողջոյնները՝ հայրենի պետական ղեկավարներու գիտութեան եւ մշակոյթի տիրտաններուն, աշխարհահայկան անձնաւորութիւններու, հեռաւոր գաղթօճարներէ այցի եկող հաճրնցի հարգապաններուն: Անոր երդիքին տակ հաւաքուած բոլոր հաճրնցիները, կ'սոսկանք ամէն տարի մեր բիրաւոր նահատակներուն ինկիլի յիշատակը, կը նորոգենք մեր ուխտը անոնց նուիրական պատգամին հաւատարիմ մնալու եւ ցնծութեամբ կը գիծաւորենք մեր ժողովուրդին ու հայրենիքին վերածնութեան թափանչանքը: Մէկ խօսքով, Հաճրն Տունը սիմպոյն է այս հեռաւոր սփերուն վրայ իր սոհմային ասանձնայայտութիւններովը սպրելու ձգտող ու ձգնող հաճրնցիութեան:

Պ. Այրէսի Հաճրոյ Հայրենակցական Միութիւնը, շրնորհիւ իր ծաղումէն ի վեր որդեգրած հանրօգուտ եւ յրատակ գաղափարականին ու հետեւած հայրենասիրական շխտակ ուղիին, մատուցած հսկայ ծառայութիւններուն անհուն զոհունակութեամբը համակուած կը թեւակոխէ աշխարհի բոլորմասոր կեանքին յիսուն եւ եօթերորդ տարեգարձը, նորոգուած եռանդով եւ վրա յայտնով:

Պ. Այրէս, Ապրիլ 1972



ՎԱՐԴՔԷ ԾԱՌԱՅ ՅԻ ՔԻՆՄԱՐԻՌԻՌԵԱՄԲԸ ԱՅ ԵՒ ԿԱՄՈՒՔ ԱՉԻ
 ԵՒՊԻՍԿՈՍԱԼՊԵՏ ԵՒ ԿԱՌՈՂՎԱՍ ԱՄԵՆԱՏԵ ՀԱՅՈՑ
 ԾԱՅՐԱԳՅԵ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԼՈՂԿԱԿԱ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՈՑ
 ԱՐԱՄՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱ ՄԱՅՐԵԿԵՆՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇԵՒ
 Հանրնցիներու Հայրենակցական Միութեան (Պ. Այրէս) Յարգարժան Վարչութեան եւ Անդամներուն, հարգատապ որդուց Մայր Սրբոց Կարողիկէ Էջմիածնի, ողջոյն՝ Հայրական եւ Օրինոքիւն Հայրապետական

Ողորմութեամբ Աստուծոյ ամենակալին տարւոյս ամբան ամիսներուն այցի եկանք Ամերիկա մեր եկեղեցիներուն, հազեւոր ուրախութեանց անմոռանալի օրեր ապրելով ամենուրեք:

Ի մասնաւորի յոյժ միւթարական էր մեզ համար հաստանք մեր ժողովուրդի սէրը եւ նուիրումը դէպի մեր պաշտօնի Սուրբ Էջմիածինը եւ երկիրը մեր հայրենի:

Այդպիսի սէր եւ նուիրում անսանք ու զգացինք նաեւ Ձեր սրտերուն մէջ, սիրելի զուտակներ մեր, որ համախրմբուած էք մեր Սուրբ Եկեղեցւոյ հովանիին ներքեւ եւ կ'ապրիք ճշմարիտ հայ քրիստոնեայի կեանք, սիրով միաբան եւ խաղաղ նուիրուած Աստուածահաճոյ գործերու:

Ձեր բարի գործերէն մին հանդիսացաւ ձեր նուիրատուութիւնը ի պայծառութիւն Մայր Աթոսիս, որու համար ձեզ կը յայտնենք մեր հայրական զօհունակութիւնը եւ զբնաստանքը:

Եւ սոյն մեր Կոնգակով կ'օրհներբ Հաճրնցիներու Հայրենակցական ձեր քաղաքի կազմակերպութիւնը, ձեր վարչութիւնը եւ ձեր բոլոր աստուածատէր անդամները, լիակատար յաջողութիւն մաղթելով ձեր ազգանուէր շինարար գործերուն:

Սուրբ Լուսաւորչի անմար կանթիկի առաջ մենք կ'աղօթենք ձեր Միութեան անասանութեան եւ ձեր ամենուղարեւշատութեան համար:

Թող Տէրը ծաղկեալ, մի եւ անբոժան պահէ մեր Ս. Եկեղեցին եւ միշտ չէն ու պայծառ, Հայրապետական Մայր Աթոսը Ամենայն Հայոց:

Աէր եւ Սաղազութիւն Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա.

Մայրապոյն Պատրիարք եւ Կաթողիկոս
Ամենայն Հայոց

Կնիք

Տոսա Կոնգակս ի ին Դեկտեմբրի

1960 Փրկչական ամի

Եւ ի տումարի Հայոց ԾՆժ.

Ի վասն Սրբոյ Էջմիածնի

Համար 374

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՊԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՅԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՒՆԷՂՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ Ն. ԿՈՒՄՆՈՒՆԻ

Մտաւուն կազմակերպութեան մը կեանքին մէջ – ինչպիսին է անտարակոյս Հաճրնի Հ. Ընդհ. Միութիւնը, որ կենսունակ մասնաճիւղերու ցանցով մը տարածուած է Ափիւսքի շատ մը գաղթօճայններէն ներս եւ որուն աշխատանքի գետինը չէ սահմանափակուած կարգ մը բարեխրական ծառայութիւններու մատուցումով, այլ ան կ'ընդգրկէ ընդհանրապէս մեր հաւաքական գոյապայքարին այլազան ճակատները – Միութեան որդեկրած հիմնական նպատակներուն յաջողութիւնը կախում ունի ո՛չ միայն տրամադրելի ուժերուն առաւել քանակէն եւ որակէն, այլ նաեւ անոնց ներդաշնակ եւ կեդրոնածիղ աշխատանքէն: Այդպիսի բաղձալի արդիւնքի մը ընկալումն ալ պայմանաւորուած է, իր կարգին, ընդհանուր գործերը ղեկավարող վերին մարմնի մը գոյութեան հետ: Այլապէս, ան ջատարար կատարուած մեծապոյն ճիւղերն ու զոհողութիւններն իսկ յաճախ չեն հասնիր իրենց նպատակին՝ անոնց պէտք եղած ուղղութիւնն ու մղումը սուղող գործօնի մը շարժութեան պատճառով:

Այս իրողութիւնը հաստատող շօշափելի փաստերէն մին է, վստահարար, մեր տարածուն Հայրենակցական Միութիւնը, որուն բոլոր ազնիւ ծրագիրներուն մինչեւ հիմայ գաժած յաջողութեան մէջ բացայայտ է Կեզը. Վարչութեանց ձեռնհաս ղեկավարութեան գրոյմը: Կարելի է բուկ անվարան, որ, համահաճընցիական նպատակներու հետապնդման մէջ՝ իսկապէս բախտորոշ դեր է կատարած մեր միութեան Կեզը. Վարչութիւնը, իր ստեղծումէն մինչեւ այսօր, իմաստուն կերպով գործի դնելով իր արամագրութեան տակ գտնուող միջոցներն ու կարելիութիւնները: Մտաւորապէս գաղափար մը ունենալու համար ա-

նոր վիճակում խրդին պարտականությունաց մասին, բա-
ւական է միայն աչքի տալն րեբել վերջին տասնամեակնե-
րուն ողջ հաճրեցիտութիւնը յուզող գլխաւոր տաղաղարանք-
ները եւ մեծ մասամբ անոնց արուած գոհացուցիչ լուծու-
մը: Ընդ է, որ այդ յաջողութիւնները եղած են թէեւ րու-
լը հաճրեցիներուն թափած գոհացուցիչ արդիւնքը, սակայն շնորհիւ՝ այդ ջանքերը համապարտ եւ խնայցիտէն
գեկազարտող Կեդրոնական Վարչութեանց անփոխարինելի
աշխատանքներուն: Բաւ է յիշել պահ մը՝ մեր ժողովուր-
դին գլխուն վրայ շղթայադրուած բռնապաշտեանն,
ճարգերուն եւ յուսալքումի տխուր օրերը, երբ անհրա-
ժեշտ էր կաթիլ - կաթիլ գոյացող օդնութիւններով առա-
ւել թիւով կարօտեալներու ցար գործանել: Յիր ու ցան
եղած որբերուն եւ ալքիներուն անմիջական կորիճները՝
հողայ: Չբաւոր մանուկներուն կրթական դարձը կազմա-
կերպել, եւայլն: Առնք միայն մէկ մասն են Կեդր. Վար-
չութեանց անխնայ աշխատանքայր կողմակերպում եւ ա-
ռաջ տարում հանրօգուտ գործերուն: Դեռ անդին կը մը-
նան ուրիշ շատ մը կարեւոր աշխատանքներ ալ, որոնց մա-
սին յաճախ քիչ բան կ'իմանայ մեր ժողովուրդը: Ամե-
նայնդէպս, բոլորանուէր գոհացուցիչներով, բոլոր հա-
ճրեցիներուն ճիշդութիւնը հետադիպում ալ իսկական
գործերուն արդիւնքը ալլապէս կրնար շատ տարբեր,
ժխտական ըլլալ հաւանարար, եթէ մեր հայրենակիցները
ժամանակին որդեգրած չըլլային կեդրոնացեալ գեկազար-
տութեան մը շիտակ ձեւը՝ մեր հաւաքական կեանքին եւ
շահերուն ի խնդիր:

Հոս, տեղին է մասնանշել, անցողակի, որ մեր հայրե-
նակիցներուն մէկ բացառիկ յատկութիւնն է եղած միշտ
մեր հաւաքական գործերուն նկատմամբ իրենց ցոյց տաւած
բնախնդրութիւնն ու անոնց հետապնդման եղանակին ճշ-
գորտչումը: Որով, պատահական չզէտք է նկատել ուրե-
ման այն երեւոյթը, որ պարուս տաղին տասնամեակին
խիւ արդէն Ատանայի մէջ անմիջապէս կեանք կ'առնէր
«Հաճրեցի Զ. Միութեան Կեդրոնական Մարմին» մը երբ
տակաւին գոյութիւն չունէին այսօրուայ մեր համայնք

ներն ու մասնաճիւղերու ցանցը: Սակայն տեղանքի իր-
դութիւն մըն էր, որ սկսած էին հովմածրել ըլլալ մեր հայ-
րենակիցները, որոնք իրենց գտնուած գանազան աշխար-
համասերէն անձկութեամբ կը դիմէին այդ «Կեդ-
րոնական Մարմին»ին, իրենց սիրելիներուն ճակա-
տազրին մասին եւ կամ՝ իրենց համեստ լուծանքը
կարօտեալներուն հասցնելու նպատակով: Ո՛չ միայն կար-
նկցութեան եւ հայրենասիրութեան վառ զգացումի ար-
տայայտութիւն մըն է յիշեալ երեւոյթը, այլ նաեւ ան կը
ապացուցանէ մեր հայրենակիցներուն մէջ գոյութիւն ու-
նեցող միասնականութեան զգացումը եւ հասարակական
գործերուն շիտակ ուղղութեան բնութումը:

Կիլիկիոյ աղիտալի պարզումին հետեւանքով թէեւ
կազմալուծուեցաւ նաեւ Ատանայի մեր «Կեդր. Մարմին»ը
սակայն երեսի վրայ չի մնացին ընդ միշտ այդ վարչու-
թեան սկսած երախտաշատ աշխատանքները, որովհետեւ
անմիջապէս անոր փոխարինեց Ամերիկայի Միացեալ Նա-
հանգներու մէջ գործող Հաճրեցի Զ. Միութեան Վարչու-
թիւնը, որուն մաս կը կազմէին ժամանակին հոն՝ Գալի-
ֆոունիոյ շրջանը հաստատուած, անտեսապէս բարեկեցիկ,
բայց դժբախտ արեւնակիցներուն անորոշ վիճակովը տան-
ջուտող հաճրեցիները, որոնց պիտի միանային հետզհետէ
Կիլիկիայէն նոր գաղթողներ, նախկին «Կեդր. Մարմին»էն
անդամներ:

Երկար ժամանակ այլ միութիւնը իր ուսերուն վրայ
տարու ցիր ու ցան եղած հաճրեցիներուն ցաւերուն եւ կար-
իքներուն ծանրութիւնը: Թէեւ գանազան գաղթօճախնե-
րու մէջ հաճրեցիները սկսած էին խմբաւորուիլ, յաճախ՝
այլազան կոչումներով, սակայն ընդհանրապէս տկար էր
տակաւին անոնց անտեսական վիճակը: Որով ամէնքին ալ
հայնացքը ուղղուած էր Գալիֆոունիայի կենտունակ եւ գո-
հարեցող Վարչութեան, որ այդ առթիւ կը զգնուէր, բնա-
կանարար, Կեդրոնական Մարմին հանգամանքն ու պար-
տաւորութիւնն ալ: Հեղանակութիւն մը՝ որուն արժանի
էր արգաբեւ եւ իրեն տրուեցաւ արդէն, օրինական գծով,
կըր մասնաճիւղերը գործել սկսան: Այդ ձեւով կը ստեղ-
ծուէր ուրեմն համա - հաճրեցիական գործերուն ընդհա-
նուր գեկազար մարմինը՝ բոլոր շրջաններուն հաւանու-
թեամբը:

Մեկնելով այդ իրադրություններին, մինչև 1946, տասնամեակներ ընդգրկող զգուար ժամանակաշրջանին, Գալի-Փոռնիոյ մեր Կեդրոնական Վարչութիւնը - թէ՛ որպէս ներքին աստարածի կենտունակ ազդիւր եւ թէ՛ ալ իրբեւ հայրենակցական ընդհանուր գործերուն զեկալար մարմին - կատարած է հայրենասիրական ու մարդասիրական անդնահատելի աշխատանք մը, որուն խնդիրն ասորցութեան մասին թէ՛ եւ օրինակելի համեստութեամբ միայն կը անդրադատնան այսօր այդ զոհողութիւններուն զերակատարները իրենց յուշերուն մէջ, սակայն ան կը մնայ անջնջելիօրէն միացուած Ամերիկայի Միացեալ Նահանգներու մեր պատուական հայրենակիցներուն բարբ անունին՝ ամէն հաճոցի յորտն մէջ:

1946ը կը յատկանշէ, մեր կազմակերպութեան բազմաճեղ պատմութեան մէջ, նոր եւ խոստովալի շրջանի մը բացումը:

Արդարեւ, այդ տարուան Սեպտեմբեր 15-16ին ԱՄՆի Լոս Անճըլոս քաղաքին մէջ գումարուած Ութերորդ Պատմաւարական Ժողովը, իր կայացուցած պատմական որոշումներուն լոյսովը, կը գրէ ողջ հաճոցիութեան հետապնդելիք հիմնական նպատակներուն վրանը, վերջնականապէս միասնելով ու բիրեղացնելով մինչ այդ այլազան ձևերու տակ Հաճոցի վերաշինութեան հարցը, Միութեան ամենուրեք միօրինակ կոչում եւ ընթացք պահելու պարտաւորութիւնը, կրթական գործին լուրջ կազմակերպումը, եւ այլն: Իսկ, ինչ որ առաւել յատկանշական է, մատուցուած այդ նուիրական աշխատանքներուն զեկալարութիւնը կը փոխանցէ, մինչ այդ Գալի-Փոռնիոյ շրջանին մէջ գործող ու զոհողութեան հայրենակիցներուն բուն ցանկութեան վրայ՝ Պուէնոս Այրէսի հաճոցիներուն, որոնց մէջ օր քառ օրէ աւելի նմարելի կ'ըլլային հասարակական գործի լծուած բազմաթիւ հայրենակիցները, թարմ ու ձեռնհաս ուժերը եւ, մասնաւոր, հասարակական կեանքով խանդավառուած հաճոցի հոծ համայնք մը՝ իր լիրտուն կեանքի կոչում «Եւր Հաճոց» թերթովը:

Արդ, 1946 Գեկտեմբեր 12էն սկսեալ, Պ. Այրէս կը հաստատուի Հաճոցի Հ. Ընդհ. Միութեան Կեդր. Վարչութիւ-

նը, համապատասխան զործադրութեան հրահանգով ստացած երկարաշունչ աշխատանքի բլանք ձեւին, ստանձնած պատասխանատու գործին յարմար անձնուորութիւններէ բաղկացած հետեւեալ առժամեայ կազմով. Ատենայտեա՝ Սահակ Պաղչէճեան, Փոխ Լաղարոս Արարանեան, Ատենայտեա՝ Ազարիս Պապահէջեան, Փոխ Արք. Գրաճեան, Գանձապահ՝ Պողոս Պալասանեան, Փոխ Կարապետ Չոխարիան, Պորհրդականներ՝ Բարսեղ Խորէճեան եւ Բիզանդ Կէճէզուշեան: Միութեան պաշտօնական օրկանի վերածուած «Եւր Հաճոց» թերթին համար կը նշանակուին, խմբագիր՝ Արք. Խոյմէզ, վարչչանօրէն՝ Ազարիս Պապահէջեան, խմբագրական մարմնի անդամներ՝ Բարսեղ Խորէճեան, Արք. Գրաճեան եւ Սեդրաթ թէ՛րզեան:

Նորընտիր վարչութեան առջև դրուած բոլոր հարցերըն ալ, անխտիր, կը պահանջեն անխոնջ աշխատանք, բարանուէր զոհողութիւն եւ յարատեւութեան ուղի, սակայն ամենէն բարդ խնդիրը կը հանդիսանայ Եւր Հաճոցի ականի կառուցումը Մայր Հայրենիքի մէջ, որը կը կազմէ Կիւթեան բոլոր շրջաններու ցանկութիւնը եւ որուն համար հարկ էր Հայաստանի պատկան իշխանութեանց հետ ուղղակի հաղորդակցութեան միջոց մը դանել, քանի որ զեկազանական միջոցով կատարուած գիմումները երկար յապաղումներու պատճառ կ'ըլլային երկրորդ աշխարհամարտի ստեղծած զգուարութիւններու բերումով:

Կեդր. Վարչութիւնը աննկուն կամքով կը հետապնդէ միութեանական ծրագիրը, հնարաւոր ճանապարհով դիմումները կը հասցնէ հայրենիք միեւնոյն ատեն մղուած տալով վերաշինութեան Փոռնիոյ գործաշրջանը:

1947ի Յունիսին կը ստացուի այդ ջանքերուն առաջին արդիւնքը՝ միութեան լիազօրներ Երեւան մեկնելու հրահարք:

Պաշտօնական լուրին բերած խանդավառութեան հետ մէջտեղ կու գան ճամբորդելու զգուարութիւնները՝ հետեւանք պատերազմի ստեղծած պայմաններուն, այնպէս որ պատուիրակութեան մեկնումը կը յետաձգուի մինչև 1955, երբ Պ. Այրէսէն միութեան նախագահ Պր. Սահակ Պաղչէճեան ու Փրանսայի շրջանէն Պր. Սարգիս Ալիբունեան կը հասնին Երեւան եւ պաշտօնապէս կը տեսնուին

Հայրենի առաջնորդներուն հետ նոր Հաճընի յարմար վայրը նշանակելու եւ հիմնադրութիւնը արագացնելու համար:

1947էն 1955 ժամանակաշրջանին Կեդր. Վարչութիւնը ստաջ բշած է նաեւ Հայրենասիրական կարեւոր աշխատանքներ եւս, որոնց կարգին մասնաւոր յիշատակութեան արժանի են ներգաղթին արուած նիւթա - բարոյական արձակացութիւնը, կրթական գործին յատկացուած ուշադրութիւնը, վերաշինութեան Փնտր, սիւնքի զանազան շրջաններէ եկած պատգամաւորներու մասնակցութեամբ կայացուցած հերթական համագումարները, եւ այլն:

Նուիրական ծանր պարտականութիւններով առաջընթացող վարչութեան յաջորդական կազմերուն մէջ իրենց գրական մասնակցութիւնը ունեցած են, բացի սկզբնական շրջանի առժամեայ վարչութեան անդամներէն (որոնցմէ շատեր տակաւին կը շարունակեն գործի վրայ) Պ. Պ. Սարգիս Գարեխան, Յարութիւն Պալապանեան, Սարգիս Քէլէյն, Յովհաննէս Պալանեան, Գրիգոր Տումանեան, Գառնիկ Պալասանեան, Գէորգ Կիզիրեան, Տաթ. Գարլո՞ Գալեան, Մանուկ Օփանեան, եւ այլն:

1958ի Մայիսին տեղի կ'ունենայ կանխահաս մահը Հայրենակից Արր. Էօլմէզի, բաղձմեայ խմբադիրը «Նոր Հաճըն» պաշտօնաթերթին եւ նախին Աաննադպիրը Կեդր. Վարչութեան, զգալի կորուստ մը ըլլալով Հայրենակցական գործերուն համար: Անոր կը փոխարինէ Ա. Գրանեան եւ այդպէսով չեն ընդհատուիր վերջին համագումարին դասուորած աշխատանքները: 1958 Հոկտեմբեր Գին, Հայաստան կը մեկնի, ի վերջոյ, նշանակուած պատուիրակութիւնը, որուն անդամներն են, Պ. Ալրէսէն՝ Կեդր. Վարչութեան ժրջան նախագահը՝ Պ. Սահակ Պաղչէճեան եւ ԱՄՆի Գալիֆոնիոյ շրջանէն՝ մեր Հայրենակցական կեանքի բաղձմեայ ղեկավարներէն՝ Ժաստարան Պ. Արման Կիզիր: Իսկ, իր որոշ պատճառով չի կրնար ընկերանալ Ֆրանսայի շրջանի ներկայացուցիչը՝ Պ. Սարգիս Ալթունեան, որ այլապէս երկրորդ անգամ ըլլալով մաս պիտի կազմէր Հայրենիք պետող մեր պատուիրակութեան:

Հոս կ'արժէ բռն անցողակի, որ մեր միութենական գործերուն կապակցութեամբ եղած բոլոր համարողու-

թիւններն ալ, որ յաճախ ընդգրկած են հետուոր երկիրներ մեծածախ կեցութիւններ եւ յարակից այցելութիւններ ու նուիրատուութիւններ, միշտ կատարուած են այդ առաքելութիւնները ստանձնող Հայրենակիցներուն անձնական զոհողութիւններովը: Այս երեսոյթն ինքնին ցոյց կու տայ ճշմարիտ չափանիշը մեր ժողովուրդին Հայրենասիրութեան եւ զոհարելութեան ոգին: Այս առթիւ կարեւոր է նաեւ շեշտել, որ այդպիսի զոհարելող Հայրենակիցները եղած չեն յաճախ շատ ունեւորներ: Ամենայնդէպս սակայն, անոնք ամէնքն ալ միշտ պիտոյցան են պատուով տանիլ իրենց վատահուած հաւաքական գործին ծանր բեռը:

Եւ հահ, սղջ հաճընցիութեան պատուոյ բարձր շահ մանիչը հանդիսացող նման առաքելութիւններուն, անոր փառուոր անցեալին եւ ներկայի բացառիկ պայմաններուն մէջ իսկ սպացուցած դրական Հայրենասիրութեանը հանդէպ՝ Մայր Հայրենիքը կու գայ շնորհել մեզի իր ճանաչուածի եւ պատանդներն անմահ վարձատրութիւնը, 1958 Նոյեմբեր Գ թուակիր իր հետեւեալ Պետական Որոշումը, նոր դարապլուխ մը բանալով հաճընցիներու անյիշելի ժամանակներէ եկող հերոսական զոյապայքարներուն պատմութեան մէջը:

Այսպէս, շնորհիւ Կեդր. Վարչութեան թափած անհաշիւ ճիգերուն ու յարատեւ աշխատանքներուն եւ Հայրենի բարեխնամ կառավարութեան իմաստուն կարգադրութեան իրականութիւն կը գտնայ հաճընցի մնացողին երկար տարիներու երազը, Մայր Հայրենիքի սրբակերտ հողին վրայ հրաշափառ յարութիւն կ'առնէր Տալրոսեան լեռնաշխարհի մէջ ոտիս թուրքին ձեւերովը սղջակէզ եղած նահտասկ Հաճընը:

Աշխարհացրիւ բոլոր հաճընցիներուն սիրուն ու հողին Մայր Հայրենիքին հետ կամբջող այս պատմական իրագրութիւնը աւելի կը խթանէ Կեդր. Վարչութեան Հայրենասիրական գործ ծառայելու եռանդը: Աւետարեք պատուիրակութեան երեւանէն վերազարձին անմիջապէս կը նախաձեռնէ «Նոր Հաճըն Աւանի Արշաւ»-ը, որ շրջանային բոլոր վարչութիւններուն սերտ զործակցութեամբ, յաջողութեամբ կը պատկուի, հանդանակելով երկու միլիոն փեսո:



ՍԱՐԳՍԻ ՎԱՐԵԼԵԱՆ

1961ին տեղի ունեցող 12րդ Համագումարը մանրամասն քննարկել է աք կեդր. Վարչութեան մինչ այդ ծաւարած աշխատանքը, մասնաւոր զնահատանքի խօսք կը արձանագրէ թէ՛ վարչութեան և թէ՛ ալ պաշտօնաթէրթ «Նոր Հաճըն»ի ղեկավարներուն ցոյց տուած երախտարժան գործունէութեան համար:

1963 Փետրուար 16ին իր մահահանգուն կը կնքէ հայրենակից Սահակ Պաղչճեանը, բազմամեայ Նախագահը կեդր. Վարչութեան և ճշմարիտ դրօշակիրը հայրենասիրական հաճընիական գործերուն: Անոր կը փոխարինէ, նախ՝ ստժամարար և յետոյ՝ 13րդ Համագումարի որոշումով, հայրենակից Սարգիս Գարեթանը, որ մինչև այսօր արժանաւոր կերպով կը զլխաւորէ Վերին Մարմինը: 1968ին կեդր. Վարչութիւնը Նոր Հաճըն ուսման հիւանդանոցին նուէր կը զրկէ աստամարտական արդի մեքենաներու սարքաւածք մը, որուն գնման աջակցած է Գալիֆուռիարնակ հայրենակից Պ. Գրիգոր Քէլէշեանը:

14րդ Համագումարը՝ 1967ին, զանազան երկիրներէ կկած պատգամարներու մասնակցութեամբ կը հաստատէ աշխատանքի նոր բլան մը, որ կ'ընդգրկէ Կրթական գործին գորացումը, վարչական ծախփերուն համար մնա-

յուն պլետնէի գոյատոււր, Հանրիկ նահատակութեան յիշատակումն ու Նոր Հանրիկ հիմնադրութեան բուականները միացեալ հանդիսութեամբ տօնելու անհրաժեշտութիւնը: Կը հրահանգէ խմբական այցելութիւն մը կատարել ղէպի Մայր Հայրենիք՝ Նոր Հանրն ուսման 10րդ տարեդարձին առթիւ, նուէր տանելով 10-000 տուրք որուն 5-000ը Գալիֆուռնիայի Վարչութեան կողմէն ԱՄՆի հայրենակիցներուն բաժինը, հոն կառուցուելիք Ազրիւր-Յուշարձանին համար: Կը ձեռնարկէ վերապրող հաճընցիներու միութեանն 1920էն մինչև մեր օրերըր զանազան զարուիներու մէջ ապրած կեանքին ու կատարած գործին պատմագրութեան աշխատանքին, և այլն:

Յաջորդ տարուան աշնան (1968) տեղի կ'ունենայ Ուխտադնացութիւնը ղէպի Հայաստան, զլխաւորութեամբ կեդր. Վարչութեան և մասնակցութեամբ Միացեալ Նահանգներէն, Արժանթինէն, Պրագիէն, Ճրանասլէն և այլ զարուիներէ կկած մօտ 50 հայրենակիցներու, որոնց հանդէպ Մայր Հայրենիքի կառավարութեան, Սփիւռքահայրութեան հետ Մշակութային կապի կամկիտէին և ժողովուրդին ցոյց տուած ջերմ ընդունելութիւնն ու հիւրասիրութիւնը կը կազմէ փաստար էջ մը մեր հաւաքակեան կեանքի պայծառ պատմութեան մէջ:

Այժմ, երբ գրի կ'անուին այ՝ արագ վերելումները, Միութեան Վերին Մարմինը ձեռք տուած է ուրիշ կարեւոր գործ մը, այն է՝ Նոր Հաճընի տեխնիկական ճշգրիտ բարբրու մեծ ֆապրիկան օժտել օթօմաթիւ յղկիչ մեքենայով մը:

Այսպէս, Հաճընի Հայրենակցական Ընդհ. Միութեան յիշգրտական Վարչութիւնը, որպէս լիազօր Գործադիր Մարմինը աշխարհացրել բոլոր հայրենակիցներուն հայրենասէր ու հայրենաէն ցանկութիւններուն, խաղաղ սրտով կը ներկայանայ այսօր պատմութեան առջև ցարդ իր կատարած գործերուն շօշախիլի փաստովը, իրեն վիճակուած նուիրական պարտականութիւնները հաւաքարմարար կատարած բլլայուն անհուն գոհունակութեամբ: Պ. Ալլիս, Դեկտեմբեր 1972



Խմբակային նկարը՝ վարչապետ և ֆինանսական նախնական մանկավարժներ, 1923ին։
 Ուսուցիչ Վախչեան, Գր. Պր. Սյունի Արարատեան, Արմենակ Կարթիկեան, Կարապետ Զոխտախեան, Հայկազուհի
 Փալատյան, Նազարեթ Ճարճեան, Կիրակոս Ռեզեան, Բարսեղյան Փայլապետեան, Նազարեթ Պր. Արարատեան, Արարատ Փառապետեան, Կարգիս Գաբրիելեան, Տիգրան Կարապետեան, Մկրտիչ Պելեգյանեան, Արամ Կրպեղյան։



ՀԱՃԸՆՑԻՆԵՐԸ.
 ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
 ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ
 ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՆՆԵՐԸ
 ԳՈՐՏՈՊԱՅԻ ՄԷՋ

Գրեց՝ ՄԻՍԱԲ ՔԵԼԵԱՆ

1920 Հոկտեմբեր 15ին Հաճընի անկումին մաղապուրծ ազատուղներս մտաւորապէս 410 անձուէր մարտիկներ լեւներ ու ձորեր ճեղքելով, և կրկին կուսելով 15 օրէն հասանք Ճիհան Ֆրանսական դրաման գտաին։ Յաջորդ օրը մեր ղէներըը հուսարելով մաս առ մաս ճամբեցին Տէօրթեօլ և Ատանա։ Այդ շրջանին Կիլիկիոյ ամբողջ հայութիւնը անկողազին աշխատանքի լծուած էր մեծ կղկնի դարձած աւերները մտամբ մեղմացնելու յոյսերով, իսկ անդին ղէմապահան շարժումը օր ըստ օրէ ծաւալելով հայութեան կեանքին ազատանցող զտանդր անխուսափելի կը խուսէր, որովհետեւ Ատանայի Ֆրանսական կառավարիչը կեդրանէն հրահանգ ստացած էր Կիլիկիայէն բաշտիլ և Կիլիկիոյ հայութիւնը կազմին պէս թողուլ թուրքին։

Կաթողիկոստարանը, Ազգային Միութիւնը և կուսակցութիւնները զիմուտներ կատարեցին աչն սպեկուրուն որոնց խաբըր կշխոք ունէր, ինքզինով որ Ֆրանսական դորբը չի բաշտի ու մնայ որպէս հոյատար զերին մարմին, կամ զիւրաքիւն բնծայուի հայութեան որպէսզի միտաին նաշանջլ։ Ինչ կարելի է սպասել... Աւա՛ղ զիստացս անցաւորի։ Եկաւ երկրորդ դաղթակնտութեան հրամանը։ Ժողովուրդը բահրաւ դաղթել զկտի Լիբանան, Սուրիա, Երուսաղէմ, Կիպրոս, Եգիպտոս, Յունաստան, Ֆրանսա, Հիւսիսային և Հարաւ. Ամերիկա-

ները: Արդէն մենք սեղանակէքնք թէ թուրք բարբարոս ցեղէն հաւածուած մաս մը հայրենակիցներ 1912ին զաւով բոյն դրած էին հոս, և 1922ին սկսած Կիլիկիոյ արտադազթը մեզի ալ վիճակուեցաւ հոս, ապա և հերքելիալ Արիւնթիոյի Գորտապա նահանգը: ոչ այսօր ունինք մտաւարպէս յիտենէ աւելի հաճնցի բնամեքներ:

Գորտապա հաստատուած հայրենակիցները կըր նորանոր յաւելումներ Կ'անեման իրենք ալ կարիքը կը դրան հիմնել Հաճնոյ Հայրենակցական Միութիւն մը, ճիշդ այն բախտաւոր օրին որ Գորտապայի հայ գաղութային միութիւնն ալ կազմակերպուելու շքան մը կ'ապրէր:

Աճհրամեշտ էր անոր զօրացման թիւ ու թիկունք հանդիսանալ վտան հայտարահանման, մշակութային, եկեղեցական և հայրենի մարտը աւանդութեանց պահպանումին: Հարկ տեսնուեցաւ որ հաճնցիներն ալ կազմեն իրենց Հայրենակցական Միութիւնը, որուն միջնոցս զարկ տան թէ գաղութային միութեան և թէ ալ զօրացնեն հաճնցիական սիրոյ և միասնականութեան կազմը Հաճնոյ Հայրենակցական Միութեան բոլոր մասնաճիւղերուն հետ: Վսեմ ու նուիրական նպատակներով սոցորումս պարտաճանաչ, հայրենասէր և ազգային գործերու բծախնդիր հայրենակիցներ կը հիմնեն Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը 1925 Հոկտեմբեր 15ին՝ ճիշտ Հաճնոյ անկման թուականի օրը: Հիմնողիւրներն են հանդիսացած Հայրենակից Սեդրակ Շիրամեան, Օհան Կտիկեան, Մանուկ Աղա Փէթլեան, Մարտիրոս Եղեկէլեան, Արբաճաճ Փէթլեան և Վարդիվաւ Եղեկէլեան: Իրենց գործուն մասնակցութիւնը բերած են Վանոս Քոփուզեան, Եղիշէ Փէթլեան, Սարգիս Դարէլեան և Գրիգոր Տէրանեան:

Ըստ տոմարի արձանագրութեան 1930 Նոյեմբեր 30ին բոլոր հայրենակիցները հասարակելով հայրենակից Ենօթիկ Ելիսանեանի բնակարանը, սեղանի վրայ ունենալով հաճնցիական և ազգային ստաճարութեամբ նպատակներ, ուչի ուշով ուսումնասիրել յետոյ հայրենակցական միութեան գարկ տալու և հաճնցիական մթնոլորտ բաւանդելու տաճարութեամբ կ'ընթարեն վարչութիւն մը հետեւեալ հայրենակիցներէ՝ Ենօթիկ Ելիսանեան նախագահ, Օհան Կտիկեան փոխ նախագահ, Եսայի Տաճանեան քարտուղար, Մանուկ Փէթլեան գանձապահ, Քորոս Կորնէլեան փոխ գանձապահ, Եղիշէ Փէթլեան և Գրիգոր Տէրանեան խորհրդակցաններ, վերջիշեալ թուականէն մինչև 1940 գործուն մասնակցութիւն ունեցած են Ենօթիկ Ելիսանեան, Սահակ Ելիսանեան և Եսայի Տաճանեան:

Մեր արձուերոյն սիրուն և շքնուղ Հաճնի անկման սեւ ու շարաչուր թուականը Հոկտեմբեր 15ը որդեգր երախտագրուութիւն ոչ-ճակիցում մեր ճնողներուն, թոյրերուն և եղբայրներուն մինչև այսօր կատարած ենք հարենակցական պաշտամունք, մեր զրիտունկանոյն սոցորութեան համաձայն ալ մասաղին հրատարած ենք Գորտապայի բարեպաշտ հայ մարտիրոսը:

25 տարի շարունակ մասաղի պատարասեցինք և սպասարկեցինք հետեւեալ հայրենակիցներու բնակարաններուն մէջ որոնք սիրաշուար արամաղբեցին հանդերձ բոլոր աշխատանքներով և ծանցրոյթներուն ալ տակաջին ի սէր իրենց սերելիներուն, որոնք նահատակուեցան հայրենիքի ազատարութեան փշաւ ճամբուն վրայ: Չորս տարի Տէր և Տիկին Պալի Չօղանեաններու, ինք տարի Տէր և Տիկին Հաճի Եսայի Կտիկեաններու, Երեք տարի Տէր և Տիկին Սահակեաններու, մէկ տարի Տէր և Տիկին Նաղարէթ Ելիսանեաններու, Երեք տարի Պօղոս Դարբենեանի, մէկ տարի Տէր և Տիկին Ենօթիկ Ելիսանեաններու, մէկ տարի Տէր և Տիկին Քորոս Կտիկեաններու, մէկ տարի Տէր և Տիկին Միսաք Քէլեաններու, ճիշդ տարի ալ Հայ Ազգային վարժարանի և Պաղբնեան սրահին մէջ, որ Գաղութային Միութիւնը ձրիտար մեզ կը արամաղբէ մեր ազգատիրական գործունելութեան համար: Վերջիշեալ հայրենակիցներու բնակարաններուն մէջ սեղի կ'ունենար նաև Նոր Հաճնի Ասանի, Չատիկի տանկատարութիւնները և հաւիթախաղը:

Հայրենիքի ազատարութեան և պատուի պաշտպանութեան համար իրենց մարդկային պարտականութեան ճամբուն վրայ նահատակուող մարտիկներուն, թոյրերուն և եղբայրներուն յիշատակը յաւերմացելու և մեր պարտականութիւնը կատարած ըլլալու համար մասաղարաշխումէն անմիջապէս յետոյ կը սկսէինք յիշատակահանդէսին: Քարողեցին ու խառնեցան հայէջն: Հայրերը Տ. Գորգէն Մ. Վրդ. Քաշեան, Տ. Արսէն Մ. Վրդ. Ենօթիկեան, Տ. Արսէն Մ. Վրդ. Տօլապեան, Տ. Եսայի Տէր Մ. Վրդ. Մուշեան, Տ. Երուանդ Ա. Քնչոյ-Դարբենեան: Բանախոս պարունայք Հայ Գաղութային Միութեան կողմէ Գրիգոր Անանեան, Հ. Բ. Ը. Միսեան կողմէ Ենօթիկեան Մանուկեան: Եկեղեցաւորած Եղբայրութեան կողմէ Երմանիկ Քէլեան, Բողոքական Եղբայրութեան կողմէ Կերակոս Աշեան և Տիկ. Փլօր Աշեան, Գորտապայի ազգայիններէն Աղաթի Բարսեղեան և հայրենակիցներ Կարապետ Պարճաղեան, Եսայի Տաճանեան, Համբարձոմ Չօլապեան և Միսաք Քէլեան:

Մտաղի պարտատուութեան մեր համեմատախլլ թոյրերը և եղ-

բայրենքը ճաշակած ըլլալով մեծ եզրուհի և ութամսեայ զիջազնա-
մարտի դատաւիճակները, որոնքնին այրած, մատաղին օրը՝ աւանց
հրուէք սպասելու, շարան - շարան կու դան սիրալոյսով կամբով,
երկրորդանգամ կամ և ջերմեանով աշխատելու և յարգանքի
տուրք տալու բոլոր այն սիրելիներուն, որոնք նահատակուեցան
խուրք խոմանի պիղծ ձեռքերով: Տիկիները Քշիտու Պոյաճեան, Մա-
րի Տ. Կոստանեան, Ազատուհի Շերտմեան, Հայկուհի Էլիսանեան,
Մարի Եղեկեղեցեան և Ռաբէլ Քէլեան: Հայրենակից Վերտէ Հատուր-
եան, Յովսէփ Քէլեան, Սիմոն Գորատաղեան, Իսահակ Մեծերեցեան,
Արբաշտ Տաղբեան, Վարդեպետ Եղեկեղեցեան, Հաճի Յակոբ Կտիկ-
եան, Համբարձում Զոյաղեան, Յակոբ Օ. Կտիկեան, Անդրակ Պոչ-
լէքեան, Պօղոս Դարբինեան և Միտա Քէլեան: Այն նուիրական
ձեռնարկին իրենց մահն առջ ատրիքն շարունակ ծառայած են
Արբաշտ Փէլէկեան, Տիգրան Տատուրեան Օճան Կտիկեան, Պօղոս
Էլիսանեան և Տիկ. Կոզմեան Փէլէկեան:

Մատաղցու սխալները՝ նուէր, Օճան Կտիկեան և Որդիք, Անդ-
րակ Շերտմեան և որդի, Կոզմեան, Լուսինիկ և Երուանդ Էլիսանեան
կարգերը, Տիգրան Միւրէքեան և Եղիշէ Քէլէկեան: Մեր բոլոր խն-
ջըններուն պիճեթը սպասարկողներն են Անդրակ Պօղլէկեան և Պօղոս
Դարբինեան, բաւական տարիներ մատաղին հաջը կը նուիրէր հան-
գուցեալ Տիկ. Սեմակիւ Զօպանեանը, որ այդպէս ուխտած էր, զա-
նի մը տարի մատաղին կրկնուր նուիրեց թիլիսցի Տէր և Տիկ. Յով-
հաննէս Պետեան: Մատաղը սպասարատու թեան ամենամանր պար-
տականութիւնը ստանձնած է սիրտըն միմշտ այսօր Սարգիս Տելան-
եանը, Գէորգ Տելանեան և Կարապետ Պարճաղեան: Միտեան բոլոր
ձեռնարկներու սպասարկութեան և պարտատու թեան սիրալոյսով ի-
րենց մտանկցութիւնը բերած են Տիկիները Կարին Սահակեան, Արաբ-
աի Մեծերեցեան, Ազատուհի Կտիկեան, Զուպէլ Աղբաղեան, Մարի
Տաղբեան, Քշիտու Տելանեան, Երանուհի Էլիսանեան, Մարիամ Պար-
ճաղեան, Հովսէփեթ Տատուրեան և Օր. Շուշանիկ Տատուրեան: Հայ-
րենակից Հմայեակ Սահակեան, Լուսինիկ Էլիսանեան, Յարութիւն
Պապախորտեան, Յակոբ Խոյճակեան, Ասատուր Պատիւեան և Գրի-
գոր Տատուրեան:

Գորտապաշի Մանուհիլու չի բուսկանանալով հատարական և
լծանական իրախճանքներէ, աւանդական և զեղարուեստական ձեռ-
նարկներէ, սիրով նուիրուեցանք սպօզոուս ձեռնարկներու, որու
կարգին կու գայ մեր պաշտելի ծննդալայր Հաճընի անուր՝ Նոր Հա-

ճըն աւանի անուանով վերակենդանացնելու հարցը մեր Մայր Հայրե-
նիքի մշտադարձ հոգին վրայ, և այդ բազմաճիւղ իրականացնելու մի-
տածով, հանդանակութիւն կատարելու ցանկութեամբ 1960 Հոկտեմ-
բեր Յին զարաքս ժամանեցին Կեղրտուան Վարչութեան նախագահ
Հայրենակից Սահակ Պաղչէճեան, զարաշար Արբաշտ Գրաճեան,
Սարգիս Կարէլեան և Բարսեղ Խոյճեան:

Նախապէս լուր տրուած ըլլալով յաջողօր Կիրակի առաւ-
տուն Թորոս և Յակոբ Կտիկեան, Կոզմեան և Լուսինիկ Էլիսանեան,
Ասատուր Աղբաղեան, Կարապետ Պարճաղեան, Հաճի Յակոբ Կտիկ-
եան և Համբարձում Զոյաղեան հայրենակիցներու օթններով կարա-
ւան մը կազմելով ուղղուեցանք դէպի Ալեքս Կրտսիս Հաճըն Տունի
բարերար Տէր և Տիկին Ահարոն Քըլլարմեաններու օգասուն և պրա-
քատու ծառերով օժտուած հանգստավայրը, ուր գտանք սեղանները
պտարատու ուտելիքներով և խմիչքներով լի: Հնաշէն անմիջապէս յե-
սու մտանճիւղին զարաշար Միտա Քէլեան ժողովը բաղուած
յայտարարելով բացատրեց կաւաքոյթին նպատակը և հրաւիրեց խո-
սելու նախագահ Սահակ Պաղչէճեանը, յետոյ Արբաշտ Գրաճեանը,
որոնք մանրամասնօրէն բացատրեցին և տեղեկութիւն տուին Մայր
Հայրենիքի բարեխնամ կառավարութեան հետ համաձայնած ըլլալու
նին Նոր Հաճըն աւանի անուանակոչուածին մասին, և անմիջապէս
մասնաճիւղին Առնանպետ Թորոս Կտիկեան որոշ դուժարով մը բաց-
ուած յայտարարեց հանդանակութիւնը: Ակնթարթի մը մէջ դոյտցա-
լինելուց հնար յեւտ, Արժանապատիւ Տէր Երուանդ Ա. Քճնի. Դա-
րբինեանի պահպանիչէն յետոյ բոլորս միտոյն լուսնկարուեցանք,
լուսնկարեց հայրենակից Հմայեակ Քէլլարմեանը, Տէր և Տիկին
Քըլլարմեաններու շնորհակալութիւն յայտնելով նոյն օթններով վե-
րապարձանք Գորտապա և ուղղուեցանք Տէր և Տիկին Ասատուր Աղ-
բաղեանի բնակարանը ուր գտանք նաև սեղանները պարտատու ուտե-
լիքներով և լոճիկներով լի: այսպէս դուրսնալի օր մը անցուցինք և
կատարելիք մեր վսեմ պարտականութիւնը:

Գորտապաշի Մանուհիլու ջանացած է և կը ջանայ միշտ վտա-
պահել մեր ծնողներէն մեզի ժառանգ մնացած հիւրասիրութիւնը և
յարգանքը, մտնուածք արտասահմանէն եկած հայրենակիցներու
հանդէպ, որոնք պատանական թէ անպատան կերպով բարեբախտու-
թիւն կ'ունենանք մեր մէջ ունենալու և վայելելու անոնց ներկայու-
թիւնը դոնէ քանի մը օր:

1963ին հաճընեակեան համալուծարք իր աշխատանքները լրացու-

նեկ անձիւսպէս յետոյ քաղաքս ժամանց հայրենակից Տէր և Տիկին Սարգիս Ալիբունեանը իրենց ազգականները, բարեկամները և հայրենակիցները առանելու, որոնց կ'ընկերանար Պուլէնոս Այրէսէն մեր սիրելի և համակերկի հայրենակից Գարուսթեան Պայապանեանը: Այս պատահական հիւր հղարայններուն ի պատիւ Մասնաճիւղս ճակերոյթ մէջ սարգիս Ալիթա Կրտսեա Տէր և Տիկին Միհրան Էլիզգեաններու օգտուան և ճաշակաւոր հիւրանոցը ուր ամէն բան ատուտ էր սեղաններուն վրայ, բովանակաւոր, երգեր և մտայնաճիւղներէ յետոյ Մասնաճիւղիս բարսուցար Միտաք Քէլեան նախ ներկայացուց հայրենակից Սարգիս Ալիթունեանը և ըստ թէ նախկին Հաճոյն թերթի հիմնադիր և խմբագիր, նոր Հաճոյն տաւերի հիմնադիր, Թրանսալի պատգամաւոր և Պէլլուրթի երկսես երիտասարդաց միութեան այ պատուոյ նախագահն է, որ եկած է հոս առաքելութեան ի համար, և այլ առաքելութեան նպատակը ինչ որ այ է կը վերապահենք իրեն օր ինք ըսէ, միայն մէկը դիրք սիրելի և մեր նոր սերունդը սիրելի չի պարբերան մեր սպասար յոյսն է: Նոյն ուղղութեամբ նաև արտասայակեան հայրենակիցներ Եսայի Տուսանեան, Կարապետ Պարճապետ, Համբարձում Զօրպետ և Գարուսթեան Պայապանեան:

Վերջին խօսքը տրուելով հիւրին, նորհակալութիւն յայտնելէ յետոյ գեղեցիկ կերպով քաջատրեց Պէլլուրթի հաճոյնիութեան ապրելակերպը, անոնց կատարած նուաճումները, երիտասարդաց միութեան համարձակցութիւնը կրթութեան, սիրտի և գեղարուեստական մարզի վրայ անոնց ձեռք բերած յաջողութիւնները, հայրենասիրութեան չարանիչը ոչ թէ միայն հաճոյնիութեան այլ ամբողջ հայրենութեան պատիւ կը բերէ հետևարար աւելորդ չեմ նկատեր բոլոր թէ ևս եկած եմ այդ երկսես երիտասարդաց միութեան սիրտի պիտոյցները զինչու համար ձեզմէ հղարայնուն սմանդակութիւն մը խնդրեալ: Իր յետոյ եմ թէ չգիտի զիտար ձեր լումաները այլ սպասար խոստացոյ մեր սրտահատորներուն: Ծափահարութիւններու և կեցցեաներու տարաբնի տակ սկսաւ հանդանակութիւնը, հազիւ կէս ժամուան մէջ զոյցացաւ ժամուանը եօթը հազար փեսա, խրախմանքը լրանալէ յետոյ յոյրս միտաին ուղղակեանք Ալիթա Կրտսեայի գերեզմանատանը, մեր յարգանքի տուրքը ատուտ հոն ննջող Հաճոյն ութամեակ զիցացանամարտի մարդիկներէն Թորոս Պայապանեանի, Ասաբէլ Մոխեանի, Պօղոս Եօրճեանի և Գրգարեղեանի:

Հայրենապէս հետևեալ հայրենակիցները՝ ինչպէս ուրիշ կադմակերպութիւններու, նոյնպէս ալ հաճոյնիական սուրբ և նուիրա-

կան պարտականութիւն կատարած ըլլալու համար ասանց սեւէ րան նկատի ունենալ ուղիւնստներ ճեղքելով Պուլէնոս Այրէս միութեան համալսարանին մասնակցող և իրենց աշխատանքները լրացնել յետոյ ըլլալ չհրախելալ և ոչ հրաւերով Գորոսոպա աշխարհ պատգամաւորներ Պրաղիէն Միտոն Կարտան, Սամուէլ Ծանիկեան, Թրանսալի Յովհաննէս Պահարեան և Սարգիս Ալիթունեան, Գայիֆուսիսալի Կարապետ Կէրթմէնեան, Մասուէլ Էլիֆանեան, Արման Կիզիբեան, Կարապետ Կէրթմէնեան և Կարապետ Ալպարեան:

Հետևաւոր վայրերէն իրենց սրտահատորները և ազգականներէ տարիներու կարօտը աննելու ցանկութեամբ Գորոսոպա աշխարհ հայրենակիցներ, Հոգեւն՝ Տ. Եաւաք Ծ. Վրդ. Գույումճեան, Տ. Գարուսթեան Ծ. Վրդ. Մուշեան, Սամուէլ և Աւետիս Գույումճեաններ, Հիւսիսային Ամերիկայէն Տէր և Տիկին Արշամ Գեղամ Գրանեաններ, Տիկ. Ալիս Գրանեան Պօլսոնեան, Տէր և Տիկին Արտաններ, Միտաք Մանիսոնեան և Տիկ. Երանուշի Կիզիբեան Մուշեան: Թրանսալի Քաչեր և Աւետիս Զայիֆեան հղարայններ, Կարապետ Գարալոյմհանեան, Պրաղիէն Սամուէլ Ծանիկեան, Սամուէլ Կիտալէլեան, Տէր և Տիկին Պետրոս Զայեան և զուտարք Տիրուշի, Տէր և Տիկին Կարապետ Զօրպետեան, Գարուսթեան և Տիկին Մարի Թաթուլեան:

Վերջինեալ բոլորներուն և հղարայններուն ի պատիւ մասնաճիւղս զատ զատ ճաշակեղաններ տարբեց, Պարբճեան սրահին, Հայ Աղալային վարժարանի, Պուլսայի Աղոմբին, Սիբիոյ Լիցանէզի պանդոկին մէջ, Տէր և Տիկին Հմայեակ Մահակեաններու, Տէր և Տիկին Եովսէփ Էլիֆանեաններու, Տէր և Տիկին Նապարթ Էլիֆանեաններու, Տէր և Տիկին Կարապետ Պարճապետներու, Տէր և Տիկին Համբարձում Զօրպետներու, Տէր և Տիկին Թորոս Կտիկեաններու, Տէր և Տիկին Ասատուր Աղարպետներու և Տէր և Տիկին Միտաք Քէլեաններու քնակարաններուն մէջ, ուր հղան բովանակաւոր, երգեր, արտասանութիւններ և մտայնաճիւղներ: Մեր բոլոր ձեռնարկներուն խմբերկնքով, մենեղներով և արտասանութիւններով իրենց մասնակցութիւնը բերած են Տիկիններ Աղատուշի Կտիկեան, Էլիզա Կտիկեան Գարբեան, Մարի Եղիկէլեան, Լուսիս Եղիկէլեան Զէլասանի, Կարապետ Պարճապետ և Ալոյ Պարճապետ, խրախմա նքներուն տակի փայլատուած են հայրենակից Կարօ Զօրպետեան Զուլթալով և Լեւոն Մահակեան մանտոյլներով:

Բոլոր ձեռնարկներու յաջողութեան համար իրենց նիւթական սարքարդական օժանդակութիւնը շնորհակալութեամբ երկսես երիտասարդները,



Գորտուպայի Մամանիդիզին Վարչութեան կազմը 1958 թ .

որոնցմէ շատերը ամուսնացած հայութեան և հաճընցիութեան վախճ արեղար բոյներ կազմած են :

Պուէնուս Այրէսի Հաճնոյ Հայրենակցական Միութեան Վարչութեան հետեւեայ Հայրենակիցները՝ Սահակ Պաղչէճեան, Ղազարոս Արսլանեան, Պօղոս Պալասանեան, Բարսեղ Խօրէճեան և Կարապետ Չօղապեան, Երբ ժամանեցին Գորտուպա 1947ին նոր Հաճըն աւանի շինութեան համար հանդանակութիւն կտարելու Մամանիդիզու ճաշատեղան մը սարկեց նուպայի Ահուսթին մէջ : Հանդուցեայ Սահակ Պաղչէճեան 1945ին Մայր Հայրենիքէն վերադարձին երբ Գորտուպա ժամանեց իր կողակցին հետ միասին զեկուցում տուաւ, թէ յատեղան մը սարքեցինք Մամուկ Փէթլեանի քնակարանին մէջ :

Հաճնոյ Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը Հիւս . Ամերիկայէն Պուէնուս Այրէս փոխադրուելէն ի վեր մինչեւ այսօր զուժբուժած պատգամատրական համապատարին, Գորտուպայի Մամանիդիզու որդէս լեաղօր պատգամատրներ մասնակցած են հայրենակիցներ, իններորդ համազումտրին Կաղարէթ Էլիֆանեան, տասներորդին Կարապետ Պուրճապեան և Մարտիրոս Եղեկէլեան, տասներկերորդին Վարդեմուս Եղեկէլեան, տասներկուերորդին Համբարձում Չօղապեան, Պօղոս Էլիֆանեան և Հաճի Յակար Կուրկեան, 13րորդին Կարապետ Պուրճապեան, Վարդեմուս Եղեկէլեան, Համ-

բարձում Չօղապեան և Միսաք Քէլեան, 14րորդին Կարապետ Պուրճապեան և Յովսէփ Էլիֆանեան :

Գորտուպայի Մամանիդիզու սարած է նաեւ Եղալի տշխատանք մշակութային գեանի մբայ, նպասակի յարմարադոյնը ընտրելով գեղարուեստը, սարած է թատերական ներկայացումներ, որոնց կարգին Չօրափար Անդրանիկի փէլէսը զեկազարութեամբ Միսաք Քէլեանի, իսկ Երբ Հաճըն աւանի երկրորդ տարեդարձի տրթիւ զուս հաճընցի Երեսուն Երկուս Երեսասարդներով ներկայացուցինք երգով ու պարով ժողովուրդին հաճելի հուշակատար Անուշ օմերէթը զեկազարութեամբ Կարապետ Պուրճապեանի, յուշարարութիւնը՝ Եսայի Տուժանեանը :

Մեր մասնակցաները՝ բժիշկներ Մոսիս Գարրինեան, Սամուէլ Տուժանեան, այս տարի վկայական կը ստանան Սիման Խօրէճէլեան և Սուան Էլիֆանեան : Հաշտախալ՝ Ետուարտո Կաթիկեան, որ յուսատեան արթինը Գորտուպա նահանգի Երեսօրտանական ժողովի բարտուպարութիւնը կատարեց : Հաճընցիութեան, աղպատէր, հայտատու Երեսասարդներ Են բոյսրը որոնք ոչ միայն հաճընցիութեան այլ նաեւ Գաղարթային Միութեան կը բերեն իրենց օժանդակութիւնը և ամէն կերպով կ'աշխատին օգտակար հանդիսանալ :

Հանրային գործերու մէջ թիչ չէ թիւր նուիրելունքուն, որոնք միտք, բրտինք, ջանք և զոհոյթութիւն չեն խնայեր այլ աղպային նպատակի հետազնոյման մէջ : Գորտուպայի Հայ Գաղարթային Միութեան հիմնադրութեան, Եկեղեցույ պայժատութեան և նոր սերունդի գատարակութեան զործին մէջ նուիրելունք են հետեւեայ հայրենակիցները .-

Սկզբակ Շիրտմեան հիմնադիր, Աբրահամ Փէթլեան նախագահ Երկու տարի, Մամուկ Փէթլեան փոխ նախագահ Երկու տարի, Թորոս Խօրէճեան նախագահ Երկու տարի, զանճաղահ Երկու տարի, Թորոս Կաթիկեան փոխ նախագահ Երկու տարի, Կաղարէթ Էլիֆանեան նախագահ ու թը տարի և փոխ նախագահ Երկու տարի, Անուար Աղբապեան բարտուգար տասնը վեց տարի և փոխ նախագահ Երկու տարի :

Նախագահ Կաղարէթ Էլիֆանեանի և բարտուգար Ասատուր Աղբապեանի օրով զնուկեայ Աղպային Մեհրապեան վարժարանի շէնքը նաեւ հոյակական զեկեզմանքը : Երեսօրտան Միսաք Մարապեանի միջնույս, փոխ նախագահ Ասատուր Աղբապեանի օրով և նրա ջանքերով Հայ Աղպային վարժարանը անուանակոչուեցաւ Ինդորբորտոս

Մանուէլ Պելիքրանօ անունով որ Արժէնթինայի Ազգային դրօշը հնարող Զորավարին անունն է :

«Շարժում» շարժաթաթերթի և «Լոր Հանքն» ամսագրի խմբագիր Արքանձմ Խոյճէզ մտաւորապէս եօթը տարի ուսուցչութիւն ըրաւ Հայկական Ազգային վարժարանին : Տիկ. Հայկուհի Էլփանեան նոյնպէս սասը տարի վարժուհիութիւն ըրաւ նոյն վարժարանին և երկու տարի ալ Փուէպլօ Սան Մարթինի հայկական վարժարանին, որ դադարեցան Միութեան հովանաւորութեան տակ էր :

Տէր և Տիկին Յովսէփ Էլփանեաններու դուստրը Օրդ. Մարիա ծնած է Գորտուպա հայկական և տեղական վարժարանները բարձրագոյն նիւերով յաջողութեամբ աւարտելէ յետոյ կը շարունակէ իր ուսումը Լեւոնա՛շ Կոնստանտինոպոլ և կը ստանայ վարժուհիի տիպոսը, որքան հմուտ է տեղական լեզուին, նոյնքան հմուտ է մեծաքանչ հայ լեզուի, վեց տարի է կը ծառայէ Հայ Ազգային վարժարանին, շորս տարի ուսուցչուհի և հիմա ալ երկու տարի է որ նշանակուած է անօրէնուհի :

Տէր և Տիկին Թորոս Խօրնէքեաններու դուստրը Օր. Եսթեր, նոյնպէս ծնած է Գորտուպա, հայկական և տեղական վարժարանները բարձրագոյն նիւերով յաջողութեամբ աւարտելէ յետոյ իր ուսումը կը շարունակէ Գոնստանտինոպոլի Իլյաքիմիալ և Մուսիկա և կը ստանայ դաշնակի փրոսֆէսորա տիպոսը, որքան հմուտ է տեղական լեզուին, նոյնքան ալ հմուտ է հայ մեծաքանչ լեզուին, այսօր երկու տարի է որ Հայ Ազգային վարժարանի աշակերտներուն շարքիւ երկու անգամ դաշնակի դաս կու տայ ձրեքտր, ուսումը կը շարունակէ Escuela de Bellas Arts Universidad de Córdoba.

Արժանապատիւ Տէր Երուանդ Ա. Բ՛նչ. Գարբինեան իր անաչար և անկողմնակալ քնաւորութեամբ սիրուած ու յարգուած ըլլալով 25 տարի դպրութեան ծառայելէ յետոյ Ֆիլիքսեան աննպատա պոյժաններու հետեւանքով աշխատանքի դադրած է, և որպէսզի դպրութեան անհոգի չի մնայ փոխ նախագահ Ասատուր Ազրաղեանի օրով դադարեցան Միութեան Վարչութիւնը Երուսաղէմէն քերել տուաւ երեսուստրը, խմբահ, եկեղեցիին և դպրոցին թծախնդիր Հայր Սուրբ Հօգեւոր՝ Տաթևու Վրդ. Գարբիսեանը որ այս տարի Հոկտեմբեր 35ի մեր հոգեհանդեսին քարոզից ինչպէս ականատես մը :

Ս. Էմբրանոյս դահակալը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետի Գորտուպա այցելութեան առթիւ եղած փառաշուք ընդունելութեան Յանձնախումբին մաս կը կազմէին հայրենակիցներ

Թորոս Կաթիկեան, Ասատուր Ազրաղեան և ճարտարապետ Ստեփան Խօրնէքեան :

Հայրենակից Թորոս Խօրնէքեան բուսական տարի է որ Հ. Բ. Ը. Միութեան Գորտուպայի Մանուհիպին նախագահն է :

Հայ Գաղութային Միութեան Եկեղեցաւորած Տիկնաց Միութեան, գանձապահուհին է Իսկապէս դործունեայ Տիկին Ալատուհի Կաթիկեան :

Ալթա Կրտսեայի դպրութիւն և «Ա. Խաչատուրեան» վարժարանի հողարարձութեան մէջ կը գործեն գոհարբուպ և հիմնադիր հայրենակիցներ նախագահ Մարտիրոս Եղեկէլեան և գանձապահ Մանուէլ Զօրաղեան : «Ա. Խաչատուրեան» վարժարանին բուսական տարիներ ուսուցչուհի էր Տիկ. Էլիզա Օղանեան Եղեկէլեանը, նոյն զպրոցի աշակերտներէն ուսած ու կրթուած Օր. Սրբուհի Գալայեան վարժուհին նոյն զպրոցին :

Գորտուպայի Գաղութային Միութեան գոհարբ վարչականները Եկեղեցիի կից ստանձնաբարանի յարժար շէնքի մը գնումին կազմուեցաւ հանդանոցի յանձնախումբեր, որոնց մէջ կը գործեն հայրենակիցներ Կալալթ Էլփանեան, Կարապետ Պորճապետ և Վարդէլաւ Եղեկէլեան :

Վերջաշեւ մեր բոլոր հայրենակիցներէն ոչ մէկը վարձատրութեան չէ ստացած իրենց կրտսարած աշխատանքներու փոխարէն, որով որպէս վարձատրութեան և գնահատանք բոլորին ալ անխորհր կը մագրթենք սուղջութիւն, ուժ և կրօնով որ մէշա պատրաստ ըլլան և տրամադրութեան ունեան ծառայելու Ազգին, Հայրենիքին և Հանքեցիութեան ընդհանրապէս :



ՄՈՆԹԷԿԻՏԵՈՅԻ

ՀԱՃԸՆՅԻ

ԳԱՂՈՒԹԸ



Գրեց՝ ՍԱԳԻՍ Յ. ՄԻՃԵԱՆ

1920 թ. Հաճընի անկումով Կիլիկիայի հայութիւնը յուսահատած էր: Բայց զխանադիտական զապանիքներուն անհաղորդ զեկափարներ և ժողովուրդէն մաս մը հուսար կը սնուցանէին թէ յետ պատերազմեան միջնադարին զաշինքնը ի զօրու մնալով Կիլիկիոյ մէջ օճախ մը կը տրուէր վտէր դաշնակցից: Այդ խորհելակեանքով օրհասանք մը կար դեռ թէ վերադարձ և Աստանարնակ հաճընցիներով կարելի պիտի ըլլար վերաշինել Հաճընը:

Կիլիկիոյ պարպումը 1921 թ. յուսահատ մեր ժողովուրդը նոր զառն փորձութեան առջև կրաւ: Հայաստան հետու էր, բռնեցինք անորը Համբաներ առանց ծանօթ ըլլալու պայմաններուն երկիրներուն որ կ'երթայինք:

Ջարդերու սարսափէն խուճապահար ժողովուրդի մէկ մասը մեկնեցաւ: Յունաստան, մաս մըն ալ Լիբանան, որ կը հովանաւորուէր Ֆրանսացիներէն:

Գաղթականութեան տարիներուն վարժուած էինք արար ժողովուրդի կենցաղին: Մաս մը գացին Տամակոս և Հայկ: Մնացողները բնակեցան վրաններու և սախտակաշէն անակներու մէջ:

Հապար անպաժ կողոպտուած և անիրուսուած հայերը ապականած իրենց ֆիզիքական ուժին, բարոյական կորույթին, արհեստ ու արուեստին, ոչ մէկ տեսակի օգնութիւն խնդրեցին հիւրընկալ ժողո-

վուրդէն և օտարներէն: Ապրեցան զրկանքներով՝ աշխատասիրութեամբ և անզնայորժ տոտրինութեամբ:

Հօս ալ չի պատկուեցան տարածայնութիւնները այն մասին թէ մեծ աղքեքու որոշումով պիտի վերադառնայինք Կիլիկիա: Պարզուեցաւ որ երկկի թշնամիները իրենց զբաժով ու միջոցներով կը դիմելին թուրքերը ի հեճուելու հայ ժողովուրդին: Յուսահատ հայ գաղթականը մեկնեցաւ հետուներ՝ Ֆրանսան, Հիւսիսային և Հարաւային Ամերիկաները, ուր մարդասէր ժողովուրդներուն մօտ դասն ապաստան հիւրընկալութիւն, ապաստան:

1926 թ. ստաջին օրը երկու հայ բնասնիք «Արմանցարա» նաւէն իջնար Մոնթէվիտէօ, Ռուսիայի հանրապետութեան մայրաքաղաքը: Նաւուն մէջ տեսած էի երիտասարդ հայրենակից Ս. Իգմիրեանը: Ան դնաց իր ծանօթներու հասցէին, իսկ մենք գաղթական (Թմիկաւսիս), որու մասին գաղափար չունէինք: Հասուն տարիքով մէկը ազատ թրքերէնով մը յայտնեց թէ իր ասն մէջ՝ վճարովի, մէկ քանի օրուան համար հիւր կ'ընդունէր: Ես և Տիկինս իր հետ միասին մըտածք իր ասնը փոքրց Գոյօն՝ մօտիկը մաքսատունին: Մէկ զիշեր մնացինք խորհուրդներու մէջ թաղուած:

Առաւօտուն դարձանք մը ունեցանք: Գիծացի սենեակի դասն ասն տէր և տիկին կըր զգումք մը մէջէն մետադէ խողովակով մը հեղուկ մը կը ծծէին: «Վատ մարդու ասն եկած ենք» մըբայց Տիկինս, հաշիշ կամ տարրեր թմբեցայիշ մը ըլլալու է: Տան տիկինը մօտեցաւ մեզի, պուէն տիւ, բարի յոյս մը առել վերջ տիկնոջն երկարեց ձեռքի զգումք՝ «Պոյս մտթէ իջ» բտելով: Մեր քաղաքավար մեթմուսին, փոքր զատիկն առաւ, որ իր կարգին սկսաւ ծծել: «Վերնասակար բան մը ըլլալու չէ» ըսի Տիկնոջն մարտելով:

Տան Տիկինը բացատրեց՝ «Մտթէն բնիկ ժողովուրդին նախահայն ու նախնեթրեթին սուրճն ու թէյն է, որ կը հրամցօտի նաև հիւրերուն»:

Բակէն լսեցինք կանչ մը. «Գնալով իկիր պապա»: Ինծի ծանօթ հայրենակից Միսաք Քէքրիբեանն էր: Եկած էր մեզի տանելու: Արմարտու իմացուցած էր մեր ժամանումը: Կէս ժամ վերջ Սերբօ էինք Աւազ Միլիտանեանի և Միսաքի խանութի ետեւը ասանք: Ես հայրենակից մը Տիկինս ալ իրեն պէս նոր հարս ընկեր մը: Ռուսիացանք: Իրիկան Պրօ. Երուանդ Քառամեան և ուրիշ հայրենակիցներ բարի զալուստի եկան: Հաճընի բարբառ օդը կը թնթացնէր, հարցումներ իբար յաջորդող: Հանդուսեցաւ Աւազը աշխրուս նայելով ըսաւ ըս՝

նոր հարստ չափել չի գիտեր որ քեզի հում գիլլուն մը կերցնեմ»։ Սրմբատը բեւեռը սաթեց՝ «ձիւ ու ձուար բերէ՞ք բռնոյ՛լ։ Սկզանի կերակուրն երան և զինիի գուսաթնեալուն կ'ընկերանալին մաղթանքներ, պատմալան Հաճընէն զրուսպներ և մեզի բաջարանքներ։

Մանթլվիտէն ասաջին եկող հաճընցին եղած է երեսանց Բաւասեան – Գրղեաշարեանը 1922 թ. ապա իր մեծ կորույրը ձիւան, յետոյ եկած են ազդակները Տիգրին Անթառամ Թուրքոյիկեանը Տիրան գուսակոյ և ամուսնացած ազջիկը Արմենուհի Չարմանեան իր ամուսնոյով, Կարապետ և Առաքել Գոճեան կորույրներ, Սարգիս Ռրղեան, Միսաք Քէլքիբեան, Յովսէփ Պազուրուսեան և հայրը, Աւագ Մեխմանեան, Յովսէփ Քէսեան։ Մեղմէ յետոյ եկան Պրն. Ղազարուս Արարանեան, Ստեփան, Գրիգոր, Միսաք և Գրիգոր Ս. Քէլքիբեաններ, Աւետիս և Ահարոն Պէլեան կորույրներ, Իսկենտէր, Գրիգոր և Մերսիան Կելքիբեան կորույրներ, Մանուկ Հաստանեան, Յովսէփ Կոթիկեան, Առաքել Տուրէնեան։ 1927-ին սկսեալ Յովսէնէն հայկազեան, Յովսէնէն Գոճողապեան, Գրիգոր Մերմեյկեան, Արմէն Տուժանեան, Լեւոն Տ. Կիրակոսեան, Յարութիւն Չոճուզեան, Պաղտ Մայրեան, 1930-ին եկան Հարարձում Սիմոնեան, Կարապետ և Միրաբեան Հաննէսեան կորույրներ ու ծնոյրը, Յովսէփեան Գայեան, Իսկենտէր Քէլքիբեան, Գարեգին Կէլքիբեան, Սարգիս Կոթիկեան, Մարտիրոս Սամուէլ Գուսեան կորույրներ, Արրուճաճ Ձիւրիբեան, Մանուկ Կոթիբեան, Գալուստ Գույումեան, Յովսէփ Քէլքիբեան, Յակոբ և Մեարտը Ազրամանեաններ, Փանոս Կակոսեան, Գրիգոր Պալասանեան, Կարապետ Գոսպեան, Կարապետ Չօղազեան, Սեդրակ Ազրապեան, Սիմոն Տուժանեան, Եփրեմ Կիրիբեան, Վարդէփա Տէվրեան, Վարդան Իգմիրեան, Միմոն Քէլեան, Աւագ ձուսուրեան, Սարգիս Քէլքիբեան – Ղազարուս – Չարուհի Գրղեաշարեան – Քէլքեան, Տիգրին Թոսեան Չէքիբեան և Աւագ Թումուրեան, տարիներ յետոյ Պ. Այրէսէն Մանուկ Գոփուշեան։ Այն ատեն հայրենակիցներու մեծամասնութիւնը 25 – 30 տարեբի ամուսնացած էին։ Նոր թէ՛ հին կերպերու մէջ կը տիրէր սիրայի բարարութիւն անխորթ, երեկունները զիրար կ'աշխուհէին, երեմոն ասն մը մէջ տար հէր կը պատուէր, միխթարութիւն տալ հուստացեալներուն։ Հեղձեալ կը շատանար խօսակցութեանց ճիւղը միշտ անմտաց ծննդապաշարը, ոչ ոք մտադիր էր ստարութեան մէջ մնալ, կը հուստացար թէ մօտ ապրոյցային ամէկնը միտցած պիտի երթայինք Մայր Հայաստան, ուր պիտի կանգնէր նոր Հանրընդ։ Գժարատարը այդ ցանկութիւնը չերականացած,

մեղմէ շատերը մուրաբը կուրծքերուն ասի մահացան, մնացեալներն ալ այժմ ձեռքացած նոր Հաճընը չի տեսած պիտի մեկնինք այս աշխարհին։

ԳԱՎՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀԱՃԸՆՅԻՆԵՐՈՒ ԵՄԱՂՍՈՒԹԻՆԵՐԸ

1927 թ. Մանթլվիտէն ժամանած ըլլալով ներքս Վրդ. Տօլապեան, սկսած էր ասն մը մէջ պատարազ մատուցանելով հոգեւոր միխթարութիւն տալ ժողովուրդին։

Ռերուպիւքս Արիւնթիմա փոքրցի հայ աղուժքի մէջ դուժարուած ժողով մը, որուն նախածնունդութիւնը փերցուցած էին Ս. Միսեան և Չէքիբեան ապասէր անձը. քնտրեց սոճեալ վարչութիւն մը զորուժայր մարմին անունով։ Յաջորդ տարով մը Կրեախ փոքրցի Բոյան սրահին մէջ կազմուեցաւ Մանթլվիտէնցի ասաջին Գաղութային Միութիւնը, որ մինչև հիմա կը շարունակէ Կեղրոնական Վարչական Խորհուրդ անունով։ Ասաջին զորքը կըստ շէնք մը զնկ էրբիւ եկեղեցի ու զարդ մը բանայ և զպրօցներ հիմնել այն թաղերուն մէջ, ուր սկսան հայեր կեղրոնանալ։

Գաղութային Միութեան ասաջին վարչականը եղաւ հայրենակից ձիւան Բաւասեանը, զպրօցներու հարարարձու հայրենակիցներ Ստեփան Քէլքիբեան, Լեւոն Տ. Կիրակոսեան, Կարապետ Չօղազեան, Յովսէփ Քէսեան, Փանոս Կիրակոսեան, Իսկենտէր Վարդեան և Սարգիս Միսեան։

Մանթլվիտէնցի մէջ հաճընցին հոսանիւր էր ազդային զորքերու ասաջնորդ։ Աղուժներու մէջ ալ զյիսուար աշխատողները հաճընցիներ էին։

Տարիներու տեւողութեան Գաղութային աշխատանքի զաւտը և պարտականութիւնը ընդարձակուեցան զպրօցներու հոգեւորով։ Մեր կողմէն վարչական անգամ ընտրուեցաւ Ստեփան Քէլքիբեան, անոր Պ. Այրէս փոխազրուելուն շնորհեց Սմբատ Իգմիրեանը 1941–1964 տարիներուն։

Հ. Բ. Ը. Միութեան հիմնադիր և վարչական անգամ եղած է հայրենակից Յակոբ Ազրամեան, պատկերազմ տարիներուն շրջանի մը համար վարչական եղաւ Սարգիս Միսեան, որ ծառայեց հանդանակութեան զորքին շնորհմանը։



Ա. Ն. յատաստմի մէջ Նոր Համրի երկրներու ցամախ բնամբ ցայցամբ
 բնիկ- մարդիկ համրեցիմներու խմբամխարք - Մոսկուէի 1946:

ՀԱՅԵՐԵՆԱԿՑՈՒԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԵԱՆԲԸ

1927ին ունէինք բուէյով ընտրուած Հայրենակցական Միութեան վարչութիւն մը, որուն հասնոյն ու ծառայութիւնները բարի նախանձը շարժեց տարբեր բազմաբնիկներուն: Մտաւշոյններ, Անտաղեցիներ և ուրիշ շրջաններու աղայիներ ալ կազմեցին իրենց համասուն Հայրենակցականները:

1930ին, հակասակ անոր որ շատ մը Հայրենակիցներ ցրուած էին բազաբի գանաղան շրջանները ամէն Կիրակի Հաւաքայիներ պահուս շէին, միշտ կը համախառնէինք թէյանեղաններու և գաղապցացու-թիւններու մէջ հիացնելով աղայից եղբայրները: Մեր հոշակը հասած էր Պ. Այրէս, նոյնիակ մինչև հետաւոր Լիբանան:

Միտեան տեսական և գործունեայ վարչականներ եղած են 1927-44 շրջաններուն Հայրենակիցներ Սոսիական Քէլքիբեան, Իսկէն-ակը Վարդեան, Սարգիս Միսնեան, Լևոն Տէր Կիրակոսեան, Սարաւ Իգմբրեան, Վարդեմու Տէյիբեան, Առաքել Տուրնեան, Կարապետ Չոպուչեան, Յովսէփ Քէնեան, նոյնպէս Մանուկ Հաստանեան, Յակոբ Աղբամանեան, Սարգիս Կարէկեան, Վարդան Իգմբրեան: Առաջին շրջանին հանդուցեալ ձիւան Քասամանեան, Վերջինին հանդուցեալ Գրիգոր Ս. Քէլքիբեան: Անդամներէն մտա մը մահացած են, շատեր ձերութեան օրեր կ'աղբին: Բոլորին սրտին մէջ ի գորտ է աղայութիւնը և յարգանքն ու յիշատակը մեր անմասնաշիծ ծննդավայր Հաճընին: Թշուառ Հայրենակիցներ չունինք: Բոլորն ալ բնասմբքի և գաւակներու տէր, թէ կ'աղբին խաղաղ հարալ աշխատանքով: Ահա ծամանութեամբ նոյնարտիստաններ, կան տարբեր գրապնունքի տէրեր, շատերուն գաւակները անցած են գործին գրտիք:

Մեր գապութը, առհասարակ բարձր ուսմանց ուսանողներ չունեցաւ: Մեր համայնարանական գաւակները հանդիսացան Յուկոր Ս. Միսնեան, բիմխաղէտիններ, Քենտրիսա Ի. Վարդեան, Տարտարապետ, Մանուկ Պ. Մուկեան, նատար (էպիսկոպոս), Անահիտ Ս. Միսնեան, փաստարան, Իգուպէյ Ս. Վարդեան և Ա. Իգմբրեան, նատար:

Նոր սերունդի անդամներէն ամանք կը խտին հայերէն, ամանք կը հասկնան հայերէն, ուրիշներ ոչ կը հասկնան և կը խտին մայրենի լեզուն:

Մեր Միտեան նախանձիքի գիրքը կը պարտէինք համերաշխ, անխտարակուն և եղբայրական գործակցութեան: Համախտարհային երկրորդ գաւակերպմին շատ մը մրաջան անդամներ փոխադրուեցան Պուէ-

նուս Ալբրէս, պոետիկա մեր քանակը և եռուն աշխատանքի թափը նուսկարը մը այլ պատճառներով: 1953ի Վարչութիւնը ջանաց ամէն զնով վառ պահել սէրն ու համակրանքը հանդէպ Հայրենական սրբութիւնները: 1955ի Վարչութիւնը սկզբ շատաւ համար ապակեղրոն ձգտումներուն կարգ մը անդամներուն յուժուած յայտարեց: Այդ վարչութեան անդամներէն Պրն. Սարգիս Կոթիկեան, հաստատուր հայրենակից, ամէն ասրի Հոկտեմբերին հպեհանդիսա կատարել կու տայ նահատակաց յիշատակին և կը հուսաք ճեղք Հաճըն թիւրթի բամենդիները ծառայած ըլլալու փոփոքով իր ծննդավայրին անունը պահող թիւրթին:


Մանկէվիտալի հաճընցիներուն հայրենաշէն ծրարքին գործակցութիւնը համեա և սակայն նշանակելի եղաւ: Մանակից հայրենակիցները եղան անփերայած հայրենակներ և նուիրեալ հաճընցիներ: Կրցան իրադաշտօրէն ըմբռնել պատմական նշանակութիւնը յուսեմական նոր Հաճըն տանին: Ըրին իրենց բարոյական և նիւթական զոհողութիւնները զնահատակի:

Ուրախ ենք որ Կեղզունական Վարչութեան ջանքերով, շնորհիւ Մայր Հայրենիքի բարեխնամ կառավարութեան ու հայրենաշէն ժողովուրդին, մեր պապերու և մեր ցանկութիւնները իրականացած են նոր Հաճըն տանով, որը կոթիցն է հազար տարուայ յիշատակի, 1920 թ. հրկիզուած քաղաքին, վեց հազար սիրելի նահատակներուն և ութ ամիս մարտնչող հերոս ժողովուրդին:

Փա՞սք ու յարգանք պանծալի հայրենիքի շինարար և ստեղծագործ ժողովուրդին:

Ողջո՞յն ապագայ մեծ քաղաք նոր Հաճընին:

Ողջո՞յն աշխարհացրիւ հայրենակաբօս հաճընցի քոյր և եղբայրներուն:



ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄՈՒԵՑԱԻ
ՍԵՐ՝ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆԷ
ՊՐԱԶԻԼԻ ՍԷՋ

Գրեց՝ ՍԱՄՈՒԷԼ ՀԱՆՆԻԿԵԱՆ

Արեւմուտքի քրիստոնէայ պետութիւններու յուզայտախ քաղաքականութեան հետեւեւրով երբ 75-000 քառակուսի քերտէթր տարածութիւն ունեցող չքուղ Կիլիկիան վերջնականապէս անցաւ Բէժալականներու ձեռքը, վերապրող Հաւրեցիներս ալ գիրկընդխտան ընդունուեցանք առջնակարգ Լիբանանցի և Սուրիացի Արար ժողովուրդին կողմէ և ահամբ ամէն մէկս իր կարգին մեր կեանքի պայքարը մղել, միշտ յուսալով որ, պիտի բաշտին զոմերն յուսայ և մեր նրկրէն պիտի փայտ տայ ձրմեան:

Ի զուր, սակայն... Տարիները սահեցան և մեր ունեցած յոյր ոչ միայն իրականութիւն չգարձաւ, այլ՝ վրան եկան Սիւրիական նշանուոր ապստամբութիւնը ընդդէմ Ֆրանսացիներու ձեռք բերելու համար իրենց անկախութիւնը:

Դէպի ամերիկաներ մեկնելու տօտը, հաճընցիներս ալ վարակից - մեր ձեռքը սուտ պրանդխտութեան երկրորդ գաւառներ: Արժանութիւն և կող կամաւոր հայրենակիցներէ իմացած էինք, որ աշխարհի ամենաբռնեալ երկիրն է անիլա: Ուստի, աչգուեցանք այդ արեւմրտան զոմերն յուսայ...:



Միմոն Կուկոբատ

1925... Փրկարար նուր ճեղքեց Միջերկրականը, մտաւ Ատլանտան: Փոխարկաւ էր հսկայ ուխտանոց մեր այնպէս հոգիներուն մէջ եռեւեմպոյ մտահոգութիւններուն նման: Լեզու, չէինք զիտեր: Միակ հասարակաց յեղուն որ ունէինք, մեր Ատուածոյն աղօթին էր, որովհետքի զմեզ աղանջով նուաճանդիտա հասցնէ: Ամէն զրկանքի տողալը, մեր շարքաշ նկարագիրը աւելի զբազայցած էր:

Փիշկերը մտքին մէջ մինակը երկելով բարոյ միամիտ մանուկին նման, ի մի խմբուած, մենք ալ կ'երգէինք մեր հերոսական երգերէն ու կը պատմէինք մեր բնիկներու քաջազործութիւններէն մտանալու համար ամէն բան: Սակայն այս պատմազորութիւնն ալ երկար չուեց: Այլի տկարութեան յերկրեայ պատճառներ, զմեզ իրարմէլ բաժնեց, մէկ մասս Պրազիլի Սանթոս նուաճանդիտա իջեցնելով, միւրը՝ Ռուսկուայի մայրաքաղաք՝ Մոսկէվիտէօ նկատելով, իսկ մնացեալը՝ Արմանիկան հսկայ տարածքին իրայ սխալով:

Ի՞նչ պատահեցաւ Սանթոս իջնողներու...:

Նման՝ զմեման զտանէ կ'ըսէ առածը: Լուր ունէինք որ, մեզմէ շատ առաջ, Պրազիլի՝ Սան Բաւլոյի մէջ բանի մը հանրեցի հայրենակիցներ կան հաստատուած: Աւստի, որոշեցինք երթալ, զանոնք զբանէ կ. անոնց ցուցմունքներով զործի ձեռնարկել:

— Մինչեւ 1927 թուականը, ոչ միայն տեղաւորուած ու զործի տէր զարմանք, այլ և սկսանք մեր բըսած ինչպիսիքութիւններով, Միւրիոյ, Լիբանանի և Յունաստանի մէջ զանուոյ մեր որտաճատորները բերել տալ:

Երբ մեր թիւը պատկաւելի հանդամանք մը առաւ, թով թովի դալով, որոշեցինք մեր Ռեքամեայ Հերոսամարտին Ռեքամեայ յիշատակը պանծացնել: Ի պատիւ հայրենակիցներու, կրնամ բուկ որ առաջին Հայրենակցականը եղանք, որ տօնախմբեցինք մեր հերոսամարտը հոգեհանգիստով և ապա՝ Մաստիլ-Կանդիտով, շարժի աղ-զային մեծ բարերոր՝ Ռըզզալա ճօրճ Քահահանի, որ սիրով արտօն-զրեց իր շքեղ բնակարանը, քաջալեր հանդիսանալով միւսնոյն առնէ մեր այլ յոյժ սրբազան ձեռնարկին:

Առաջին այս յուշատունն ծնունդ առաւ Հաճոյ Հայրենակցական Միութեան կազմութեան պաշտօնաբեր: Քանի մը հայրենակիցներու հետ զործի լծուցանք ու բնդհանուր մողովի հրաւիրեցինք բոլոր հանրեցիները հայրենակից Ետուարդ Քօփհանի բնակարանը 1928ին:

Թիւով բանն հոգի էինք ներկաներս: Հաւաքոյթին նպատակը բացարկէլ յետոյ, ձեռնարկուեցաւ բուհարկութեան կազմելու համար առաջին Վարչութիւնը:

Գաղանի բուհարկութեամբ հետեւեալ հինգ հոգիները ընտրուեցան որպէս վարչական անդամ — Համբարձում Չօլաբեան, Սամուէլ Ճանիկեան, Միտաք Ներսէսեան, Պետրոս Չալեան և Քորոս Կտիկեան: Ծնորհասարութիւններէ և յաջողութեան մաղթանքներէ վերջ, մողովը ցրուեցաւ և ընտրուողները մնացին Դիւանը կազմելու և ծրագրերն մշակելու համար:

Դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով. —

Սամուէլ Ճանիկեան՝ Ատենապետ, Պետրոս Չալեան՝ Ատենագլխի, Միտաք Ներսէսեան՝ Գանձապահ, Քորոս Կտիկեան և Համբարձում Գալապանեան՝ Խօրհրդական:

Վարչութեան առաջին զործը եղաւ ընտրութեան մասին տեղեկ պահել ոչ միայն Սան Բաւլոյի Աղպային Իշխանութիւնն ու անոր միջոցաւ հայ գաղութը, այլ և սփիւռքի մէջ զանուոյ բոլոր Հաճոյ Հայրենակցական Միութեան Վարչութիւնները:

Յատկանշական և ծախահարկի նկատուեցաւ Գաղութային Վարչութեան զբուսած նամակին մէջ շեշտուած այն կէտը, որ կ'ընուէր — Չպակել զոյգեր, եթէ ամենի ի ձեռին չուեին Հաճոյ Հայրենակցական Միութեան հաստատագիրը:



Սան փառայի - Պրապի - վարչադիրնը : Մէշտեղը՝ Եղիա Պալըզեան և Սիման Կակոսեան, շրջապատուած, ձախէն աջ՝ Սամուէլ ձանիկեան, Գէորգ Լամբեան, Լամբարձում Պալպարանեան, Դեոնիկ Տէմիրեան և Գ. Մուշեան :

Այս որոշումը անուեցաւ անոր համար, որ նախ կրկնապակներ տեղի չուենան և ապա հիւանդկախ անձեր ամուսնանալով բնտանեկան դժբախտ բոյներ չկազմեն : Այլ, բնդհակառակն, կազմուին ա յետխի օճախներ, որոնք ծնունդ տալով բազմապի պատկերներու, լեցնեն պոկաւը մեր նահատակ եղբայրներուն : Աւ աղպկա այ եղաւ և մեծ յաջողութիւն ձեռք բերուեցաւ :

Երկրորդ կարեւոր որոշումը, մարդաստամարը կըաւ : Վարչութիւնը պարտականութիւն յանձնեց կրկու հայրենակիցներու, որպէսզի իսկայն ձեւորուիլ ասոյց մարդահամար մը կատարել ոչ միայն անուն մակամունով, այլ և հասցէներով : Այս ձեւորակէն ի յայտ եկաւ որ, ոչ քան, այլ յիսուն և չորս հաճըցիներ կը բնակին և որոնք հետեւեայններն են - Մխար Կակոսեան, Սամուէլ ձանիկեան, Լամբարձում Զօրբեան, Թորոս Կակոսեան, Պետրոս Զայեան, Ռաֆայէլ և Լամբարձում Պալպարանեան, Գէորգ Զայեան, Պետրոս Զարպուբեան :

Մանուկ Թէլեան, Աւսպ և Գրիգոր ձանիկեան, Եփրեմ, Պողոս և Մարկոս Փիլիկեան, Եղիշէ Կակոսեան, Լեւոն Շաշեան, Գրիգոր Մուշեան, Անանիա Գրբղըրըրեան, Յաննէս Եւրմանեան, Էտուարոս և Երուանդ Թօփեան, Մարտիրոս Կերակեան, Գալուստ Գրբբեան, Սամուէլ Կէտէլէբեան, Տիգրան Թէճէպեան, Արամ Սէջըլեան, Արշակ Թաքեան, Յակոբ Պաղպատեան, Գէորգ Լամբեան, Արբաճում Գիբէեան, Եղիա Պալըզեան, Յովհաննէս Պուրճաղեան, Կիրակոս Մէնէկիճեան, Կարապետ Զօխուբեան, Դեոնիկ Գարասէմիրճեան, Արամ Պաղպատեան, Արմենակ Գաղանճեան, Թորոս Գոյեան, Վարդան Մաքեան, Իսկէնտէր Թէլեան, Աւսպ Պօյաճեան, Կարապետ, Արմէն և Գէորգ Շըրըրաւմեան, Յակոբ ձունուբեան, Սարգիս Օրունեան, Կարապետ Զօղալեան, Սմբատ և Սարգիս Մանուկեան և Լժայեակ Պուրճաղեան :

Սիրոյ, եղբայրութեան և միութեան կապը անբախելի պահելու համար, նորակազմ վարչութիւնը ամէն ճիւղ դործ դրաւ, կազմակերպելով հաւարոյթներ, զրոստպատյաներ, հանդէսներ, Բարեկենդանեանապիշներ և այլ տեսակի ձեւորակներ, միշտ շէն և ուրախ տրամադրութեանց տակ : Գրեթէ մեր այս բոլոր հաւարոյթներուն կը մտանակցէին նաեւ այլ բարեկամներ և հայրենակցականներու անդամներ, իրենքեա մեղի հետ հրճուելու և հայկականութեամբ օժտուելու մը վայելելու :

Որքան ալ հայրենակցականի նպատակը հաճըցիական էր, ասկայն բնաւ խորը չգրուեցաւ ոչ-հաճըցիքի : Ասոր մեծապոյն փաստը, որ ջնջել ալ եղաւ, եկաւ ըլլալ մեր այն ժէսթը՝ զոր կատարեցինք 1929ին :

Ի՞նչ էր պատահած . . . :

Ի յրոյ իմացանք որ, Եւրոպայէն նաւ մը կը ժամանէ հետը բերելով տասնեակ մը հայեր և հաճըցիներ : Իսկայն փութացինք Սանթոնա նաւահանդիսար կարենալ օդատկար հանդիսանալու համար ասանց : Գժբախտաբար ասկայն, մեր թափած բոլոր ճիւղերը աղարկուին անցան : Արովհետեւ, աւարտուեցաւ թէ կեղզիները աչքի հիւանդութեան վարակուած ըլլայնուն, շեն կրնար Սանթոնա իջնել, պիտի երթան Պուլճնոս Ալքէս :

Նաւը քարտիկէն զատուեցաւ մեր և մեկնող հայրենակիցներու արցունքներու տարափին տակ : Վարչութիւնը շուտահաստեցաւ սակայն : Ան, պիտալով որ այլ հայրենակիցներ Արժանիքին ալ պիտի

չկարենան ցամաքել, ամէն միջոց ձեռք առաւ վերադառնալու պարագային դանձր Պրազիլ իջնցնելու համար:

Հազիւ նստուն վերադարձած ըլլալու լուրը մեղէ հասած, իսկոյն կրկին փութացինք Սանթոս: Տեսանք սկոռք եղած պատանական անձնատարութիւնները, միջնորդներ ձգեցինք մէջտեղ: Սակայն զուր անցան մեր ճիգերը:

Վարչութիւնը ամէն միջոց ձեռք առաւ, Հաճրնցիին յուսանալով չզիսմալը ապացուցանելու համար հայրենակից Եղիա Պարզեանը ուղարկեց զէպի Ռիօ Տը Ժանէյրօ: Աւ Պր. Պարզեան, իր վրայ զբրւած յոյսը արդարացուց ամբողջ ճիգը ի գործ դնելով և հաճրնցիական ճարտարիկութիւնը փաստելով, հոգ չէ որ նաւէն իջնող տասնեակ մը հայերէն, միայն մի քանի հաճրնցիներ եղան: Արտաութիւն էր Վարչութեան համար ոչ միայն երախտագրական խօսքեր իմանալ այդ ոչ-հաճրնցի հայրենակիցներէ, այլ և տրուած խտրութիւն թէ՛ ինչ ծախս որ կատարուած է սերով պիտի վերադարձուի հայրենակցականին:

Մեզի համար կարեւորը ոչ թէ դումարին վերադարձուիլը եղաւ, այլ այդ հայրենակիցներու մեզի հետ կապուած մնալու իրակամութիւնը: Անոնցմէ ամանք մանուսնոց, միեւնու յայտը իրենք դիրենք կէս մը հաճրնցի կը գտանին, ուրիշներ ալ արդէն խնամական կապերով հաճրնցիացան:

Հաճրնցիութիւնն նոր խանդավառութեամբ մը լեցուեցաւ, երբ 1929ին, Պուէնոս Այրէսէն ժամանեց իր բնաւորութեամբ համեստ, վարքով՝ անբասիր և սրտաբաստութեամբ՝ մեր բարբէն կարող Պր. Սիմոն Կակոսեանը հաստատուելու համար Սան Բաւլօ:

Արքի ներկայութիւնը մեր մէջ, սոսիթ տուաւ որ նոր ընտրութիւն մը ձեռնարկուի, և 1929 Ապրիլ 29ին, Վարչութիւնը անդամական բնդհանուր ժողովի հրատարակեց յայտը հայրենակիցները և իր պիկուցումը սալէ վերջ, կատարեց քուէարկութիւնը, ընտրելով հետեւեալ հայրենակիցները.— Սամուէլ Ճանիկեան՝ Աստեպետ, Կատարեալ Չոպաչեան՝ Աստեպետ, Գլխորդ Խանթեան՝ Գանձապահ, Պետրոս Չալեան, Եղիա Պարզեան, Միտաք Դերալտեան և Դեանոյ Երկաթ՝ Խորհրդականներ:

Այս նորակազմ վարչութիւնը Հազիւ շորս ամասայ գործունէութիւն կրցաւ սնննալ, քանի որ Աստեպետը գործի բերումով ստիպուած եկաւ մեկնել Արտաթուլա քաղաքը:

1929 Յունիս 21ին դումարուած անդամական Ընդհանուր փողովք, զմահատելով Աստեպետին տարած անշահախելիք աշխատանքն ու կատարած զոհողութիւնները, անցաւ նոր քուէարկութեան և ընտրեց հետեւեալները.— Սիմոն Կակոսեան՝ Աստեպետ, Դեանոյ Երկաթ՝ Աստեպետ, Գլխորդ Խանթեան՝ Գանձապահ, Յակոբ Գրբումեան, Ասպ Ճանիկեան և Կիրակոս Մէնէնիկեան՝ Խորհրդական: Պր. Պետրոս Չալեան ընտրուեցաւ սրբալս մնայուն Բարտուղար:

Մինչև Համաշխարհային երկրորդ Պատերազմին պայթիլը, Հաճրնցի հայրենակցական Միութեան վարչականները նոյն թափով ու եռանդով կը տանին իրենց աշխատանքները ըստնալով իրենց մասնակցութիւնը բերել ազգային բոլոր ձեռնարկներուն թէ՛ եկեղեցաշինութեան մեծ գործին ալ իրենց նպատատար գործակցութիւնը չզննալով:

Պատերազմը, գործի պակասութիւնը և այլ բանաւոր և յախճալ պատճառներ սոսիթ տուին որ ուրիշ հայրենակիցներ ալ լքեն Սան Բաւլօն և հաստատուին այլ տեղեր: Առաջ ամբողջ պատերազմի տևողութեան, Հայրենակցական վարչական մեքենան թէ՛ և զկարեացաւ գործելէ, սակայն կարեւոր յաջողութիւններ չի կրցաւ արձանագրել:

Զինադադարէն զբեթէ անմիջապէս վերջ նոր խանդավառութիւն մը ծայր տուաւ ու այդ, իր գաղաթնակէտին հասաւ երբ Հայրենի Առաջին Կունկ՝ հայրենակից Մահակ Պողոյէհեան Մայր Հայրենիք տուած իր այցելութենէն վերադարձին եղաւ մեզի հետ, լեցնելով բոլորս նոր յայտերով և ազգային մեծ երազներով:

Ներքին պուտաներ քաշուած հայրենակիցներ հեղհեակ սկսան դարձնալ Սան Բաւլօ վերադառնալ և իրենց ձեռք բերած նիւթական յաջողութիւններով նոր գործատեղիներ բանալ ու առն տեղ ունենալ:

Հայրենիքի մէջ նոր Հաճրն Առանի Պետական Հրամանագիրը զբխտուող ազգակիներէն մին դարձաւ, որովորի հայրենակցականը վերակազմուի աւելի թարմ վարչականներ նստեցնելով Միութեան սթոռներուն վրայ յանձինս Մարտիրոս Դերալտեանի, Պետրոս Չալեանի, Համբարձում Պալապանեանի, Սամուէլ Ճանիկեանի, Արմէն Ծոլբերտեանի, Հմայեակ Պուրճալեանի, և Սիմոն Կակոսեանի, որոնք կրցան ոչ միայն ի զլուս հանել ի նպատակ նոր Հաճրն Առանի ձեռնարկուած զոյգ հանդանակութիւնները, այլ և գերակատարել Պրազիլի հաճրնցիներու մասնաբաժինը:

Եւ ինչու՞ շղերակատարեր, քանի որ համընցիութեան տարին-
րու երազն էր անիկա և որուն համար աղբոս՝ իրեն՝ գիծահուած
կեանքը միեւնոյն ասան հասցնելով սերունդ մը, որ այսօր պարծանքն
է ոչ միայն համընցիութեան, այլ մանուսնոյ պաշտօնին:

Համընցիներս կը հպարտանաք Տաթևորներ՝ ժօլ կտիկեանոց
Սարգիս Թէլիանով, Մանուկ Պաշեանով, Ժօթ կտիկեանով, Ժիրաջ
Պատապեանով, Եսաւարտօ և Ժիրաջ կտիկեաններով, Ժիրաջ ճաշ
նիկեանով, Աւետիս Պարպանեանով, Սիմոն Պարճապետով, Արթու-
ր Փուշեանով, Վարդէմա Սուրեանով, Մարտիրոս Շաշեանով, —
այս վերջին երկօքքը, մին՝ Բաղապարկեան ժօղովի Անգամի,
իսկ միւսը Սատիկանապետի հանդամանքներով — Մեր վկայեալ հաշ-
ւակալներն են Քորոս ճանիկեանը, Նուպար Ներսիսեանը, Սիմոն
Պարպեանը, Եօփակիմ Տաղեանը, Գէորգ և Տիգրան Կէտալէքեան-
ները, ժօլէ Տաղեանը:

Հայրական Ռատիօմամի անդրանիկ հիմնադիրն ու մեր ամբողջ
գաղութի պարծանքն է ք. Օլիկա Պարճապետը որ միեւնոյն ասան
վկայեալ արտասանողն է ու մեր բոլոր տունկատարութիւններու փաշ-
լը աւելնողը իր արտասանական վարպետութեամբը:

Պետական Օփերայի երգիչ, հայրենակեց Ասատուր Քիւլահանա-
նը եթէ թողը կրցաւ ըլլալ երգի արուեստին մէջ այլ թաղին անը-
մկանքը կղաւ մեր սիրելի Արտաքի Պայպանեանը թատրոնի և պատ-
կերտփիլոսի մէջ: Այս զոյգ անունները ոչ միայն համընցիներուս, ոչ
միայն հայութեան այլ... ամբողջ Պրազիի երիտասարդութեան
պարծանքն է: Հօն, ուր անոնք ելոյթներ կ'ունենան, ներկայ է ամ-
բողջ երեսասարդութիւնը, ներկայ է հպարտութեամբ աւուջուն հին
սերունդը:

Եւ ինչու՞ չհպարտանայ անիկա, քանի որ իր պայքարին մէջ յա-
ջողած ու դիւմանցած է: Թշուածին ուղեց մէկ հարուածով բնաջնջել,
բայց մէկին տեղ հազարներ վերընծիրդեցան, ու այս անգամ միջադ-
պային արժէքներով:

Կեանքը պայտը է ըսուած է և ըսուած է մեզի, հայերուս հա-
մար: Այն որ կը պայքարի մինչև յետին կաթիլը արեան, ան կը սա-
նի յաղթանակը: Ու մենք, անցնող սերունդս, տարած ենք յաղթա-
նակը, բարոյական յաղթանակը որ շատ աւելի կ'արժէ քան նիւթա-
կանը:

Այսօր, Համոյ Հայրենակցական Միութեան վարչութիւնը ի-
րենց, երիտասարդներուն ձեռքը անցած է և իրենք է որ մեզի համըն-

ցութեան ճամբէն կ'առաջնորդեն, կարծակերպելով շատ աւելի շն, շատ աւելի գոտարթ, շատ աւելի կենտարի ու օրինակելի հանդիսու-
թիւններ, նախանձը դրուելու շփոքր այլ կարծակերպութիւնն-
րու:

Անոք մեզմէ աւելի լու գիտեն և կը յիշեն մեր Հերոսամարտի
թուականը և աւանդական ՄԱՏՕՊ-ը և իրենք է որ շերտեր ձեռքը-
նին, մինչև լոյս կը խառնեն կաթնոսն «Աւաւաւա լուսոյ»-ով և «Օդա-
նան եկաւ»-ով, «Բնոյվաբնոյ» և «Փառք ի բարձունքոյ»:

Անոց ստեղծած այս խանդավառ մթնոլորտը այն սպաւորու-
թիւնը թողուցած է բոլոր հայ այցելուներու վրայ, թէ՛ Սան Բալչօ
պէտք է մտաւորապէս հազար ասն համընցի ունենայ: Չայս վկա-
յած են մեր բոլոր այն սիրելի այցելուները, սկսեալ փաստարան Հա-
մի կիրթիւնէ մինչև Փիլիպպոսեան, Արբաճաճ Գրաճևանէ մինչև
Սասակ Պազէճեան, Արբաճաճ Էթէվզէն մինչև Յարութիւն Ծ՝ Վրդ.
Մուշեան, Շաւարշ Եպո. Գուրմենանէն մինչև Սարգիս Գարէլ-
եան, Պայտանեան Եղբայրներէն մինչև Կարապետ Պարճապետ, ու
այս բոլորէն աւելի, միշտ մեզի այցելող մեր շատ սիրելի Բարսեղ Խո-
րէճեանէն մինչև Տէր և Տիկին Կարապետ Չօղապետները, որոնք
շեն զսնացած իրենց այցելութեամբ, այլ պատճառ եղած են կարգով
իրենց զաւակներն ալ ուղարկել ըլլալ մեկըլալսեմի, ըլլալ պարզ աշ-
ցելութեան ձեւին տակ:

Ինձի կը մնայ փակել այս սուղերը մէկ մտղթանքով —
վարձէրնիկ կատար բոլոր ինն և նոր վարչական եղբայրներ և
կատարեալ յաջողութիւն ձեռք սիրելի երիտասարդ վարչականներ:
Թող ձեր կարգաթիւթը ըլլայ՝ ՄԻՇՏ Կ՛Պ՛Վ՛Յ՛:

Սան Բալչօ



ՆՈՐ ՀԱՃԸՆԸ ՅԱՐԵԱԼ

Գրեց՝ ԱՐՄԱՆԿ ՀԱՃԻ ԿԻՋԻՐԻՆԻ

Նոր Հաճըն աւանը, հեռու անցնալի մը տխուր վախճանին վառապահն է, կենդանի յիշատակորարը մեր բերբուր տահառակներուն որոնք իմացեալ մահով զոհարեցին կեանքերին, յանուն հայրենիքի և ազգային պատիւի հօսակ, ուխտաւոյր մը վերադարձ հաճընցիներու համար, և ներշնչարան մը ապագայ սերունդներուն: Քանդուեցաւ, մեր արժուերոյն ծննդավայրը, սակայն չի մեռաւ հաճընցիական ոգին, որուն արդասիքն է նոր Հաճըն աւանը՝ հիմնուած Խորհ. Հայաստանի ծոցին մէջ, հրաշակերտ երեսանէն քիչ հեռու, Արզնիի մօտ, Հրազդանի ափունքին: Այսօր երբ կը տօնենք անոր հիմնադրութեան տասնամեակը, երկիւզածութեամբ և յուզմունքով մերձենանք երբ ուխտագնացութեամբ տար կը դրնէք անոր հողին վրայ:

Հաճոյ Հայրենակցական Ընդհ. Միութեան կեդր. Վարչութիւնը յոյժ դանձառոյի դազափորը յղացած է տասնամեակը Պատմագիրքով մը նշանակաւոր, միանգամայն յաւերժացնելու յիշատակը մեր մարտիրոսներուն: Արտադին կ'ողջունեն ծրագիրը ու կը մաղթեն յաջողութիւն անխոնջ աշխատանքին: Ինձմէ խնդրուած է պատմականը ընել Միութեանս ծագումին ու ծաւալման, մասնաորարար Հիւսիսային Ամերիկայի մէջ, ուր հիմնադիրներէն խոնարհ ու հաւատացեալ անդամը եղած եմ սկիզբէն, սիրաթափ կ'ընդունուեմ կեդրոնական Վարչութեան հրահանգին, գրութիւնս պատմութենէ աւելի համառօտ տեղեկագրութիւն մըն է:

Անցնալի վերջնական մերթ կ'ամպտօնն ու կը խաւարէն ուղեզս,

կը թախեն սիրտս ու հոգիս, յիշողութեանս առջեւն կը սլան դէմքեր ու դէպքեր, մերթ մտայլ և վհատեցուցիչ էլոյթ ու երևոյթներով, որ թերահաւատութեամբ, նոյնիսկ հեղանքով՝ կը խաչանեւէին մեր զգացումս ու շինարար աշխատանքը, արգելք կը հանդիսանային, կը նրազէն ուժերը և կը դժուարացնէին գործը՝ որ սակայն վերջապէս յաղթահարուեցաւ յարատեւ ու գործնական հայրենասիրութեանս առջեւ՝ որ 4 Նոյեմբեր 1958 պատմական թուականով նոր շրջան մը բացինք նոր Հաճըն աւանի իրականութեամբը, խնջոյքի ու խրախճանքի օր է այսօր, ցնծութեամբ տօնենք անոր տասնամեակը:

Հայրենակցական միացեալ գործունէութեան մը դազափորը նորութիւն մը չէ դազութահանրցիութեան կեանքին մէջ, ան ունի աւելի քան վախճուն տարիներու պատմութիւնը, որու բնթացքին, թէեւ անկազմակերպ, իր դոյութիւնը ցուցարարած է դանազան երևոյթներով և միշտ հայրենասիրական նպատակով: Հաճընցին երբեք չէ մոռցած իր ծննդավայր Յարազանը, հայրենասիրական շարժումը սկսաւ այն օրէն երբ հաճընցի իր վերջին ողջունը ըրաւ «Քլլէլ քօչօյն», և Փիլիթական հրաժեշտ տուաւ Հաճընին, հոն թողելով սակայն իր սիրած և հողին: Այդ օրէն ի վեր ան միշտ խորհած է անոր վրայ, ապրած անոր յիշատակներով, փոստաւորուած անոր քաջագործութեամբ և ուխտած է նուիրուիլ անոր յաւերժացումին: Իսկ իրբիւ պաշտօնական ու կազմակերպեալ շարժում միութեան մը գոյութիւնը կը սկսի քսանական թուականներուն:

Հաճընցիներու զայտը Հիւսիսային Ամերիկա թափ ստացաւ 1909 Կիլիկիան աղէտէն վերջ: Հայրենիքի և հայրենակիցի կարօտը դանտք իրարու մօտ պահեց և անտք տեղաւորուեցան ընդհանրապէս նիւ Եւրոքի և Պատիճն շրջակայքը: Իրենց ծննդավայրին օգտակար հանրահասնալու տնէնով մերթ կ'ունենային ընկերակցական հումարթներ և հայրենասիրական ձեռնարկներ, նիւ Եւրոք քաղաքի մէջ բնակող տասնեակ մը նորադադթ հաճընցիներ 1913ի վերջեր կազմեցին «Հաճընոյ Կրթասիրաց Միութիւն» մը, ստաջորդութեամբ մասնաորական և երբեմնի դատարարակ Առաքել Միտաղանի, Փոնոս Մուշեանի, Արման Կիլիկեանի, և անդուական հայրենուէր Կարապետ Չէլյարեանի նպատակն էր ոյժ տալ Հաճընի կրթական կեանքին: Այս ժամանակին Հաճոյ Առաջնորդ Պետրոս Վրդ. Արարեանէն ստացուած պաշտօնական գրութիւն մը նիւթական օգնութեան կոչ կ'ընէր Հաճոյ մէջ նորակառոյց Սահակ - Մկրտչական սպիկանց վարժարանին համար: Այն կոչիչն է պատասխան նիւ Եւրոքի տասնեակ մը հաճընցիներ ան-

նման Հերոս Ազատի Քուրատրդեանին առաջնորդութեամբ՝ համադա-
դութեային հանդէսով մը բաւական կոկիկ գումար մը դոյաւուցին, ու-
բուն վրայ աւելցնելով ՊինկՆէմբըտարեան հաճոյցներու մասնակ-
ցութիւնը՝ դրկեցին Հաճին, և ստացան ստորագրեր:

Միևեռոյն տարին ՊինկՆէմբըտարեանի մէջ հաճոյցիական մտով
մը տեղի ունեցաւ ներկայութեամբ Տօքթ. Արմենակ Հայկազեանի՝
Գոնիա Գոլէնի ի նպատակ, ունեցաւ շուտակի տրդիւնք: Պատ: Ա. Տէ-
վերեան որոտայտուեցաւ: Հաճինի մէջ հիանդանոց մը իմնարկելու
մասին, սրբ սակաւն Երրեք շիրականացու, վերահաս համաշխարհա-
յին պատերազմի պատճառաւ:

1915ի տեղափոխութեան թիւր, և մեր դժբախտ հայրենակիցներուն
օգնութիւն մը հասցնելու անհրաժեշտութիւնը պատճառ եղաւ յաջորդ
հաճոյցիական մտովի մը կրկին ՊինկՆէմբըտարեանի մէջ, ուր հա-
ճոյցներու ստուար թիւ մը կը գտնուէր, կազմուեցաւ միութիւն մը
որ շարունակեց մինչև 1916, սակայն կարգ մը արկածախնայիք Երե-
տատարպետու յախտուն ընթացքը արդիւնք ընդմաստը գործունէու-
թիւն մը, քայքայուեցաւ միութիւնը, յուսախաբ՝ երկու հայրենաճը-
ւեր հայրենակիցներ, Գոնիէկ Սրղվրեան և Արշակ Զաքարեան, կա-
մաւոր մեկնեցան, թուրքի վրէժ աննելու երդումներով:

1918 զինադադարէն վերջ, տեղափոխութեան վերադառնող հաճոյ-
ցիներուն նիւթական ու բարոյական օգնութեան մը պարտականութիւ-
նը հրամայական դարձուց հաճոյցիական ընդհանուր մտով մը, վե-
րբարեան ՊինկՆէմբըտարեանի մէջ 1919ին, ընտրուեցաւ վարէջ մարմին մը,
նորադասութեամբ Ետրութիւն Փելլիպոսեանին և բարոյագրութեամբ
Երրեմ Ալէքանեանին: Եպատակին համար սկսաւ հանդանակութիւն մը
և դրկուեցաւ Մէլքոն Տօքթ. Յակոբ ՌՆՆԿԵԱՆԻ ձեռամբ գործած-
ուելու համար: Զարգացող գործունէութեան մը վերջ՝ միատեղութեան
հաճոյցիներու այլ և այլ նահանգներ զիւր ու ցանկալի պատճառ-
աւ Միութիւնը ինքնորոշուող տեղադրուեց և մասնակցութեամբ ամբու-
թեան, հայրենասիրական ոգին մտած չէր սակայն ընդհանար, մի-
անակա՛ն և տեսական կազմակերպութիւն մը ստեղծելու գործը յա-
տական դժուարացաւ, անջատ ու անհատական շարժարտու աշխա-
տանքերը որակաւ չեղան, իսկ կը պահուէր միտանալ հասարական գոր-
ծունէութիւն:

Հերոսական Հաճինի վերջնական անկումը ցնցեց զպատմները և
սարսափեցուց մեր սերունդը՝ մերկեցին յուսալքաբէլ, չէինք կրնար

հասարակ թէ մեր սիրելեաց Հաճինը մեռած է անկանցնելովն, դասն
կը իրաւանութիւնը, Հերոսական անցեալով Հաճինը պէտք չէր մեռ-
ներ, սխալեցանք, ու խոսեցինք պանծացնել մեր Հերոս նահատակնե-
րու յիշատակը, Հաճինը պէտք կը վեր-յարնէր ի փառս ցեղին: Ան-
հրաժեշտ և հրամայական էր հայրենասիրական զպատմները միա-
ձուցել և մարմին առլ գազափարէն:

Հասարգբարեան ևն ընդհանուր միութեան մը շարժումին մաս-
րամասնութիւններ, հարկողբաւմ կը գրած համատեղ իմ. պատ-
մութիւնը և կեդրոնանալ միայն Հրեթախին Ամերիկայի մէջ գործու-
նէութեանց շարջ:

Հաճոյց հայրենակցական ընդհանուր միութեանը ծագում ստա-
ցաւ Ամերիկայի Երբակո բաղաբնի մէջ, ուր ալ մը հաճոյցները նա-
խաբարքը առին, կազմելով մարմին մը իրբև. ՎՄԱՄԱՆԻՊՅ յուսաց-
նալ ընդհանուր Միութեան մը: Անգրամին հասարակը տեղի ունեցաւ
Ապրիլ 1926ին, Յովակիմ Թովմալեանի ընտրարմին մէջ, ներկայ էին
Հայկալ Էլլիզեան, Արման (Հաճի) Կիլիբեան, Մարտիրոս Մարգի-
եան Սարգիս Երիբեան, Փանոս Մուշեան, Կարապետ Չէլտիբեան,
Յովակիմ և Սեդրակ Պաշահաններ, Պարպիբեան և Փոսթալեան Վար-
դիվապեան, Վարդան Ուզունեան, անմահ հերոսուհի Հայկանուշ Պա-
շահեան, և շարք մը այլ Փ տիկին հայրենակիցներ: Եպատակին հայ-
րենասիրական էր, սրոշ ծրարիք մը շունչէնք, յայց հարկ էր նախ
ընդհանուր միութիւն մը յատա՛ք ըրբէլ և առ ալը աշխատանք:

Այս՝ մասնակցին էր որ Ս. Հաշատանէն պատուիրակութիւն մը
մասնակց Երբակո, առիթը օգտագործելով, Հայկապատ Էլլիզեան և
ստորադրեալ տեսակցութեան մը ունեցանք՝ սոյն պատուիրակութեան
հետ, զանգափոր մը ունեկարու համար, թէ ի՞նչ կերպ ու միջոցներով
կրնանք ծառայել մեր պայթեական և անպարկ հայրենակիցներուն, և
թէ մասնատանգ ի՞նչ են կարելիութիւնները վերադարձող գաղթական հա-
ճոյցիները Մայր Հայրենիքին մէջ տեղափոխելու: Խիստ համակրական
եղաւ պատուիրակութեան ընդունելու թիւնը, սրտած տեղեկութիւն-
ները խրախուսական, և թէլազօր թիւնները գործնական, մասնաճիւց
խոնջալախուսած գործի սկսաւ ընդհանուր միութիւն մը կազմելու,
պէտք էր ամենուրէր կազմակերպել հաճոյցիները Ամերիկայի մէջ իսկ
այս աշխատանքին համար սոյ՛մ, մասնակց և գրամի պահարար շատ
զգալի և վեր ալ մը հաճոյցներու կարողութեան: Մինչ կը խոր-
հէինք միջոցներու մասին, բարեբախտ գաղափարութեամբ մը բազա-

քը մասանց մեր սիրելի և ունևոր Հայրենակից Ասեփան Փիլիպոս-
եանը, մեր գաղափարը ջերմ ընդունելութիւն գտաւ յարգելի Հայրեն-
ակիցին մօտ, և ան անմիջապէս արամազրեց բաւականաչափ գու-
մար մը ընթացիկ ծախքերու համար, խոստանալով նոցուկ կենալ
մասնաճիւղին:

Խ. Հայաստանի պատուիրակութեան բարեկարգմամբիւնը,
ինչպէս նաև Փիլիպոսեանի համակրական զիրքը նպատակին շուրջ,
բաջալերեց մեզի ո՞ր առջ կայմակերպութեան աշխատանքին, համա-
ձայնեցանք թէ անհրաժեշտ է ունենալ շրջուի գործիչ մը այցելելու
համար Ամերիկահասնընկերուն, պարզելու անոնց ընդհանուր միտ-
քեան մը կարիքն ու նպատակը, կազմել մասնաճիւղեր, և պատրաս-
տել զանոնք ընդհանուր հասնընկերան խորհրդակցական ժողովի մը,
ինծի վիճակուեցաւ այլ ատաքերութիւնը: Եփեսոսի մասնաճիւղը
ստանաձեց շահանջ Հայրենակցական Միութեան Առժամեայ Կեդր.
Վարչութիւնն անունը:

Ողբերգութեան ստաջին կայանք եղաւ Քալիֆոռնիոյ շրջանը,
ուր հասնընկերը ստուարագոյն թիւը կը ներկայացնէին, և մասնա-
ւանդ հնձ էին մեր ունևոր ու սկանաւոր Հայրենակիցներէն շատերը:
Անհատական թէ խմբական խօսակցութիւններէ վերջ՝ նախնական
փոքրիկ խորհրդակցութիւն մը ունեցանք Պրն. Կոսթանթին Կերթմէն-
եանի ընկալանքին մէջ, ներկայ էին Պատ. Ս. Տէլիբեան, Պատ. Մ.
Այճեան, Կ. Կերթմէնեան, Տոքթ. Յ. Պոզոսեան, Յ. Փիլիպոսեան,
Ս. Սուրեան, Հ. Պահատուրեան: Պարզեցի իմ մէտնան: Եզան այլա-
զան արտայայտութիւններ, շատով յայտնի եղաւ դժբախտ իրակա-
նութիւնը, թէ զպացումները բաժնուած են այլ և այլ խմբաւորմ-
անքու, ոմանք կ'առաջարկէին հասնընկերը Պէյրութ — Սիրիայ տե-
ղաւորելու տեսակէտ, ոմանց համար Խ. Հայաստան անունը անա-
թետա էր, ոմանք կուսակցական և շահախնդրական նկատումներով
բացարձակապէս հակառակ էին անոնց տեղաւորման Խ. Հայաստանի
մէջ, Տոքթ. Պոզոսեան և ևս, մասամբ մըն ալ Եսթրոթիւն Փիլիպոս-
եան, կը ջատագովէին Հայաստանի մէջ տեղաւորման տեսակէտը,
զնահատելով հանդերձ կարգ մը ազդաններու ազդախերական ուղին՝
կը ջանայինք փաստել պատմական սուեւոյներով թէ հասնընկերու
համար հրամայական պարտականութիւն է կանգնել՝ նոր Հասնըն-
Խ. Հայաստանի մէջ:

Խոստանալից արդիւնք մը չունեցաւ այս հուաբոյթը: Ազաներու

մտայնութիւնն ու հոգեբանութիւնը բաջալերական չէր, հետեւաբար,
բաւ ինծի յանձնարարուած ծրարին, յաջորդ իրիկունն իսկ, Աեղ-
տեմբեր 9, 1926ին ունեցանք ընդհանուր հանձնընկերական ժողով մը,
ներկայ էին յիսունէ աւելի հայրենակիցներ, բոլորն ալ բացովա-
ուած Հայրենասիրական ուղիով, նախորդ իրիկուայ Կերթմէնեանի
ստան խորհրդակցներէն ներկայ էր միայն Պատ. Միտակ Այճեանը,
իրբիւ ունկնդիր: Այսու հանդերձ զինքը նշանակեցինք ժողովին տ-
աննապետը:

Պարզեցի ատաքերութեան նպատակը, թէ ինչպէս Եփեսոսի
հասնընկերը կազմած ենք շահանջ Հայրենակցական Միութիւնն մը,
նպատակ ունենալով օգնել մեր հայրենիքին ու հայրենակիցներուն,
թէ Եփեսոսի մարմինը ինքնուրուշեւով Առժամեայ Կեդրոնական
Վարչութիւնն, ընդատաճանք և կայմակերպել Ամերիկահասնընկե-
ր մէջ տեղ և հրաւիրել զանոնք ընդհանուր խորհրդակցական ժո-
ղովի մը: Կարծիքներու փոխանակութիւններէն նշմարելի եղաւ թէ
ստուար մեծամասնութիւնը համակիր է զազափարին և ջատագով
Հայաստանի տեսակէտին: Նոյն իրիկունը հիմքը գրուեցաւ Քալիֆոռ-
նիոյ մեծ մասնաճիւղին, որ սահմանուած էր յետագային կարևոր և
ազդեցիկ դեր ունենալու Միութեան գործունէութեան շուրջ, իրա-
խոսական էր ընդունելութիւնը և ևս բաջալերուած վերադառնալ
Եփեսոս:

Եփեսոսի Կեդրոնին հետ խորհրդակցելէ վերջ, իրենց կարգին
այցելեցի Նիւ Եորք, Պրինկէթթըն, Սիրաբուշ, Ռաշլեթթըն, Պոսթոն
և Մանչեսթըր քաղաքները: Հորատագործէն բռն՝ թէ մէջն տեղ զա-
զափարը ընդունելութիւն գտաւ, և նշմարելի էր խանդավառութիւն
մը նպատակին շուրջ: Եղան վիճարանութիւններ, թեյաղբու թիւններ,
քննադատութիւններ, բայց բոլորն ալ շինարար ուղիով: Ար որ զացի
ստաջին գործն եղաւ նախ շահակն հեղինակուար և փորձաւոր հայ-
րենակիցներու միտքը և ազահովել անոնց գործակցութիւնը:

Սիւլայած էի:

Նիւ Եորք հասնելու ստաջին իրիկունը այցելեցի մեր պատուա-
կան ու հայրենասէր Տոքթ. Յակոբ Ռէճէպեանին, ներկայ էր նաև
մտաւարական հայրենակից Պրն. Կարապետ Քէլչեանը: Լուրջ ըն-
կրնդութեան վերջ՝ Պրն. Քէլչեանը հարցուց — Վերիբեան ի՞նչ գրա-
տական ունիս թէ ասանկ գործ մը պիտի կրնանք գրուի հանել, շե՞ս
կարծեր թէ աս մեր կարողութեանն էր վեր է», և ուղեց իմնալ թէ ի՞նչ
էր Քալիֆոռնիոյ մեծատրներու զիրքը:

Իսկույն ցոյց առի Պրն. Բ. Փիլիպոսեանի ինծի առած յանձնարարանը, որուն մէջ իշխանական խոստումով մը առ զորակից կը արտայայտուէր զազատութիւն, յանձնարարական նախակը կարգապէս վերջ ըսաւ. — «Ես կը հուստամ Պրն. Սակեանի խոստումին, չիմայ յոյս մեծ կ'ըլլայ այս անդամին պիտի յանդիմանք», երկու օր վերջը իրականութիւն զարձաւ. երկու օրէքէ մասնակցի: Անցայ Պրնիկէմբեր քաղաք, հանրեցեալան հասարակի մը մէջ Արշաւ Գրանկանն էր ըր զորոք. — «Ես պարզ կոչակար մըն եմ, բայց հազար տար կը խոստանամ եթէ անկեանք նոր Հանրե մը Մայր Հայաստանի մէջ»: Ենամ զգացունսնրոյ արտայայտեցան միանկերը, հոն ալ կազմուեցաւ Պրնիկէմբերի մարջան մասնակցի մը: Արաքիւզ հասնելու ուղղակի գացի երկրի մէջակեանին, հմտա Նախարարն և ճանօթ իր ազգայնութեան գործունէութեամբ, սեռայ զոր զորք մտացած: Կը թըրթր թաղար ձեռքով ձեռքով ձեռքով հայրենակցի իմ առաքելութեանը, ինչպէս զորքով որ ինծի աշխատակցի մասնակցի մը կազմուեցաւ գործին մէջ, առանց հարց ու փորձի իսկույն ձեռք առաւ Հնամանքը, որու օր կը կանչէր, կարակ խօսքն էր ձեռք իրիկուն մեր տանը: Արգարեա նոյն իրիկունը Արաքիւզի հանրեցեանը համարմունքով և ինչ մէջակեանի առջը, կազմուեցան մասնակցի մը: Հոն ալ, զորն օրհնեցինք ճաշակելով Տիւրքի Արաքիի պատրաստած «Նախա» յոյր:

Յաջորդ կայանն էր Ռաշէսթըր: Հասարակ ունեցանք. Գեղարդ կէնէկուն լեանի տանը, յուրին ալ ներկայ էին, խօսակցութեանը քննարկեցին ոմանք տարակուսանքով և թերահաստ կ'արտայայտուէին, Փանա վարդա Ռըրթեանն էր որ Հանրեի բարբառով դռնէն. — «Տղաք ինչու կը վախէք (մի վարանք) չէնքնու թափոյ էջը պիտի կէս ճամբը չի մըն, ես թափոյ տարայ թա Սեւերքո փկի իմ, ինչէ Հայաստան պիտի կանոթ իշա», նոսրի Տէփրեանի արտայայտութեանը բրաւ. — «Ենամ մենք նէ էջ ենք նեակ թափոյ»: Արախ տրամազորութեան սակ կազմեցինք Ռաշէսթըրի մասնակցի մը:

Ուղղութեան գործուցի դէպի Պոսթոնի շրջակայք: Պոսթոնի մէջ որ Համի կէնէկանի և վաշաղն ձեռնի հետ սեռակցելի վերջ անմիջապէս մեկնեցայ Նեա Հէմփշերի Մանչեսթըր քաղաքը, որ կը ինչպէս անդրակական Տոքթ. Արմենակ Մանչեսթըր: Աղջնորդութեան վերջ էր բացարձակ սոցիալիստական նպատակ, ու չի ուզով ունեւորուցի վերջ, և քոյի յանձնարարականը կարողայէ տալ, ըսաւ. — «Հիկ ինչ թափի մը քաշէք, էջիւ հոս կ'անկեք, պատու մը ա-

տեւք, ապ կ'ա խօսինք, ես ալ քիչ մը կը խորհով», իր անտարբեր ձեռնայլն և պայտարեւ արտայայտութեան շարքով էի, թէ արդեօք պարագի եկայ: Կերակուրը յանապէս վերջ ըսաւ. — «Կիցիքեան դուն կ'ուտէիր, ես կը խորհողովէի, ահա պատասխան», հուզով արտով մեկի հետ եմ, վաղը միտակ Պոսթոն կ'երթանք, անդամակ ներկայ պիտի ըլլամ կայանալիք համարմունքին, սղջոյննք հայրենիէ բուր հայրենակցիցներու, շատ ուրախ եմ որ եկամ ես, ահա քեզի նուէր մըն ալ, իմ ձեռագործն է, ես փորագրած եմ, երբ ծխես ճիւղիկ կը հանդարտեցնէ», յանձնեց ինծի ճուրի դրանիկ մը, որ ցար կը պահէ իրբեւ յիշատակ: Յաջորդ օրը միտակարար ճամբորդեցինք Պոսթոն, շրջակայքի բոլոր հանրեցեանները ներկայ եղան Պրն. կէնէկանի հիւրասեղանին շուրջ, աւագ, շատեր սյժմ մասնակցան: Այդ օրը կազմուեցաւ Պոսթոնի մասնակցի մը:

Շիբախ վերադառնալու, արդէն իսկ չիմքը զրուած էր ու թէ մասնակցուելու, կապուած ամառայ կեցր. Վարչութեան ի Շիբախ, միեւնոյն ժամանակ կեղորոն ու իմ արդէն ու զէն ցրուած հանրեցի անհասնելու հետ բանակցութեան աշխատանքին ու կը ստանար քաջութեան պատասխաններ: Շիբախի մասնակցի արդէն իսկ ընդգրկած էր ցեղապատմանն այն անմիակի օրէնքը թէ ցեղ մը կը յուրմունայ միայն ու միայն իր ուրոյն հոյն վրայ, արդ, ալ ներշնչի: Քալիֆոռնիոյ մասնակցի մը, տղայական ու իմամխուէր Հայաստանի մէջ, ժամանակ մը թղթակցական և ալ աշխատանքներ վերջ կեղր. Վարչութեան օրոյն վրայն ու ժամանակը, և հրաւիր ըրաւ մասնակցիցներն ուրոյն պատուիրակներով մասնակցելու ընդհանուր մագլի մը, ուր պէտք էր ըլլակուր Միտիկանս նպատակը, ճշտուէր անոր ուղղութիւնը, կազմուէր պայտանական ու մայրան վարչէ մարմին մը, և միեւնոյն սակզում էր նպատակը իրաւորմելու համար, և զոյցնելի պէտք կ'ըլլէ նի թիկանը:

Առաջին Խորհրդակցական. Պատգամարական Ժողովը պատմարեցաւ նի երբքի Ռաշէսթըր քաղաքին մէջ, 1927 Մայիս 30-31-ին, Ամերիկայ հանրեցեանը կեանքին մէջ նշանակելի էին տղ կերպ օրերը, յուր մասնակցի զոր մասնակցան էին մագլի ուրոյն պատգամարներով, ներկայ էր հանրեցի հոմ բազմութիւնը, և միտարար ներշնչելի, Քալիֆոռնիոյ մասնակցի մը, ապայական ու իմամխուական տարբեր արդէնութեանը ճնշման սակ, չի կարողացաւ մասնակցի համարմունքին:

Ժողովը բացուեցաւ տաննպիտութեամբ Պրն. Կարապետ Բէ-

շինանի և անենադպրութեամբ Վահագն ձուանի: Յանուն Աստա-
նայ Կեզր. Վարչութեան Կիլիքեան ըրաւ իր տեղեկագրութիւնը
չարտումին սկիզբէն մինչև չամագումարը, և ժողովին նկատողու-
թեան յանձնեց Միութեան նպատակը: Շատ լուրջ կան դիտողու-
թիւններն ու արտայայտութիւնները թեր ու գէժ, զանազան կարծիք-
ներու փոխանակութեան վերջ՝ ընդունուեցաւ բանաձեւ մը իրբն
նպատակ չաճնոյ Հայրենակցական Ընդհ. Միութեան, հետեւեալ պա-
րտաւորութեամբ:

Անմիջական օգնութիւն կարտեալ զաղթական հանրօրհներուն,
Հետաւոր նպատակ ունենալով շինել Նոր Հաճըն բնակավայր մը
Մայր Հայաստանի մէջ:

Ընդունուեցաւ Մրազիք - Կանանդիք մը Երնտրուեցաւ Պաշ-
տօնական Կեղրճեանական Վարչութիւն մը յանձին Տոբթ. Արմենակ
Մանկրեանի, Տոբթ. Յակոբ Ռէճէպեանի, Վահագն ձուանի, Ռո-
պէլթ Տէվլիքեանի, և Կարապետ Քէշիշեանի, յաջորդ երկու տարիներ-
ըը նուիրուեցան Միութեան կատարելագործելու աշխատանքին, և
ընդհանուր հաճընցիութիւնը նպատակին շուրջ համախմբելու:

Քալիֆոռնիոյ հաճընցիութիւնը երկիւրեւորած էր: Ան տեղի
մեծ ժամանակը թերակազմ և կրակօրական զիրքի մէջ էր, զգալի
էր թէ տարբեր տեսակէտ մը մուտք գտեր էր հաճընցիներու մէջ մա-
տին միտքին մէջ: Աղաներու ազդեցութիւնը կը գործէր իր զեբը,
այն էր հաճընցիները Պէյրութի մէջ հաստատելու հարցը, ու արդէն
անհատական ձեռնարկներու սկսած էին կարգ մը մեծատրոնքի, բա-
րեգործութեան իմաստով, այս պարութիւնը կը ջլտակը հաճընցիու-
թեան ուրը, արդէն չանդիտանալով Միութեան յոռաջոցման ու
զարգացման: Քալիֆոռնիոյ ջրէանին հետ կատարեալ համաձայնու-
թեան մը պալու ջանքերը ցորդ մնացին ապարդիւն, իսկ Միութիւնը
պէտք էր շարունակէր իր գործը՝ նպատակ իրագործելու համար:

1929 Յունիս 30ին կայացաւ Երբորդ Պատգամօրական ժողով-
քը Նիւ Եորք, հայրենակից Նասիպ Պոստելանի շքեղ պատկերասրա-
սին մէջ, վերահաստատեց առաջին Պատգամօրական ժողովի ու-
րուումները, որոշեց առակ ոչոք ապ կազմակերպչական գործին, թէ
Ամերիկայի և թէ արտասահմանի մէջ, ընդունելով թէ հրամայական
է ընդհանուր հաճընցիութիւնը համախմբել զապարիւն շուրջ կեդրո-
նական մարմնի հեղինակութեան տակ: Յարմար տեսուեցաւ փոխ-
խութիւններ ընել Կեղրճեանական Վարչութեան կազմին մէջ, վերըն-

տրուեցան ու ընտրուեցան հետեւեալ անձնաորութիւնները:— Տոբթ.
Ա. Մանկրեան, Տոբթ. Բ. Ռէճէպեան, Պրնք. Կ. Քէշիշեան, Հաճի
Կէշիշեան և Առաքել Միտայեան:

Երբորդ Պատգամօրական ժողովը նմանապէս տեղի ունեցաւ
Նիւ Եորք քաղաքի մէջ, 1930 Ապրիլմիսին 30ին, Քալիֆոռնիոյ մաս-
նաճիւղը մտանակցեցաւ պատուերակ ուղարկելով Յարութեան Փիլի-
պոսեանը և Տոբթ. Հայկ Պահապարեանը: Շատ կարեւոր էր այս սո-
ցիւլը, ուր առաջին անգամ ուժգին և ուղղակիօրէն բախման ևկան
Հաճընի վերաշինութեան համար նաստալուրած երկու տարբեր և
հակառակեայ թէզերը — Պէյրութի թէ Հայաստան: Անկարելի էր Միու-
թեանս որդեգրած նպատակէն շեղուլ, որն է վերաշինել Նոր Հաճընը
Մայր Հայաստանի մէջ: Բայց և այնպէս տարիներու փորձառութե-
նէն ահա՛մայ՛ խոնարհեցանք իրականութեան մը առջև, թէ գէթ
ներկային համար Հայաստանի մէջ Նոր Հաճըն անկտաւ աւան մը չի-
նենլու գործը Միութեանս կարողութեան վեր է, ի գէժ անյովթելի
դժուարութեանց պէտք էր ճանչնալինք մեր շափը, ուստի, առանց
նպատակէ շեղելու, ժողովը յարմար դատեց ստճանապէս զոճանուլ
Հաճըն թաղամաս մը շինելով Հայաստանի նորակառոյց Նուպարաշին
քաղաքին մէջ: Ասիկա գործնական քաջ մըն էր և ոչ զիջում կամ դա-
ւաճանութիւն Միութեանս կական ու հետաւոր նպատակին, որոշեց
նիւթականի համար արշաւ մը բանալ, բանակցել Հայ Բարեգործա-
կան Ընդհ. Միութեան հետ Նուպարաշինի մէջ շինուելիք Հաճըն թա-
ղի մը ի խնդիր: Միութեան գործունէութիւնը բաւական դժուարա-
ցած էր, Կեզր. Վարչութեան անդամներուն իրարմէ հետո զանուե-
լուն պատճառաւ: Ուրշուեցաւ Կեզր. Վարչութիւնը կեդրոնացնել մէկ
քաղաքի մէջ:

Ընտրուեցաւ նոր վարչութիւն մը յանձին Տոբթ. Մանկրեանի,
Պրնք. Հայկազուն Էլիշեանի, Յովակիմ Պոյաճեանի, Մարդիս Եփ-
րեմեանի, Արման Կիլիքեանի, և կեղրճեան փոխադրուեցաւ Եփրատ:
Այս ջրէանին վարչութիւնը յետաձգելով տարբեր նկատողութիւններ,
ամբողջութեամբ նուիրուեցաւ Նուպարաշինի մէջ Հաճըն թաղամաս
մը շինելու գործին, որոշ հակացողութեան ևկանք Բարեգործականի
հետ, և նախնական վճառումը ըրինք շինուելիք թաղին ի հաշիւ, քիչ
ժամանակէն կատուցուեցան քանի մը բնակարաններ Նուպարաշինի
մէջ և դրուուեցան հաճընի Հայրենադարձներով, Տոբթ. Մանկրեան
չգեւորուած իրականութեանէն, առև մը ևս աւելցուց հոն իր անձնա-
կան միջոցներով ու մերտեց զայն ՎՄանկրեան Տունն անունով:

Քաջախրուած կատարուած յաջողութենէն՝ շորորդ Պատգամաւրական ժողովը դամարուեցաւ Երեւանի մէջ 1933 Հոկտեմբեր 15 - 15ին, որուց անդրադառնալ Միութեանս իսկական նպատակին և ընդլայնել գործունէութիւնը, կեդրոնը փոխադրեց Քալիֆորնիա, ուր հանրայնեացիք մեծամասնութիւն կազմած էին, և չուն ալժմ կար մեծցած, բերեղացած և զորացած մասնաճիւղ մը: Յունիս 4 - 5, 1936ին Քալիֆորնիոյ մէջ կայացած համադումարը սնցուց Երկու իրաւ կարեւոր որոշումներ, սառջին, վերանկատեց Ս. Հայաստանի մէջ անճշտաւ Նոր Հաճըն աւան մը ունենալու հարցը և առ ալը քուէարկեց 15-000 սուլարի պիւտճէ մը, երկրորդ՝ որուց Մարտէլի մէջ անդրադական հայրենակից Մարդիս Այլթունեանի յոյժ գնահատելի, անձնական և եւ զոհարութեամբ ըլլա ընծայած «Հաճըն» թերթը՝ ուղղորդել կեդրոնական Վարչութեան նոյնանորութեան տակ հրատարակել՝ իրբեւ Միութեանս պաշտօնական օրկանը:

(Այսու պարագ էր զգամ չիւլու թէ այս թերթի հարցը ամէն ժողով մէջ օրակարգի նիւթ եղած էր և արժանացած գնահատանքի, իսկ անոր հրատարակութեան համար մեր գրական օժանդակութիւնը շատ քիչ, աշխատանքը ծանր էր և զոհարութիւնը չափէն աւելի, մեր խնդրանքին վրայ և հաճընցիական սիրոյն, սն շարունակեց թերթը մինչև ցնոր անօրէնութիւն երբ թերթը վերջապէս փոխադրուեցաւ Հիւսիսային Ամերիկա: Այլթունեանի գերբ Միութեան հարժումին և Նոր Հաճըն աւանի իրականացման գործին մէջ շատ մեծ ու կարեւոր եղած է, արժանի երախտագիտութեան):

Թերթը Ամերիկա փոխադրուելէն վերջ շարունակեց իր գոյութիւնը Քալիֆորնիոյ մէջ նախ Տոքթ. Պոզուսեանի և ապա Գէորդ Գուշեանի խմբադրութեամբ:

Քալիֆորնիոյ մէջ կազմուեցաւ կեդր. Վարչութիւնը, բաղկացած հետևալներէ. - Տոքթ. Մանկրեան անուանուեցաւ Պատուոյ Նախագահ, իսկ Վարչութեան անդամներն էին Պրնք. Մեղրակ Պոյաճըրեան, Եղաբէթ Արթիւնեան, Սամուէլ Գուշումեան, Հրայր Սողոմայեան, և Յակոբ Ալլպարեան: Այս ժամբնը յաջորդարար փոփոխութեան ենթարկուեցաւ, մէջ ամենլով Փանոս Մուշեան, Սամուէլ Մարտիկեան, Գէորդ Գուշեան, Քալիֆորնիոյ մասնաճիւղը զորս վիզ ուժ մըն էր կեդրոնական Վարչութեան կողմին, և կ'ակնկալէինք բեղուն գործունէութիւն մը՝ սակայն տիրող անտեսական ապշեպար, քաղաքական աննպաստ պայմանները և վերահաս համաշխարհային

երկրորդ պատերազմը շափազանց զժուարացուցին Միութեանս Նոր Հաճըն աւանի ծրագրին իրադրութեամբ Ս. Հայաստանի մէջ, ստիպուած էինք սպասողական գիրք բռնել, բաւականանալով Միութեան հասոթին մէջ մտոր յատկացնել զազիական հասընցիներու կրթական գործին, յաջորդական ժողովներ դամարուեցան, ուժ արեւելեան մը և ճանրի Ընդհանուր Պատմութեան մը հրատարակելու հարցին: Առ ալը ընտարուեցաւ Պատմութեան Յանձնախումբ մը բաղկացեալ Պատ. Սամուէլ Ռէճէպեանէ, Սամուէլ Գուշումեանէ, Եղաբէթ Արթիւնեանէ, Գէորդ Գուշեանէ, Սարգիս Սողոմայեանէ և Արման Կիզիբեանէ: Պատմութիւնը երկուտրիւրու և խմբադրելու պաշտօնը յանձնրեցաւ մտարարական հեղինակ Տոքթ. Յակոբ Պոզուսեանի: Ան խոր ու մանրաքննին ուսումնասիրութեամբ յոյս ընծայեց ցեղային ու պատմական արժէք ներկայացնող նախալ հատոր «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը» խորագրով: Պատմութեան Յանձնախումբը օժանդակելի իրեն հասցելով նիւթեր ու մթերք, պատկերներ ու քարտանկեր, կտտարելով անհրաժեշտ թղթակցութիւններ և ինչ որ ամենէն կարեւորն էր, ապահովել պատմութիւնը հրատարակելու նիւթակար:

Կեդր. Վարչութեան մէջ ալ կենտական աշխատանքը եղաւ անխոնջ քանակցութիւններ կատարել արտասահմանի հաճընցիութեան հետ: Ի մասնաճորթի Պէյրութ, և մասնաւոր Հարաւային Ամերիկայի՝ ուր արդէն գոյութիւն ունէին հայրենակցական շարժումներ և նուիրեանլ գործունէութիւն: Այս աշխատանքը արդիւնաւորուեցաւ միացեալ ընդհանուր պատգամաւորական ժողովով մը, մասնակցութեամբ Պէյրութի և Հարաւային Ամերիկայի մասնաճիւղներու: Պատմական նշանակութիւն ունեցաւ այս ժողովը՝ ներկայացուած էին ըլլալ մասնաճիւղներ ամէն շրջանէն Հիւսիսային Ամերիկա, Փրանսա, Պէյրութ, և Հարաւային Ամերիկա, լիարդ ձայնեղով կամ անձամբ՝ Պուշեան Այրէսէն, իրբեւ լիարդ պատուիրակներ, անձամբ և եւ զոհարութեամբ, քաղաքս ժամանեցին երկու պատմական հայրենակիցներ՝ Սահակ Պարչէճեան և Արեւած Գրաճեան, ծանօթ իրենց հայրենասիրութեամբ և տարիներու նուիրեալ գործունէութեամբ, ի խնդիր ընոր Հաճըն աւանի Ս. Հայաստանի մէջ: Իսկական ներշնչում մըն էր անոնց ներկայութիւնը մեր մէջ, և ստիգծեց բուռն ոգեւորութիւն:

Սոյն ժողովը դամարուեցաւ Մեկտեմբեր 1946ին Քալիֆորնիոյ Լոս Անճէլոս քաղաքին մէջ, կ'ատենադատէր Արման Կիզիբեան, ատենադպրութեան կանչուեցաւ Արբա՛ւամ Գրաճեան: Պատասխանատու

և նահատարական աշխատանքի մէջ էինք, ընդհանուր Հաճընցի-
թիւնը մեծ ու բախտորոշ արդիւնք կ'ակնկալէր և յոյսով կը սպասէր
արդիւնքին:

Լուրջ, դրական, ջերմ ու զործնական եղան վիճարանութիւն-
ները, դիտողութիւնները, կարծիքներու փոխանակութիւնները, եր-
կու որ աշխատանքէ վերջ՝ յանգեցաւ շինարար եղբայրացու թեան:
Պատգամ. Ժողովը, յետ լուրջ քննութենէ, նկատի ունենալով բոլոր
պայմանները, վստիքացուց հետեւեալ որոշումները—

Ա.— Նոր Հաճըն Ասանը Ս. Հայաստանի մէջ:

Բ.— Միութեան անունը, «Հաճըն Հայրենակցական Ընդհանուր
Միութիւն»:

Գ.— Միութեան կեդրոնը փոխադրել Պուլէնու Այրէս, Արժանթին:

Դ.— Եւ նոն տարիներէ ի վեր հրատարակուող «Նոր Հաճըն» ամ-
սաթերթը Միութեան օրկանը անուանել — օրկան կեդր-
վարչութեան:

Ե.— Միութեան նպասակին իրագործման համար 1000.000 տո-
լարի արշաւ մը:

Գնհաստանքի արտոյախութիւններէ վերջ, անհուն զոհունակու-
թեամբ ողջունեցինք Հաճընցիական ընդհանուր միութիւնը: Հարիւր
հազար աղայի հանդանակութեան ընդառաջելով ունեցանք հրատար-
ակային պանթէթ մը (ճաշկերպ) կիլիկիա եկեղեցւոյ սրահին մէջ,
կ'ատենապետէր Պրն. Սահփան Փիլիպոսեան, ատենադպրութեամբ և
Հաշուապահի պաշտօնը կը կատարէին Պրն. Ա. Գրաճեան և Ա. Կիզըր-
եան: Ինստալացի և ներշնչական արտոյախութիւններ ունեցան մեր
հիւրերը, Պախչէճեան և Գրաճեան, տիրող ողկերութեան մէջ սկսաւ
հանդանակութիւնը Փիլիպոսեանի 25.000 ստլարի խոստումով, այլ
խոստումներ և կամիսիկ նուիրատուութիւններ իրար յաջողեցին, և
քիչ ժամանակի մէջ դուրսը յանգեցաւ 50.000ի: Ապա, մեր հիւրերը
Պախչէճեան և Գրաճեան, ատենադպրութեամբ Միմու Շիրաճեանի և
ընկերակցութեամբ Գարութիւն Թաթուրեանի, ողկերութեան շըր-
ջապայտու բոլոր Միացեալ Նահանգները, ուր սը Հաճընցիներ կային,
հանդանակութիւնը շարունակելու համար, օրով քննիչի արդիւնքը
բարձրացաւ աւելի քան հարիւր հազար տոլարի: Այս յաջողութիւնը,
զմբխտարար ունեցաւ տխուր վտիճան մը, երբ ժամանակ մը վերջ՝
հանդանակում ու խոստացում դուրսները վերադարձուեցան նը-
իրատուներուն, պատճառելով անհուն զժգոհութիւն և մեծ յուսու-

խարութիւն: Այս գրութեամբ չեմ ուզեր անդրադասուիլ այդ տխուր
վտիճանին մանրամասնութեանց պատճառներուն ու ծայրերուն:

Կեդրոնական վարչութեան Պուլէնու Այրէս փոխադրուելովը և
նորենտիբ վարիչ մարմնի ձևնձառա ու նուրբալ գործունէութեամբ,
նոր սուր և եռանդ ասեղծուեցաւ: Հաճընցի հասարակութեան մէջ
անոր ատենադպրութիւնը ինքնին ներշնչում մը եղաւ, զանայինք թի-
բաթիւր: «Հեռու Սուրբը զորաւոր կ'ըլլայի» հաւատով, տարիներ
վերջ հրատարակեց անմասն Արբաւամ Խորմէզը վարչութեան համար
կուտը կենալ ու դասալիք չըլլալ կատարելու պարտականութեան մեր
զանապետութեան նոր արշաւ մը Արերիկայի մէջ, 1956ին Խորմէզը Ամե-
րիկայ ժամանեց, ան իր հմայքտ անձնաւորութեամբ զրաւեց բոլոր-
քիս ալ սիրտերը, ողկերեց ու խանդավառեց, իսկոյն սկսաւ աշխա-
տանքի, շրջապայտ ամբողջ Ամերիկահաճընցիներուն, ընկերակցու-
թեամբ Տէր և Տիկին Կարապետ Կէրթէճեանի և Տիկին Երանուհի
Մուսեանի, և զոյացաւ քանի հազար տոլարի դուրս մը, որ զրկուե-
ցաւ կեդրոնի գանձին Պուլէնու Այրէս, նման աշխատանքներ տարուե-
ցան այլ զապութներու մէջ, քիչ թէ շատ զոհացուցիչ արդիւնքով,
այդ մասը իմ տեղեկագրութեան թափինէն դուրս է:

Մինչ այդ կեդրոնական վարչութիւնը անհրաժեշտ բանակցու-
թիւններ կը կատարէր և խնդրալիքներ կ'ուղարկէր Հայաստանի կա-
ռավարութեան նոր Հաճըն ասանի մը ի խնդիր, հայրենի
կառավարութեան ցուցարեքած բարեակայնամտութիւնը խիստ քաջա-
կառական էր: Կեդրոնի կարգադրութեամբ անմասն հայրենասէր Սա-
նակ Պախչէճեան Հարաւային Ամերիկայէն և ստորագրեալու Հիւսիս-
Ամերիկայէն, իբրև Միութեան պատուիրակներ պիտի էր Երևան
երթայինք պաշտօնական զիմում ներկայացնելու Հայաստանի բարե-
խնամ պետութեան:

Վերջնայն հաստա երանելի օրը, Երևան ենք Պախչէճեան և ես:
Անմասն Հայրենակից Սարգիս Ալթունեան միտնասյէն, և անդուգա-
կան, օրդեղբեալ հանրացի, ընկ. Պատրիկ Սելիան Երևանի մէջ, ար-
դէն բաւականին դիւրացուցած էին մեր կատարելիք յաշխատանքը, և
պատրաստած նպատաստը ընդունելութիւն: Մեր յարգանքը մատու-
ցանելէ հայրենի կառավարութեան, պատշաճ պաշտօնական այցելու-
թիւնները և զիմումները կատարելով վերջ՝ անձկանօք կը սպասենք
պետութեան վճիռնի:

Հիւրանոցի սենեակս ենք, Պախչէճեան և ես, կը խոսինք, կը

խորհրդածենք և յուսալով կը սպասենք, սուսուտեան ժամը ասանի ասեններն է, թաւահանը՝ նոյեմբեր 4, 1958, և ահա ձայնափութը սկսաւ գուալ, աւետելով թէ Սովետական Հայաստանի կարգափոխութեան բարեխնամ կարգադրութեամբ, Նոր Հաճրն Աւանը հիմնուած է Հրազդանի ամուսնին, Արզնիի մօտ, հազիւ 25 մգոն հետաւորութեամբ հրաշայի Երեւանէն: Աստուած իմ, երա՞զ թէ Իրակոնու-թիւն, ողջադուրուեցանք, ներս խուժեցին հայրենակիցներ ու բարեկամներ շնորհանորութեան մաղթանքներով կառավարութեան տէք-րէտը ձեռքերնին: Իսկոյն ձեռք սոխք հեռաձայնը, աւետեցինք լու-րը Քալիֆոռնիա և Պուլնոս Ալթոս, իրախճանքի օր էր, տարիներու երազը իրակոնացած: Ազա անապարեցինք դէպի նորահաստաղ Նոր Հաճրն աւանը, արտատունքով համուրեցի անոր հողն ու քարը, յե-շելով մեր բերաւոր նահատակները: Արցունք, այ՛ո՛, բայց ի՞նչ էր-ջանկութիւն տեսնել յառեալ Նոր Հաճրը ծաղկեալ Հայաստանի ծը-ցին մէջ:

Միեւնոյն երջանկութիւնը կը մաղթեմ բոլոր հայրենակիցներու, երթալ-տեսնել ու վայելել Նոր Հաճրը, յիշատակի կոթողը մեր անմահ հերոսներուն:

Փամ Սփրինկզ, 1968



ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀԱՃՐՈՅ
 ՀԱՅՐԵՆԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 ՎՐԱՅ ՄԻԱՑԵԱԼ
 ՆԱՀԱՆԳԱՑ ՄԷՋ



Գրեց՝ Գ.Գ.Գ. Պ. ԳՈՒՇԵԱՆ

Թէ հաճրեցին Հիւս. Սմերիկայի մէջ կրր սկսաւ հետաքրքրուիլ իր ծննդավայրին կրթական և անտեսական բարբարութեամբը՝ կարելի չէ որոշ կերպով բռնել: Անիկա հաւանաբար ազատութեան այս երկրին վը-րայ սաք գնող առաջին հաճրեցին էր: Յայտնի չէ սակայն թէ ո՞վ էր ան:

Անցեալ դարուն 80ական թուականներէն առաջ հաւանական չի թուիր թէ հաճրեցի մը գտնուած ըլլայ այս երկրին մէջ: 1884էն սկսած մի քանի հաճրեցիներ գլխաւան ու կրօնական բարձրագոյն ուսման ի ինդիր Սմերիկա եկան: Իսկ վաճառականութիւն ընելու համար զապ-թոյները Պոական թուականներուն եկան: Յետոյ ի՛ դարուն առաջին տասնամեակին, ու երկրորդ տասնամեակի առաջին երեք-չորս տարի-ներուն մէջ քուսական թուով հաճրեցի երիտասարդներ, բանուոր կամ մտաւորական, ամուրի կամ ամուսնացեալ, բողոքական ու անտեսա-կան ապահովութիւն փնտուելու համար Միացեալ Նահանգներ զապթե-ցին: Անոնք էին որ ճանապարհ հարթեցին հետագայ տարիներուն հա-յաջինջ տեղուհանութեան և Հաճրնի Գոյամարտէի վերադարձներու խուն գաղթին:

Սակայն կազմակերպեալ հաճրեցիական կեանք դոյութիւն հու-նէր, չկար նաեւ դեւէ մէկը որ խորհէր այդ մասին, մինչև որ 1913ին յանկարծուտ նամակ մը առաւ նիւէօքթարնակ հայրենակից կարապետ

Չէլտրեանը(*) որ կացութիւնը փոխեց: Նամակը կուզար Հաճոյ Աւարտը Պետրոս Վրդ: Սարահանէն (ապագայ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Մենթիլիան), որով նիւթական օգնութիւն կը խնդրէր ի նպաստ նորակառոյց Սահակ - Մեսրոպեան Աղջկանց Վարժարանին:

Տարիներ անաջ, իր յուշերու ձեռագիրը սրբագրելու առիթով, այս սուրբըր գրուր Չէլտրեանէն ուղղակի տեղեկացաւ թէ անիջապէս հրատարակ ինչպէս, իր բարեկամը՝ Չէլթեանի 1895ի ազատամարտիկան ձեռնարկ գեղարվեստի Արամի Թարգարեանի խորհուրդին գիտեց, և անոր աջակցութեամբ Նիւ Եորք բնակող հայրենակիցները ժողովի հրատարակեց: Հերոսին ատենագրութեան տակ և խանդավառ ձայնը ետք Վտիկի գումար մը գոյացաւ, որուն վրայ ուրիշ նուէրներ ալ աւելցաւով 600.- դրկուեցաւ Աւարտըրդին, որմէ, թէ՛ վերջ, որհնութեան գիր և ընկալադիր հասաւ իրեն:

Այդ տարին Գոմիայի ձեռնարկն Գոլճի նախագահ հայրենակից Տօթթ - Արմենակ Հայկազեան իր վարժարանին նիւթական վիճակը բարձրելու մտաք Մ. Ն. կը շրջադաշէր, և այդ օրերուն Նիւ Եորք հասած լլլալով յիշեալ ժողովին ներկայ եղաւ: Այսպիսով հաճոյցի ներուն մէջ հայրենակցական եռանդ մը ստեղծուեցաւ:

Չէլտրեանի և Արամի այս անդրանիկ ձեռնարկը կրնար սպաշտան հայրենակցական շարժման մը սկզբնաւորութիւնն ըլլալ, սակայն Ա. Համաշխարհային Պատերազմը, և անոր հետեւանցով պայթող հայկական բնաջնջումի եզերներ մալութեան դատապարտեցին յաջորդական օգնութիւններու և հայրենակցական համախորմամբերու ակնկալելի ծրար իրենքը: Այս շրջանին մէջն մէկ հաճոյցի ակնկալ սպասեցողի վախճանին կը սպասէր՝ դիտնալու համար թէ Թուրքիոյ մէջն ուէլ հայ ողջ մնացած է:

(*) Այս սողերը գրուած պատուի Չէլտրեան կը գտնուի իր 85 տարեկան խոր ծերութեան մէջ, և կը խմամուխ լաւ Աննելիսի Հայ Տարեցեկրու Տան մէջ: Նա 1903ին Ատանայի բաճար ևնտուեցաւ՝ սակալիմ պատանի՝ իր բովէն ազգային հայրենասիրական երգեր գրուուած ըլլալուն համար: Բանտէն արձակուելէն անմիջապէս վերջը, 1903ին, իր մօրը այցելութեան եկաւ Հաճոյն, և ամիս մը մնալէ վերջ Էփօրէրէի Ս. Կարապետ վանքը ուխտի գնաց: Դէպի Մ. Ն. իր 6ամբուն վրայ Փարիզի մէջ տեսակցութիւն ունեցաւ հայրենակիցներ Մուրատ և Բոյրը Հայկամուշ Պոյանեաններու հետ, և 1907ին հասաւ Ամերիկա, որ ունաց մինչև այսօր:

Ձիւնդազարէն վերջ տա մը հաճոյցի ներու համահայ պատանիներու հրաշքով վերագարծր թէև Ամերիկայի փոքրաթիւ հաճոյցի գողութիւն գնծութեան պատճառ գարծաւ, սակայն սէւէ կերպով օգնութիւն հասցնելու պատահութիւն շեղաւ տիրող թագաբան շիթի վայտնութեան պատճառաւ:

Այս պահուս մեր ձեռքին տակ ունինք չորս էջերէ բաղկացեալ երկմայ փոքրածաւայ պատուած տեսարակ մը, Կանոնագիր Հաճոյն վերսիշինութեան Միութեան վերնագրով, որուն Բ. յօդուածը կը պարզէ Միութեան նպատակը:

«Հաճոյն և մերձակոյն Հայ գիւրու նիւթական, տրմտեսական և կրթական կացութիւնը վերականգնել: Կգքատները խմամել, կրթական հաստատութիւններու և օթանդակել, որերը և սրբաւարիները հոգալը:

Ե. յօդուածէն կ'իմանանք թէ այս Միութիւնը մարմինն ատու է Նիւ Եորք հաճոյցի Պիւնիօնի բաղաբն մէջ, ուր՝ այլ թուանիւն համաժառարար աւելի շատ հաճոյցի կը գտնուէր քան յրեւե ուրիշ քաղաք: Թէև այս կանոնագիրը թուական չկրէր, սակայն թե՛ք պատճառ ունինք կարծելու թէ այս ստաջիմ պաշտօնական Հայրենակցական Միութիւնը ծնունդ առաւ 1919ին, երբ լսելի եղաւ մէծ սպանցական Միութիւնը ծնունդ առաւ 1919ին, երբ լսելի եղաւ մէծ սպանցական Միութիւնը գանցառաքիւ հաճոյցի ներու խեղճուկ ձայնը: Միգէն վերագարծող ցանցառաքիւ հաճոյցի ներու խեղճուկ ձայնը: Միութիւնը վարելու համար ընտրուած էին հետեւեալ հայրենակիցները, որոնք աշխարհաւոր պատերազմը կանխող տարիներուն եկած էին:

Յարութիւն Փիլիպոսեան՝ նախագահ, Վեր. Սամ. Բէճէպեան՝ ատենագրու, Եփրեմ Ալբանեան՝ քարտուղար, Կոստ. Կէթմէնեան՝ պատճապահ, Սարգիս Սողոմոնեան և Գէորգ Գուշեան՝ խորշրդական: (Պէտք չէ չփոխել այս վերջին պատուական հանդուցեալ հայրենակիցը այս տողերը վրայ Գէորգ Գուշեանին հետ, որ այս թուականին աքսորաւարն էր, և Ամերիկա եկաւ 1923ի Ապրիլին):

Դժբախտարար այս անդրանիկ կանոնագրին փաստաւոր երազներն ալ յօդ ցնդեցան 1920ի անան՝ հայտուեց Մուսթաֆա Գէճմալի սորիւնարութիւն փոճակներուն գարաւոր Հաճոյն աշխարհի երեւելի սպառ ջնջելովը:

1923ի Սեպտեմբերի առաջին Կիրակին՝ Փէստինայի մօտ լեռնային քրօտաւարի մը մէջ՝ քաղաքի հաճոյցի ներու մասնակցութեամբ՝ պաշտանդէս մը անդի ունեցաւ հանդուցեալ Ե. Փիլիպոսեան:

եանի նախաձեռնութեամբ, և հասոյթը յատկացուեցաւ զորի հաճընցի կարօտեալներու: Այս հայրենակցական համաժամբումին շուրջ մենք օրին դրամ ենք վաշխելիքն հրատարակուող Փրօֆ. Յ. Գ. Գրքե-դորեանի Բանվիւստ ամսագրին մէջ: Ասիկա առաջին հայրենակցա-կան շարժումն էր Բայիֆորնիոյ մէջ, որով մերջ տեղի ունեցան խորհրդակցական և կողմակերպչական ժողովներ կոս. Կէրթմէնեանի զորդավաճառանոցը, Յար. Փիլիպոսեանի տունը, կամ սրահներու մէջ:

Ամերիկայի այլև այլ քաղաքներուն մէջ հայրենակցական միութիւններ տակու ծնունդ տան, ու այսպիսով սկսաւ փոխ յարարե-րութիւններ:

Ա. ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Երբեկոյնի հայրենակցական Միութիւնը իմաստութիւնն ունեցաւ նախաձեռնարկ ըլլալու անդամնիկ պատգամաւորական ժողովին գու-մարումին, 1927 Մայիս 30 և 31ին, Նիւ Եորք նահանգի Ռահեմբըր քաղաքին մէջ: Դժբախտարար Բայիֆորնիոյ միութիւնը առաջին Պատգամաւորական ժողովէն հետո մնաց ազգեցիկ փոքրամասնու-թեան մը հակասակութեան պատճառաւ:

Կեդրոնական Վարչութիւնը կազմուեցաւ հետեւեալ անձերէ.— Տօքթ. Արմենակ Մանկրեան, Տօքթ. Յակոբ Բէճէպեան, Կար. Քէ-շիշեան, Վահագն Ճրտեան և Ռուդերթ Տէգիբեան:

Բ. ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Երկրորդ Պատգ. ժողովը Նիւ Եորք քաղաքին մէջ դամարուե-ցաւ 1929, Օգոստոս 31ին: Այս ժողովը երկու խիստ կարևոր որո-շումներ անցուց.—

Ա. Բնակչուած մեր ծննդավայրին անունը ի սպառ մտացումէ փրկելու նպատակաւ Նոր Հաճըն անունով աւանի մը Հայաստանի մէջ շինութիւնը հետադիպել և առ այդ պատճառերը դամար մը դոյացցնել:

Բ.— Միութեան ծայրը հանուր հաճընցիութեան լսելի զարմեն-լու և հայրենակիցները աւելի սերտիւ խորու կապելու մտք. Հանրի պարբերութիւնները պաշտօնապէս ճանչնալ և անոր ծախքերը հոգալ: Այս թերթը անհաստիան ձեռնարկ մըն էր, որուն խմբագիրը՝ հայր-ենակցի Սարգիս Ալիբուհեան՝ Մարտիիոյ մէջ զայն կը հրատարա-կէր անմուկ պայմաններու տակ:

Պեզը. Վարչութեան կայմը հետեւեալն էր.— Տօքթ. Արմ. Ման-

կըրեան՝ Ատենայեա, Տօքթ. Յակոբ Բէճէպեան՝ փոխ ատենայեա, Աւարէլ Միսաբեան՝ ատենադպիր, Ճորճ Կէշիճեան՝ խորհրդական:

Գ. ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Միութեան երրորդ Պատգամաւորական ժողովը նորէն Նիւ Եորք դամարուեցաւ յաջորդ տարին, 1930 Սեպտեմբեր 30ին: Տիրոջ հա-մաշխարհային անտեսական տաղնապը նախկին ծրագիրները փոփո-խութեան ենթարկեց, այնպէս որ ժողովը յարմար դասեց Նոր Հա-ճըն աւանի փոխարէն Նոր Հաճըն անունով թաղով մը դոյանալ Հ. Բ. Ը.— Միութեան ձեռքով հիմնադրուող նուպարաչէն քաղաքին մէջ: Բնակարաններու շինութեան համար բուժարկուեցաւ՝ իրբիւ նախ-նական թալլ՝ չորս հազար տոյարի Փանտ մը:

Պատգամաւորները հետաքրքրուեցան քնիկ հաճընցի Գրգեա-չարեան և Տարեան զույ կտակներով: Այս խնդրոյն շուրջ Հ. Բ. Ը.— Միութեան հետ բանակցելու համար յանձնարումը մըն ալ ընտրեց:

Կեդր. Վարչութիւնը հետեւեալ անձերէ կը բաղկանար.— Տօքթ. Արմ. Մանկրեան՝ Ատենայեա, Հայկազուն Էլիզեան՝ փոխ ատենայեա, Սարգիս Երիքեան՝ ատենադպիր, Յովակիմ Պոյա-ճեան՝ գանձապահ և Արման Կիզիբեան՝ խորհրդական:

Դ. ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Ատենայեաէն զատ միւս բոլոր վարչականները տեղացի ըլլալու-նուն համար Զորբորդ Պատգամաւորական ժողովը Երբեկոյնի մէջ դամարուեցան 1933 Հոկտեմբեր 14 - 15ին: Այս ժողովը նոր Կեդր. Վարչութիւնը ընտրեց Բայիֆորնիոյ բնակող հայրենակիցներէն ևս Կեդր. Վարչութիւնը փոխանցեց Բայիֆորնիոյ:

Այս պահուն Բայիֆորնիոյ մասնաճիւղը բուսականաչափ զօրա-ցած էր՝ հակառակ ունեւոր մի քանի հայրենակիցներու միութեանէն քաշուած ըլլալուն:

Արդար ըլլալու համար պէտք է նշել թէ Միութեանէն մեկնուա-ցող հայրենակիցներն այլ ազդասիրտար և անձնուիրտար յառաջ տարին իրենց ծրագիրները Պէյրութի մէջ Հաճըն թոպ մը շինելով: Բայիֆորնիոյ մէջ զիտանք կազմուեցաւ հետեւեալ կերպով.—

Տօքթ. Ա. Մանկրեան՝ Պատուոյ նախապահ, Սեդրակ Պոյա-ճեան՝ Ատենայեա, Հրանդ Սոզլայեան՝ փոխ ատենայեա, Նայ. Ար-թիւնեան՝ ատենադպիր, Սամուէլ Գույումճեան՝ գանձապահ, Յակոբ Ալպարեան՝ խորհրդական:

Ե. ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հինգերորդ Պատգ. Ժողովը դուժարուկցաւ 1936, Յուլիս 4-5ին, չարժանկարի մայրաքաղաքը Հայկումբի մէջ, սակնապետութեամբ Հր. Սողոմյանի և սակնադպրութեամբ Գ. Պ. Գուշեանի:

Կարեւոր որոշումները հետեւեալներն էին:—

Ա.— Կուսարաւելնի մէջ արդէն Տ-Յ բնակարաններ լծնցած և համընդհանրապէս կրօնաւարները պարտաւարձ էին. ուստի Ժողովը որոշեց՝ Բ. Պատգամարական Ժողովին մէջակց դրուած և Գ. Պատգ. Ժողովին սրուշումով մէկդի դրուած՝ Նոր Հանրի ասանի մը շինութիւնը հետապնդել, 15,000 տոլար ֆինանսով մը:

Բ.— Մարտիկոս հրատարակուող ՀԱՄԱՆ պարբերութիւններին ներկայացուցիչը — պատգամաւոր Գ. Պ. Գուշեան՝ խմբակի Ս. Ալիբունեանի թերթի պատասխանատուութենէն չանդաջման հրամարակունքը ներկայացուց, Ժողովը ցաւ ի սիրտ ընդունեց հրամարականը, և ի վարձարութիւն իր ծառայութեանց, Միութեան Պատուոյ Անդամ որոշեց:

Որոշուեցաւ որ թերթը փոխադրուի Փէնսիլան և հոս հրատարակուի Կեդր. Վարչութեան ձեռքին տակ: Թերթի պահպանման հսկելու համար ընտրուեցաւ մնայուն յանձնախումբ մը — Տիկ. Պէպարիս Պոյաձեան, Աւետիս Արմէնեան և Գուշեան:

Գ.— Նորընտիր Կեդր. Վարչութեան իրաւասութիւն տրուեցաւ (հետեւին տանելով Վեր. Տիգրան Բէճէպեանը և Սո՛ւրաւ Շիրաձեանը) քանակցելու համար հայրենակից Վեր. Սարգիս Ալպարեանի հետ որ 1914ին ի վեր Հանձնչ անունով իր բով հասաքուած կրթական գումարը Միութեան վերադարձել:

(Ուղղակի քանակցութիւն անկարելի եղաւ, և բոլոր ֆանգերը ապարդիւն մնացին: Ներկայիս այդ դժբախտ դուժարէն մաս մը Ամբերկահանց Միութնարական Ընկերութեան գանձին մէջ կը պտակի հանպուշակին աչրիւն տաստասնանութեան շնորհիւ):

Դ.— Տոբթ. Յակոբ Բէճէպեանի ֆանգերով՝ հանդուցեայ Տոբթ. Ահարան Պրզեպեանի հուաքած Հանձնչ Պատմութեան վերաբերեալ նիւթերը իր աչրիւն՝ դնուեցաւ 225 տոլար 35 սէնթի, և անոր հրատարակութիւնը վարելի ընելու համար Ժողովը յանձնախումբ մը ընտրեց հետեւի աններով:—

Նիւ Եորքէն՝ Տոբթ. Յակոբ Բէճէպեան՝ նախագահ
Փենսիլանիան՝ Վեր. Սամ. Բէճէպեան՝ Առեւնապետ

Հայկումբի Սամ. Գուշեանէն՝ Գանձապահ
Լուս Անճէլիսէն՝ Սարգիս Սողոմյան,
Նիւ Եորքէն՝ Աւ. Միտայեան,
Պ. Այրէսէն՝ Սահակ Պողոզեան,
Սէյնթ Լուիզէն՝ Ստեփան Փիլիպոսեան,
Վերջէն հարկ տեսնուեցաւ իրբի տեսնադպր ներս տանելու Եղբ. Արթիւնեան:

Ե. ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հինգերորդ Պատգ. Ժողովէն ընտրուած Կեդր. Վարչութեան անդամներն են:—

Սեղբակ Պոյաձեան՝ Առեւնապետ, Հրանդ Սողոմյան՝ փոխ առեւնապետ, Գէորդ Պ. Գուշեան՝ Գարտուղար, Սամ. Գուշեանէն՝ Գանձապահ, Սարգիս Սողոմյան՝ խորհրդական:

